ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) Թիվ-2 (1684) Փետրվար 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Ինչո՞ւ իշխանափոխություն տեղի չի ունենում (էջ 1-3)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացն ու տերությունների աշխարհաքաղաքական հակադրությունները (էջ 4-6)

3- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Վախերի կործանարար հետևանքները (էջ 7-9)

4- Բնապահպանական

Արմեն Վարդանյան
Արցախի հարուստ բնաշխարհը՝ ադրբեջանցի կացնավոր «բնապահպանների» ձեռքերում (էջ 10-12)

5- Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Ադրբեջանում արտահերթ նախագահական ընտրությունների անցկացման հնարավոր պատճառները. ընդհանուր ակնարկ (էջ 13-15)

6- Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական նպատակներն ու դիրքորոշումը Եմենի կոնֆլիկտում (էջ 16-17)

7- Պատմաքաղաքական

Անի Մելքոնյան
Հայերի եկվորության տեսությունից մինչև Հայաստանի պատմություն. պատմակեղծարարության քաղաքական հետևանքները (էջ 18-22)

8- Ժառանգություն

Կարօ Սասունի
Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը (էջ 23-27)

9- Հայ դատ

Մելինե Անումյան
Հայասե՞ր, թե՞ հայասպան. Ահմեդ Ջեմալ փաշա (էջ 28-30)

10- Ընթերցումներ

Մարգարիտա Խաչատրյան
Հիսուն տարիների վաստակի վավերագրերը (էջ 31-33)

11- Դեմքեր և դեպքեր

Դավիթ Գասպարյան
Չարենցը քաղաքական մեղադրյալ՝ նացիոնալիստ, դաշնակցական, ժողովրդի թշնամի(էջ 34-42)

12- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Բացուինք մեր մամուլի՛ ճամբով (էջ 43-44)

Ինչո՞ւ իշխանափոխություն տեղի չի ունենում

Ինչո՞ւ Հայաստանում իշխանափոխություն տեղի չի ունենում: Պարզ շփումների ընթացքում անգամ յուրաքանչյուր ոք համոզվում է, որ դրա համար գոյություն ունի հանրային մեծ պահանջ: Ակնառու է, որ իշխանության ետևից դեռ երեկ գնացողների գերակշիռ հատվածն անգամ խորապես հիասթափված է իր ողբերգական ներկայի ու առավել անհեռանկար ապագայի համար և երազում է ստեղծված կացության հաղթահարումը: Այդ դեպքում ինչո՞ւ տեղի չի ունենում հասարակական-քաղաքական այն կենսական բարեշրջումը, որի մասին երազում է երկրի բարոյական, հոգևոր ու ֆիզիկական արժեքների խորտակման շեմին կանգնած բնակչության մեծամասնությունը: Արտահերթ իշխանափոխության հնարավորությունը կապելով անմիջականորեն ընդդիմադիր դաշտում գործող ուժերի գործունեության հետ՝ շատ մարդիկ մտածում են, թե այդ հնարավորության չիրացման համար մեղավոր են հենց ազգային ուժերը: Ավելին, հանրության մի որոշ հատվածը կարծում է, թե վերջիններս գործակցում են իշխանության հետ և աշխատում են նրա համար: Ընդդիմության գործունեությունից դժգոհ մարդիկ դատում են այսպես. «Ամեն անգամ, երբ ազգային հիմնահարցերի շուրջ իրավիճակը սրվում է, ընդդիմությունը կոչով ժողովրդին դուրս է բերում հրապարակներ, մի քանի օր ցույցեր ու հանրահավաքներ է անցկացնում՝ ոչ մի նոր բան չանելով ու չասելով, մինչև հիասթափված ցուցարարների շարքերը սկսում են նոսրանալ, որից հետո ընդդիմությունը անորոշ խոստումներով մնացածին ճամփում է տուն»: Հասարակական գիտակցության մեջ տիրապետող է դառնում այն մտայնությունը, որը անցած դարասկզբին գրած համանուն աշխատության մեջ Դաշնակցության հիմնադիր Քրիստափոր Միքայելյանն անվանել է «Ամբոխային տրամաբանություն»: Ըստ Ք. Միքայելյանի՝ ամբոխի տրամաբանությունը մակերեսային է և այն եզրակացությունների է հանգում՝ միմյանցից բխեցնելով իրարահաջորդ երևույթները, այսինքն՝ եթե տեղի ունեցած մեկ երևույթին անմիջապես հաջորդում է դրան առնչվող երկրորդ իրադարձությունը, ուրեմն երկրորդը ուղղակիորեն բխում է առաջինից: Այս դատողությունը իշխանության դեմ պայքարող ուժերի նկատմամբ մարդկանց հիասթափությունը հաճախ դարձնում է ոչ պակաս, քան իշխանության նկատմամբ եղած դժգոհությունը: Բազմաթիվ անգամներ հուսալքվելով՝ շատերի ներսում խմորվում է հերթական անգամ խաբվելու մտավախությունը: Նման մարդիկ դատում են հետևյալ կերպ. «Դե, եթե սրանք էլ նույնն են, և ամեն նորի գալով իրավիճակը նույնը կամ ավելի վատը պետք է դառնա, ինչո՞ւ փոխել, թող գործողները վեր ընկնեն իրենց աթոռներին, քանզի ամենավատ հասկանալին ավելի լավ է, քան անորոշ վատի հեռանկարը»: Եթե ուշադիր լինենք իշխանության լայն ու բազմազան քարոզչադաշտի նկատմամբ, կհասկանանք, որ այս մտածողությունն ու հոգեվիճակը ամենից շատ ձեռնտու է հենց իշխանություններին, որոնք էլ զարգացնում ու խորացնում են տվյալ մտայնությունները, ձև են անում, թե միասին ընդհանուր աշխատանքներ են իրականացնում իրենց քննադատողների հետ, հարցեր են քննարկում, խորհրդարանական հարթակում, բանավիճում են և այլն: Ազգային ուժերի հանդեպ թերահավատության պատճառներից է հանրային միջավայրում տեղ գտած այն կարծիքը, թե վերջիններս շատ թույլ են, իսկ իշխանությունը՝ բազմապատիկ ուժեղ և մշտապես կարողանում է հաղթել մրցակիցներին: Ձանգվածների պարզ պատկերացմամբ իրար հետ մրցակցության մեջ են ընդդիմադրության ողջ բանակը և իշխանության թիմը՝ ի դեմս իր առաջնորդի, և այս մրցակցության մեջ մշտապես մեկ թիմը, իսկ ավելի ճիշտ՝ մեկ անձը կարողանում է հաղթել մնացած բոլորին: Երևույթների խորքը թափանցելու դեպքում կարելի է տեսնել, որ իրականում իշխանական թիմը, ավելի ճիշտ՝ նրա առաջնորդը, ըստ էության, ուզուրպացրել և իր նպատակներին ու իր պաշտպանությանն է ծառայեցնում ողջ պետական համակարգը՝ խորհրդարան, կառավարություն, կենտրոնական և տեղական իշխանություն, քարոզչամիջոցներ և հատկապես ուժային կառույցներ, որոնք 24 ժամ ծառայում են «տիրոջը»: Ուղղակի և անուղղակի ձևով այս իշխանությանը թև ու թիկունք են Հայաստանի ներքին իրավիճակի հարցում շահա-

գրգիռ գրեթե բոլոր արտաքին ուժերը՝ աչք փակելով ներքին կյանքի կառավարման միանձնյա և բռնապետական մեթոդների, քաղաքական հալածանքների, երկրի հիմնական օրենքների ոտնահարման ամենօրյա փաստերի վրա: Եվ հակառակը, նույն արտաքին ուժերը բացահայտորեն գովերգում են իշխող թիմի գործունեությունը՝ գնահատելով այն որպես ժողովրդավարական: Նույն այդ ուժերը ֆինանսական, քաղաքական-քարոզչական և այլ բնույթի մեծ աջակցություն ցույց տվեցին այս թիմին իշխանության համար պայքարի ժամանակ: Իսկ, թե որտեղից եկած հրահանգներով «թավշյա հեղափոխության» վճռորոշ օրերին տասնյակ հազարավոր մարդիկ հեղեղեցին մայրաքաղաքի և հանրապետության այլ բնակավայրերի փողոցները, իշխանությունը հրաշալի գիտի, ինչպես և հրաշալի գիտի, որ նման հրահանգ երբեք չի իջնի ինքնուրույն և ազգակենտրոն քաղաքականություն իրականացնող ուժերի համար: Ազգային ուժերից իշխանափոխություն պահանջող հանրությունը պետք է նկատի ունենա, որ արտաքին ուժերը ոչ միայն չեն աջակցելու, այլև ամեն ինչ անելու են ձախողելու համար Հայաստանի ներկա ղեկավարության փոխարինումը ազգային ուժերով: Իսկ արտաքին գործոնի դերակատարությունը հիմնական է որևէ երկրում հեղաշրջում հիշեցնող «հեղափոխությունների» պարագայում: Ազգային ուժերին բացառելը և խամաճիկների վրա հենվելը չգրված օրենք է որևէ պետության վրա ազդեցություն ունեցող կամ դրան ձգտող ուժերի համար: Նրանց համար անցանկալի է այնպիսի ուժերի իշխանության գալու հնարավորությունը, որոնց ազգանպաստ ու ինքնուրույն քաղաքականությունը կարող է հակասել իրենց ծրագրերին: Անցնող տարիներին արտաքին ուժերը բազմիցս դրսևորել են այդ վերաբերմունքը՝ իշխանությանը վստահեցնելով, որ գերադասում են «իրենց հետ աշխատել»: Եվ, ինչպես այլ պարագաներում, իր արատը վերագրելով ընդդիմությանը՝ իշխանության հակաքարոզչության հիմնական ուղղություններից մեկն այն է, թե ընդդիմության ետևում արտաքին ուժեր են կանգնած: Քաղաքական խամաճիկները նույն մեղքի մեջ մեղադրում են նրանց, ովքեր իրենց ողջ կենսագրության ընթացքում ծառայել են հայ ժողովրդին ու հայոց պետականությանը՝ անգամ այն պարագաներում, երբ հայ ժողովրդի որոշակի հատվածներ մոլորված են եղել քաղաքական սպառնալիքների, նախընտրությունների լաբիրինթոսում:

Արտաքին աջակցությունների պարագայում ընդդիմությունն այսօր նախևառաջ պետք է ձեռքի տակ ունենար շոշափելի նյութական հնարավորություններ, ինչը լայնածավալ և երկարատև պայքար կազմակերպելու գլխավոր գրավականներից մեկն է: Ներքաղաքական իրողություններին քիչ թե շատ իրազեկ մարդկանց համար ակնհայտ է, որ ազգային ուժերը չունեն նման հնարավորություններ, նրա պահանջներն ու բողոքի գործողությունները արձագանք չեն գտնում ոչ մի օտարերկրյա պետական համակարգի կողմից: Հայաստանի ավտորիտար համակարգն այս ընթացքում արտաքին քննադատության և ճնշման չի ենթարկվում, իսկ թե ինչպիսի խորհրդատուներ են կուլիսների ետևում աշխատում իշխանության համար, ինչպիսի քարոզչություն և հակաքարոզչություն են նրանք իրականացնում հայկական քարոզչադաշտում, մնում է անտեսանելի: Կարելի է, փոխարենը, քիչ փորփրել հիշողությունը և մտաբերել, թե ինչ էր տեղի ունենում օտար հասարակական կազմակերպությունների ցանցում վարժեցված երիտասարդ «հեղափոխականներին» իշխանության բարձունքներ հրելու ժամանակ:

Այդ ամենը, սակայն, ասում ենք՝ բնավ ոչ ցավալով ազգային ուժերի համար, որովհետև ազգայինը հենց նրանով է ազգային, որ ազգակենտրոն է ու ինքնուրույն ու երբեք չի հայտնվում կախումների սարդոստայնում, ինչը կարող է թե՛ նրա և թե՛ հայրենիքի համար ճակատագրական հետևանքներ ունենալ: Մի բան, ինչի ականատեսն ենք ներկայում: Ի վերջո, ինչպես քաղաքական, նույնպես և բարոյական դաշտում (որոնք սերտորեն շաղկապված են իրար) դժվարը մեկ անգամ փչանալն է, մանավանդ որ այս կորուստն անվերականգնելի է: Հայրենասեր, պայքարունակ հայ մարդու համար ամենաանըմբռնելի երևույթն այն է, թե ինչպես կարող է իր ազգակիցն ու բարեկամը ձայն տալ կամ նույնիսկ հանդուրժել այսօրվա ապազգային իշխանությանը՝ դավաճան առաջնորդով հանդերձ: Գլխավոր զենքը, որով այդ ղեկավարությունը կարողացել է ծնկի բերել և իր կամքին ենթարկել, հայության մի զգալի հատվածի վախն է:

2020 թվականի ծրագրված պարտությունից հետո ժողովրդի հավանական ըմբոստացումը խեղդող զենքը եղավ իշխանության կողմից վախի ներշնչումը ժողովրդին: Այդ վախի զգացումն է ադրբեջանական զորքի հարևանությամբ ապրող հայ մարդկանց ստիպում կրկին ձայն տալ գործող իշխանությանը: Նրանց վախերի հիմքում արմատացած է իշխանությունների մոգոնած այն քարոզչական թեզը, թե իշխանափոխության դեպքում ազգային ուժերը երկիրը կանգնեցնելու են պատերազմի առաջ: Իրականում հենց իշխանության երկչոտությունը, երկիրը առաջվա պես պաշտպանունակ դարձնելու անկարողությունն է հանդգնություն ներշնչում հակառակորդին՝ բորբոքելով ուժի ճանապարհով Հայաստանին անվերջանալի զիջումներ պարտադրելու գայթակղությունը:

Ուժային կառույցներով սեփական անձը շրջապատած, ամբողջովին արտաքին ուժերին ապավինող իշխանությունը չավարտված պատերազմի մեջ գտնվող ժողովրդի նկատմամբ կատարել է ամենաստոր բանը՝ ազգային ոգին բարձրացնելու, այդ ոգով երկրի վաղվա օրը կանխորոշելու փոխարեն՝ ներարկել է վերջինիս թշնամու անհաղթելի լինելու զգացողությունը: Վախի զգացումը երկրի ղեկավարի գլխավոր զենքն է, որին ապավինելով և պատերազմի սպառնալիքը շահարկելով՝ նա առաջիկայում պետք է փորձի լուծել Սահմանադրության փոփոխության և նույնիսկ Հայաստանի այսօրվա հանրապետությունը փաստացի տապալելու ծրագիրը: Վախի այս հիմնական զենքով է, որ իշխանությունը փորձում է սեպ խրել ազգային ուժերի և ժողովրդի միջև: Մյուս կողմից՝ իհարկե, իշխանությունը միշտ անում է այն, ինչ ցանկանում է անել և ոչ թե մտածում է մրցակիցների համար իրեն հաղթելու նպաստավոր պայմաններ ստեղծելու մասին:

Եթե ազգային ուժերի ցայսօր իրականացրած գործունեությունը չի տվել ակնկալվող արդյունքը, ուրեմն պետք է մտածել այն վերանայելու մասին: Մեզանում մարդկանց հավակնություններն ու ակնկալիքները հաճախ չեն համապատասխանում իրար, ազգային մեծ ու փոքր ուժերը իրենց գործունեության սլաքները պետք է ուղղեն ոչ թե ներս, այլ միայն դեպի դուրս, միմիայն դեպի ապազգային, կործանարար ռեժիմից երկիրն ազատագրելու նպատակը: Այս գերնպատակն է, որ պետք է միավորի բոլորին՝ վստահության և գործի կարևորության գաղափարը տարածելով դեպի դուրս, դեպի հանրության լայն զանգվածներն ու տարբեր հատվածները:

Իհարկե, ամբողջ ժողովուրդը հեղափոխության մասնակից չի կարող դառնալ: Պայքարը տարածելու ու խորացնելու համար անհրաժեշտ է հրապարակ դուրս գալ՝ ունենալով երկարատև գործունեության ճանապարհային քարտեզ՝ քայլ-քայլ գործողությունների մանրակրկիտ ծրագրով, այլապես չպետք է հերթական անգամ փորձության ենթարկել մարդկանց հավատն ու համբերությունը: Երբ չկա գործողություն, փակ են լինում բոլոր դռները, իսկ երբ պայքարը ծավալվում է, ի հայտ են գալիս առաջ գնալու ուղիներ և ճեղքեր: Պայքարի անհրաժեշտությունն ու հրատապությունը թելադրված են երկիրը կործանման տանող իշխանությունների հետևողական քայլերով:

Նիկոլ Փաշինյանն այսօր վստահ է, որ ներքին ընդդիմադրությունն իր համար վճռական խոչընդոտ չէ: Նա կատարում է արտաքին ուժերի, առաջին հերթին՝ թուրք-ադրբեջանցի թշնամիների բոլոր պահանջները, միայն թե մնա իշխանության ղեկին. իշխանություն կորցնելը նրա համար վերջ է նշանակում: Նիկոլ Փաշինյանը իշխանության է հասել՝ պայքարելով ավելի քան 10 տարի: Մենք 10 տարի ժամանակ չունենք, ինչպես և ժամանակ չունենք սպասելու: Պայքարն այլընտրանք չունի, չպայքարելը՝ արդարացում: ■

Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացն ու տերությունների աշխարհաքաղաքական հակադրությունները

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Պաշտոնական Երևանի և Բաքվի, ինչպես նաև ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Եվրոպայի ղեկավար գործիչների բազում հայտարարություններն այն մասին, որ մինչև 2023 թ. ավարտը Հայաստանն ու Ադրբեջանը կարող են խաղաղության պայմանագիր ստորագրել, այդպես էլ իրականություն չդարձան: Ավելին, անցյալ տարվա երկրորդ կեսի զարգացումները վկայեցին բազմաթիվ վերլուծաբանների և քաղաքական գործիչների այն համոզմունքը, որ պատմական այս փուլում Ալիևի վարչակազմը Հայաստանի հետ հարաբերություններ կարգավորելու մտադրություն չունի և դեռևս առաջնորդվում է հայկական կողմից հնարավորինս շատ զիջումներ կորզելու, իր կամքը պարտադրելու քաղաքականությամբ:

Այն, որ Ալիևը չի շտապում, պարզ է և հասկանալի. Ադրբեջանի ղեկավարը կարողացել է լիարժեք վերահսկողության տակ վերցնել Արցախը և արտաքսել այնտեղի հայ բնակչությանը: Նա լուծված է համարում իր առջև դրված ոչ միայն նվազագույն, այլև այն խնդիրները, որոնց մասին երազել անգամ չէր կարող: Իսկ ամենակարևոր հանգամանքն այն է, որ Ալիևը ձեռքբերածը կորցնելու որևէ վտանգ չի տեսնում, ինչը վստահություն է ներշնչում նրան առ այն, որ ժամանակն աշխատում է Ադրբեջանի օգտին:

Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր ստորագրելու հարցում չի շտապում նաև Հայաստանում վարչապետի պաշտոնը զբաղեցնող և անընդհատ խաղաղության դարաշրջանի ու խաղաղության խաչմերուկի մասին խոսող Նիկոլ Փաշինյանը: Վերջինս չշտապելու իր պատճառներն ունի, որոնցից ամենակարևորը թերևս այն մտավախությունն է, որ «խաղաղության պայմանագիր» կոչվող թղթի տակ ստորագրություն դնելուց հետո աշխարհաքաղաքական կենտրոնները կարող են իր առաքելությունը ավարտված համարել և այլևս չաջակցել Հայաստանում իշխանություն պահելուն: Բացի դրանից՝ Փաշինյանը լավ գիտի, որ ստորագրվելիք փաստաթղթում Հայաստանի համար որևէ դրական կետ չի լինելու, ինչը կարող է լուրջ հարցեր առաջացնել նաև երկրի ներսում:

Հետևաբար երկու երկրների ղեկավարները՝ Ալիևն ու Փաշինյանը, լուռ համաձայնությամբ ձգձգում են բանակցային գործընթացը, մեկը՝ հույսով, որ ժամանակը նոր հնարավորություններ կբերի իր երկրին և անձամբ իրեն, մյուսը՝ տհաճ զարգացումները հետաձգելու պարզ մտադրությամբ: Այս հարցում Փաշինյանն ու Ալիևը դաշնակիցներ են և միասին

փորձում են ստեղծված իրողություններն այնպես ներկայացնել, որ թե՛ միջազգային հանրությունը և թե՛ Հայաստանի ու Ադրբեջանի հասարակությունները հասկանալի և ընկալելի համարեն դրանք և հանդես չգան իրենց ծրագրերը խաթարող նախաձեռնություններով:

Որպես բոլորին մոլորեցնելու գործիք ընտրված է, այսպես կոչված, «նամակագրական բանակցությունների» ձևաչափը, որի շրջանակներում փետրվարի սկզբին ադրբեջանական կողմը «խաղաղության պայմանագրի» վերաբերյալ իր առաջարկությունների ու շտկումների 8-րդ փաթեթն է ուղարկել Հայաստան: Ինչպես հայտնում են այդ փաթեթի բովանդակությանը ծանոթացած խորհրդարանական ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի պատգամավորները, նշված փաստաթղթում Հայաստանի շահը որևէ կերպ արտացոլված չէ: Եվ սա ամենևին էլ զարմանալի չէ:

Սակայն վերոնշյալը ստեղծված քաղաքական իրավիճակի միայն մի մասն է արտահայտում: Իրականում արցախյան հիմնախնդիրը, ինչպես նաև հայ-ադրբեջանական հարաբերությունները շատ ավելի ընդգրկուն և բովանդակալից են, քան Փաշինյանի և Ալիևի նեղ անձնական շահերը: Սա աշխարհաքաղաքական խնդիր է, որի շրջանակում կենսական նշականության նպատակներ են հետապնդում Ռուսաստանը, Թուրքիան, Իրանը, ԱՄՆ-ն և այլ կենտրոններ: Ահա այստեղ է, որ ի հայտ են գալիս հայ-ադրբեջանական հակամարտության բազում այլ բաղադրիչներ, որոնք մեծապես ազդում են ընթացիկ զարգացումների վրա:

Խոսքը նախևառաջ վերաբերում է այն նպատակներին, որոնք տարածաշրջանում ունեն աշխարհաքաղաքական կենտրոնները: Դրանք բավական հայտնի են և շատ բացահայտ են հետապնդվում Ռուսաստանի, Արևմուտքի, Թուրքիայի ու այլ երկրների կողմից: Բնականաբար, հենց այդ ծրագրերով ու դրանց ետևում կանգնած տերությունների գործունեության արդյունավետությամբ են պայմանավորված բոլոր այն զարգացումները, որոնք այսօր տեղի են ունենում Հարավային Կովկասում և որոնք պետք է կանխորոշեն մեր տարածաշրջանի ապագան: Ալիևն ու Փաշինյանը պարզապես փորձում են իրենց տեղն ամրապնդել հովանավոր տերությունների ծրագրերում և այդ կերպ իշխանություն պահել Հայաստանում և Ադրբեջանում: Ակնհայտ է, որ այս զարգացումներում երկուսի հովանավորները աշխարհաքաղաքական տարբեր ուժեր են: Եթե Փաշինյանը մտել է Արևմուտքի հովանոցի տակ, ապա Ալիևը կատարում է Թուրքիայի և ինչ-որ չափով նաև Ռուսաստանի պատվերները: Սրանով է պայմանավորված թե՛ խաղաղության պայմանագրի կնքման ձգձգումը և թե՛ Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում կոնֆլիկտայնության բարձր մակարդակի պահպանումը:

Ռուսաստանն ու Արևմուտքը Հարավային Կովկասում խիստ հակադիր նպատակներ են հետապնդում: Աշխարհաքաղաքական երկու այս բևեռների համար տարածաշրջանը կենսական կարևորություն ունի: Պատճառները շատ են: Բայց հիմնականը ապագայում հաստատվելիք նոր աշխարհակարգն է, որի ձևավորման գործընթացը ներկայում ամենաակտիվ փուլում է: Վերջին տասնամյակների զարգացումներում սա նոր իրողություն է Հարավային Կովկասի համար. Ռուսաստանն ու Արևմուտքը այս տարածաշրջանում երկար ժամանակ խուսափել են մրցակցությունից: Նույնիսկ հակառակը՝ մի շարք հարցերում, օրինակ՝ հենց արցախյան հակամարտության խնդրում, նրանք համագործակցել և փոխլրացրել են միմյանց: Բացառություն էին միայն 2008 թ. վրաց-օսական, ապա դրան հետևած ռուս-վրացական հակամարտությունները, որոնք, սակայն, երկարաժամկետ առումով Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական մրցակցության պատճառ չդարձան: Եվ միայն հիմա է, որ Ռուսաստանն ու Արևմուտքը առճակատվել են մեր տարածաշրջանում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Արևմուտքն ամեն ինչ անում է, որպեսզի Ռուսաստանը դուրս մղվի Հարավային Կովկասից: Որպես այդ խնդրի լուծման ուղի նրանք տեսնում են հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հակամարտությունների կարգավորման միջոցով տարածաշրջանում ռուսական ռազմական ներկայությունն անիմաստ ու ժամանակավրեպ դարձնելը: Խնդրի լուծման գործիքը ՀՀ իշխանություններն են, որոնք տարիներ շարունակ նույն Արևմուտքի կողմից պատրաստվել են այդ դերի համար: Ընդ որում, ասելով հայ-ադրբեջանական և հայ-թուրքական

հակամարտությունների լուծում՝ Արևմուտքը որևէ տարբերություն չի տեսնում, թե այսպես կոչված, լուծման արդյունքում հակամարտող կողմերից ով ինչ կստանա. կլինի Արցախն անկախ, թե՞ Ադրբեջանի կազմում, կճանաչվի Հայոց ցեղասպանությունը, թե՞ ոչ... Ու քանի որ ՀՀ իշխանությունները մեծ պատրաստակամությամբ են զիջումների գնում, իսկ Ադրբեջանն էլ արևմտյան ճամբարում Թուրքիայի պես հզոր հովանավոր ունի, ուստի բոլոր խնդիրները Հարավային Կովկասում Արևմուտքը լուծում է հենց Հայաստանի հաշվին:

Ռուսաստանն իր հերթին պայքարում է ոչ միայն մեր, այլև հետխորհրդային ողջ տարածաշրջանում իր ազդեցությունը վերականգնելու և մեծացնելու համար: Այսպես՝ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Արցախում խաղաղապահ զորախմբի տեղակայումը, ինչպես նաև Ռուսաստանի միջնորդական դերը պաշտոնական Մոսկվան որպես մեծ ձեռքբերում էր ներկայացնում ոչ միայն իր բնակչությանը, այլև միջազգային ողջ հանրությանը:

Սակայն, պայքարելով ողջ հետխորհրդային տարածաշրջանի համար, Ռուսաստանի իշխանությունները որոշակի առաջնահերթություններ են սահմանել աշխարհաքաղաքական մրցակցության ճակատներում՝ առաջնայնությունը տալով ոչ թե Հարավային Կովկասին, այլ Ուկրաինային: Այդ է պատճառը, որ Ուկրաինայում հաջողություն ունենալու նպատակով ռուսական կողմը պատրաստ է ժամանակավոր զիջումներ անել այլ, մասնավորապես՝ մեր տարածաշրջանում: Այստեղ Կրեմլի խնդիրը դեռևս նվազագույնն է՝ պահպանել ռազմական ներկայությունն ու ամեն ինչ անել, որպեսզի Հարավային Կովկասից ուկրաինական ճակատի համար նոր խնդիրներ չառաջանան: Ասել է թե՝ Հարավային Կովկասում համագործակցել Թուրքիայի և Ադրբեջանի հետ և այդ կերպ չեզոքացնել Սև Ծովի ավազանում ու Ուկրաինայում Թուրքիայի հնարավոր հակառուսական դերակատարությունը: Այս ամենը Ռուսաստանն անում է կրկին Հայաստանի հաշվին՝ ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ իշխանություններն Արևմուտքի դրածոներն են ու սպասարկում են ոչ թե Հայաստանի, այլ Վաշինգտոնի և Բրյուսելի շահերը:

Իրականում ռուսական էլիտաները հասկանում են, որ Հարավային Կովկասում թուրք-ադրբեջանական գործոնի ուժեղացումն ապագայում մեծ խնդիր է դառնալու Ռուսաստանի համար: Այդ իսկ պատճառով Մոսկվան չի հրաժարվում հետագայում Արցախի հայ բնակչության վերադարձի և ընդհանրապես տարածաշրջանում Հայաստանի ազդեցության վերականգնման ծրագրերից: Դրա մասին է վկայում, օրինակ, այն փաստը, որ ռուս խաղաղապահները շարունակում են Արցախում մնալ և պաշտպանել այնտեղի մեր հայրենակիցների գոյքը: Բայց, ինչպես արդեն նշեցինք, Ռուսաստանի համար դեռևս ուկրաինական ճակատն է առաջնահերթություն, և դա, ինչպես նաև ՀՀ իշխանությունների արևմտամետ ու թուրքամետ լինելը, շարունակում են դժբախտություններ բերել մեր երկրին ու ժողովրդին:

Հարավային Կովկասում Ռուսաստան-Արևմուտք առճակատման հաջորդ հարթությունը տարածաշրջանի կոմունիկացիոն հնարավորություններն ու ենթակառուցվածքներն են: Եվ սա հենց այն ոլորտն է, որտեղ Թուրքիան (նաև Ադրբեջանը՝ որպես Թուրքիայի կցորդ) առաջարկ ունի թե՛ Ռուսաստանին և թե՛ Արևմուտքին: Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը նույնպես կախված է կոմունիկացիաների հարցում աշխարհաքաղաքական մրցակցության ելքից: Հայաստանի համար դա հերթական խնդիրն է, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, Թուրքիան մեծ դերակատարում ունի այս ոլորտում և կարողանում է իրավիճակ փոխող քայլեր կատարել:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է հստակ ասել, որ հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը և հատկապես խաղաղության պայմանագրի ստորագրումը պայմանավորված են լինելու ոչ թե Ալիևի ու Փաշինյանի ջանքերով, այլ աշխարհաքաղաքական մրցակցության արդյունքում ձևավորված ուժերի ու ազդեցությունների նոր բալանսով: Մինչ այդ մրցակցության ավարտը Հայաստանն ու Ադրբեջանը շարունակելու են գործիք լինել ավելի մեծ տերությունների ձեռքում: Պրոքսի պատերազմների այս ժամանակաշրջանում, ցավոք, դա է նորմալը: Սակայն նաև դատավճիռ չէ: Նույն Ալիևի և Փաշինյանի օրինակները ցույց են տալիս, որ կախված այն հանգամանքից, թե ինչպիսի քաղաքականություն է վարում փոքր երկրի ղեկավարը, ինչպես է կողմնորոշվում արտաքին ուժերի շահերի բախման տիրույթում, այդ երկիրը կարող է թե՛ մեծ հաջողություններ և թե՛ մեծ կորուստներ ունենալ: Եթե Հայաստանում լիներ ազգային և հեռատես իշխանություն, հնարավոր էր՝ մենք կարողանայինք խուսափել վերջին տարիների ողբերգություններից: Լինի Հայաստանում ազգային և հեռատես իշխանություն, հնարավոր է՝ մենք դեռևս կարողանանք վերականգնվել և կրկին ազատագրել մեր Արցախը:

Վախերի կործանարար հետևանքները

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

44-օրյա պատերազմից ընդամենը մեկ տարի անց, 2021 թ. տեղի ունեցած ԱԺ ընտրությունների արդյունքներն, իրոք, ցնցող էին: Ավա՛ղ, մեր վերլուծաբանները առանձնապես կանգ չառան փաստի վրա՝ խորությամբ հասկանալու կատարվածի էությունը: Հարևանցիորեն ասվեց, որ ժողովրդի մի զգալի մասը շարունակում է մնալ խաբված, սին հույսերի գերության մեջ, դարձել է անտարբեր և այլն: Բայց չէ՞ որ կային ուրիշ ոչ պակաս կարևոր գործոններ, որոնք ծանր հետք թողեցին հետագա զարգացումների վրա: Հանրության մի մեծ հատված հիմարաբար որոշեց կրկին քարշ գալ մի մարդու հետևից, որը երկրի պարտության ու աղետների «ճարտարապետն» էր: Նախ՝ մտաբերենք մեր մեծերից մեկի՝ Ռաֆֆու, 1861 թ. ասված դառը խոսքերը. «Հայը կրակի մեջ այրվում է և մի՛ ձայն, մի՛ բողոք չի բարձրացնում: Դա հայի մեռելության նշանն է, որ նա պատվի, ինքնասիրության ու ազատության զգացում չունի: Ասում ենք՝ մեռելության և ո՛չ ստրկության, որովհետև դրանով չափազանց պատված կլինենք նրան, որովհետև ստրուկը իր սրտում թաքցրած ունի մի խուլ ատելություն դեպի բռնակալը և հարմար միջոցին դուրս է ժայթքում: Բայց հայն այդ էլ չունի: Հայն ունի այն երազական ցնորքը, որը մենք հույս կոչեցինք, որով ապրում և որով մխիթարվում են ծույլ ու դանդաղկոտ ժողովուրդները, թե մի օր գերբնական կերպով ազատված կլինեն...»: Ակամայից մտաբերեցինք, թեև պատկերավոր, բայց մեզ համար տհաճ մի խոսք. «Երբ հրեան է ընկնում կեղտի մեջ, մտածում է, թե ինչպես դուրս գալ այդտեղից, երբ հայն է ընկնում, մտածում է՝ ինչպես հարմարվի»: Այստեղ կան մի քանի հիմնարար հարցեր, որոնք հետապնդելու դեպքում մենք մի քիչ ավելի հեռուն կգնանք երևույթի ըմբռնման առումով: Խոսքը պատասխանատվության մասին է: Ի դեպ, մեծ միամտություն կլինի մտածել, թե մեր հասարակությունը Նիկոլին և նրա նման պատահական ու անդեմ մարդկանց առանձնապես լուրջ է ընդունում կամ վախենում է նրանցից: Այս միանձնյա հարցեր լուծող, գաճաճ բռնակալը բոլորովին էլ վախ չի ստեղծում, ուղղակի հասարակությունը հակված չէ պատասխանատվություն ստանձնելու, իսկ վախերը պայմանավորված են զուտ Նիկոլի տերերի հնարավոր ասպատակությունների սպառնալիքի հետ: Այլապես հասարակական ընդվզումը և իշխանափոխությունը կդառնային անխուսափելի: Տեղին է հիշել արաբ մեծ գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջերբան Խալիլ Ջերբանի «Մարգարեն» գլուխգործոցից «Խրտվիլակը» գողտրիկ նովելը: «Ես

հարցրի այգում կանգնած խրտվիլակին»,- ասում է մարգարեն,- լսի՛ր, ես հասկանում եմ անուղեղ թռչուններին, որոնք չգիտեն, որ քո փալասների տակ ոչինչ չկա, ես հասկանում եմ հիմար գազաններին, որոնք չեն հասկանում, որ դու ընդամենը խրտվիլակ ես, բայց ես չեմ հասկանում քեզ, որ համաձայն ես քեզնից ոչինչ չներկայացնելով՝ այստեղ կանգնել»: Եվ խրտվիլակը պատասխանեց. «Դու ճիշտ ես, այո՛, իմ փալասների տակ ոչինչ չկա, բայց դա ի՞նչ նշանակություն ունի, կարևորը այն է, որ ինձնից վախենում են...»: Սովորաբար մարդը պատասխանատվությունը այլոց վրա գցելու ընդգծված հակում ունի: Միշտ կա մեկը, որն իբրև թե ստիպում է մեզ տառապել: Ընտանիքներում կինն է կամ տղամարդը, որ ստիպում է իր կողակցին դառնալ դժբախտ, այնուհետև երեխաներն ու ծնողներն են տառապանքի պատճառը, կամ էլ՝ պետության ֆինանսական համակարգը, լիբերալիզմը, կոմունիզմը, քաղաքական գաղափարախոսությունը, սոցիալական կառուցվածքը, նույնիսկ Աստված... Այս ցանկը կարելի է անվերջ շարունակել: Այսպիսով՝ կան միլիոնավոր ձևեր պատասխանատվությունից խուսափելու համար: Եթե նմանօրինակ պատճառները մեզ ստիպում են տառապել, մենք մտածում ենք, որ այլևս անկարող ենք որևէ բան փոխել: Ինչպե՞ս է հնարավոր երջանիկ լինել աղքատ հասարակության մեջ, որտեղ իշխում են կապիտալիստներն ու բյուրոկրատները:

Երկրում, որի ղեկավարն է այս ու այն նախագահը, ատելի վարչապետը և այլն: Արդարացումները ընդամենը մի նպատակ են հետապնդում՝ խուսափել պատասխանատվությունից: Ամեն բան արմատապես փոխվում է, երբ մենք մեզ ասում ենք. «Ես եմ իմ կյանքի առաջին պատասխանատուն, ամեն բան բացարձակապես իմ պատասխանատվության տիրույթում է, ամեն ինչի մեղավորը մեկն է, և այդ մեկը ինքս եմ»: Սա, իհարկե, մտավոր, հոգևոր և քաղաքական լուրջ հասունություն է ենթադրում, որին դեռ պիտի հասնել, որը նաև խիզախություն է պահանջում, քանի որ գործ ունենք ստրկությունից ազատագրվելու իրողության հետ: Մեր հայրենակից խոշոր մտածող և միստիկ Գեորգի Գյուրջիևի մեկնաբաններից Պյոտոր Ուսպենսկին նրա խոհերը մեկնելիս ասել է. «Առաջին հերթին մարդու ստրկությունից չազատագրվելու պատճառը նրա տգիտությունն է, անտեղյակությունը իր իսկ էությունից: Առանց ճանաչելու սեփական էությունը, մեքենայի աշխատանքը և նրա գործառույթները՝ մարդն անկարող է կառավարել իրեն և լինել ազատ: Իսկ առանց դրա՝ նա մեկընդմիշտ կմնա ստրուկ և խաղալիք իր վրա ներգործող ուժերի ձեռքին»: Այսօր արդեն մեր հանրությունը այդ ստրկացված բազմությունն է, որին նույնիսկ հասարակություն անվանելն է դարձել դժվար: Ամերիկյան ականավոր գրողներից մեկի՝ Սթիվեն Քինգի միտքը լավագույնս արտացոլում է մեր հանրության վիճակը: Նա գրում է. «Եթե մարդկանց վախեցնես բավական ուժեղ և բավական երկար, ապա նրանք կգնան ցանկացած մեկի հետևից, որն իրենց փրկություն է խոստանում»: Այստեղ փոքր-ինչ կանգ առնենք ու հետ գնանք: Դարեր շարունակ մարդկությունը ապրել ու հիմա էլ ապրում է վախերի մեջ: Վախը մարդ էակի ամենահիմնարար զգացումներից մեկն է: Այն մի դեպքում ունենում է դրական, ինքնապաշտպանական նշանակություն, մեկ ուրիշ դեպքում՝ դառնում մարդուն քայքայող ու ստրկացնող գործոն: Մարդկանց շարունակաբար վախեցրել են քաղաքական գործիչներն ու բռնակալները՝ սպառնալով պատերազմներով, սովի և քաոսի հեռանկարով, դրամի արժեզրկմամբ, տնտեսական աղետաբեր ճգնաժամով և այլն: Նրանց վախեցրել են նաև կրոնները՝ ասելով, որ եթե չհետևեն իրենց ուսմունքներին և պատվիրաններին, կհայտնվեն դժոխքում: Մարդկանց վախեցնելուն դեմ չեն եղել նույնիսկ բարոյագետները՝ հիշեցնելով, թե ինչի կհանգեցնեն բարոյական նորմերից շեղումները և այսպես շարունակ: Օրինակ՝ Ադոլֆ Հիտլերը սիրում էր կրկնել. «Պետք է ամբոխին մշտապես պահել պատերազմի սպառնալիքների տակ՝ անկախ նրանից, այն իրական է, թե՝ ոչ: Այդ կերպ զանգվածը դառնում է լիովին կառավարելի»: Ականավոր պետական և դաշնակցական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանն իր «Յեղափոխականի մը հուշերը» արժեքավոր հատորյակներից մեկում պատմում է Վան-Վասպուրականի գյուղերից մեկի հայ գյուղացիության վիճակի մասին: Նա մոտավորապես այսպես է նկարագրում իրավիճակը. «Երբ ֆիդայիների մեր զինական խումբը մտավ գյուղ, գյուղացիները վախենում էին մեզնից: Վախը թանձր ամպի պես բույն էր դրել նրանց աչքերում և հոգիներում: Առաջին անգամ նրանք տեսնում էին լավ հանդերձներով, մաքուր զենքերով հայ զինվորների, այո՛, հայոց զորքերը, որոնք չէին կողոպտում, հավ չէին գողանում...»: Հետո Ռուբենը երկար նկարագրում է գյուղի խեղճությունը և մարդկանց սահման չունեցող վախերը: «Թվում է՝ այլևս ոչինչ չի կարող նրանց դուրս բերել վախի ճանկերից,- ցավով նկատում է նա,- էլ ուր մնաց զենք վերցնել ընդդեմ կեղեքիչների»: Ու ակամայից հանգում ենք այն տխուր հետևությանը, որ այդ վախերը մեր օրերում կրկին գլուխ են բարձրացրել հայության որոշակի շերտերի մեջ: Եվ երբ այս համատարած վախերին ավելանում են կոնկրետ ու տեսանելի գոյաբանական սպառնալիքները, պարզ է դառնում, թե ինչու մեր հանրությունն ակամայից դարձավ հոգեբանական առումով անդամալույծ: Մարդիկ այդպես էլ կարող են չհասկանալ, որ պատասխանատվությունը հանձնելով այդ «ինչ-որ մեկին»՝ դրա հետ հանձնում են իրենց ազատությունը: Մի՞թե պատահական է դիկտատորների կամ հեղինակությունների ի հայտ գալը, ամբոխը հակված է այդ կերպ խուսափել անձնական պատասխանատվությունից: Մարդիկ ինչքան էլ ձև անեն, թե ազատություն են ուզում, փաստ է, որ նրանք ինքնահոժար այն հանձնում են իրական և փչովի հեղինակություններին: Հիշենք մեր բոլոր ընտրությունների նախընթաց գործընթացները՝ «Պոլի փայտ լինի՝ մերոնցից լինի», «Ով ուզում է լինի, միայն Սերժը կամ Ռոբերտը չլինեն» ու այսպես, հոտային հրճվանքով աջ ու ձախ մերժելով, չհասկանալով, թե ինչ ասել է իշխանությունը՝ ամբոխը հասավ լիցքավորված ավտոմատը ձեռքին «կապիկի» պատմությանը: Սա է այն արատավոր շրջանը կամ թակարդը, որից մեր պետությունը և հանրությունը չեն կարողանում դուրս պրծնել: Ու հիմա «կապիկի» ձեռքից ավտոմատն

առնելն ակամայից դարձել է դժվար, նույնիսկ անկարելի, քանզի «կապիկը» խրախուսվում է իրեն վարժեցրած և արդեն պարեցնող ուժերի կողմից: Իսկ աշխարհը և մանավանդ մեր տարածաշրջանը հետզհետե թաղվում են սոսկալի արհավիրքների մեջ, ու այս պայմաններում հասարակության մի ստվար զանգված՝ ի դեպ, նույնիսկ բավական խոհեմ ու գիտակից հատված, սպառնալիքները չտեսնելու համար ջայլամի պես գլուխը մտցրել է ավազի մեջ և համառորեն չի ուզում ընդունել, որ Հայաստանը և հայությանը անդամահատելով՝ քարշ են տալիս դեպի սպանդանոց: Ինքնախաբեությունը սկսում է նույնիսկ միստիկ և միֆական ձևեր ընդունել. «Ո՞վ գիտի, գուցե այս ամենի մեջ մի գաղտնի, հասարակ ընկալումների տիրույթից դուրս մի թաքուն կոդ կա, որը, ելնելով ազգային ինքնապաշտպանական բնազդից, թույլ չի տալիս գիշատչական աշխարհում գնալ բացահայտ առճակատման, բայց չէ՞ որ այսպես գոյատևել ենք դարեդար…»: Ռաֆֆու խոսքերի մեջ կա սրա ակնարկը: Բայց ո՞վ կարող է վստահ ասել, թե այդ ինքնապաշտպանական միֆական կոդ-բնազդը չի վերածվել ինքնաոչնչացման բնազդի…

Ինչևիցե, այստեղ մենք կրկին հանգում ենք մի հիմնարար բանաձևի, այն է՝ եթե առկա է պատասխանատվության ստանձնման պատրաստակամությունը, վախը նահանջում է:

Լիբերալ հոսանքների և ժողովրդավարության գաղափարների հիմնադիրները ազատություն-պատասխանատվություն համադրումը միշտ շրջած են ներկայացրել՝ ասելով, որ ազատությունը ենթադրում է պատասխանատվություն, սակայն դա ակնհայտ սխալ մոտեցում է, քանզի մարդը կամ հասարակությունը պատասխանատվությունը ստանձնելով է դառնում ազատ: Այս շրջված վիճակը հասել է մինչև մեր օրեր և տեղ գտել արևմտյան խարտիաներում ու հիմնարար փաստաթղթերում և դարձել զանգվածներին հիմարացնելու փառահեղ գործիք, ինչը ենթադրում է ազատության գերարժևորում և պատասխանատվության ստորադասում: Եթե մարդը կամ ազգը չի ստանձնել իր կյանքի պատասխանատվությունը, ի՞նչ հրաշքով կդառնա ազատ: Հետևաբար, պատասխանատվությունն է ամենի հիմքը: Նույնիսկ սովորական մարդու կենսագործունեության դեպքում, ամենապարզ իրադրության մեջ վախերը անհետանում են, երբ նա ոչ թե փախչում է վախերից, այլ համարձակորեն գնում է դեպի այն, ինչը վախ է առաջացնում: Հարցրեք առաջին պատահած որևէ գործարարի և նա կասի. «Իմ բիզնեսը սկսեց հաջողել ճիշտ այն պահից, երբ ես կենտրոնացա, հավաքեցի ուժերս, հնարավորություններս և ուղիղ նայեցի վախի աչքերին»: Նա նաև կպատմի, թե ինչպես շատ բան սկսեց զուլալվել ու կոնկրետանալ վախից ազատագրվելուց հետո:

Հո իզուր չէ՞ր Ֆրանկլին Ռուզվելտը ամերիկյան մեծ բարեփոխումները սկսելուց առաջ ասում. «Մենք այլևս ոչինչ չունենք կորցնելու՝ բացի մեր վախերից»: Վախը, բացի իր բերած քաղաքական ու գոյաբանական ավերներից, վտանգավոր է նրանով, որ խլում ու ջլատում է մարդկանց էներգիան, որովհետև վախի հակառակ երեսը քաջությունը չէ, այլ ինչպես Արևելքի իմաստուններն են ասում՝ ավելի շուտ կենսարար սիրո բացակայությունը: Մերն առ սեփական անձը, սեփական հայրենիքը: Վախենում են բոլորը, և դա նորմալ է, բայց վախի աչքերին նայում են քչերը: Վախի դեմ կա միայն մեկ հակաթույն, և դա գիտակցումն է այն բանի, թե ինչի՞ց է կազմված այդ ավերող զգացումը, ո՞րն է նրա բաղադրությունը: Եվ, իհարկե, հրաժարումը ջայլամային պահվածքից: Ու եթե դա լինի, Ռաֆֆու ասած հայի «մեռելության նշանը» ընդամենը կմնա դառնացած մարդու խոսք պատմության գրքերում: ■

Արցախի հարուստ բնաշխարհը՝ ադրբեջանցի կացնավոր «բնապահպանների» ձեռքերում

Արմեն Վարդանյան
Լրագրող

Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանական վերջին ագրեսիան մեկնարկեց կեղծ բնապահպանների բեմադրած ակցիայով: Ինչպես Բերձորի միջանցքի արգելափակման առաջին օրերին ահազանգում էին Արցախից և Հայաստանից, բնապահպանության քողի տակ ադրբեջանական բարբարոսական վարչախումբը քաղաքական պահանջներ էր առաջ քաշելու և նախապատրաստում էր հերթական ագրեսիան:

Ադրբեջանի բնապահպանական խնդիրներով «մտահոգությունների» կեղծ լինելն ի սկզբանե էր պարզ, թեկուզ հենց այն պատճառով, որ հազարամյակների բնօրրանի հարուստ բնաշխարհը մշտապես գտնվել է արցախցու հոգածության ներքո, իսկ անկախության հռչակումից հետո այնտեղ բնապահպանության հարցը դրված էր պետական ինստիտուցիոնալ բարձր մակարդակի վրա:

Արցախի Հանրապետության տարածքը՝ 11,458 կմ²-ը, կենսաբազմազանության ինքնատիպ կղզի է՝ հատկապես իրենից դեպի արևելք ընկած հարթավայրային լանդշաֆտի համեմատ:

Լիովին օրինաչափ էր, որ Արցախի Հանրապետության պետականաշինության գործընթացում անվտանգային, սոցիալ-տնտեսական առաջնային խնդիրների հետ նույն կարևորությամբ պետությունը դիտարկում էր բնապահպանության հարցերը:

Հարուստ բնությունը և մաքուր շրջակա միջավայրը պահպանելու համար Արցախի Հանրապետության գործադիր մարմինը անկախություն հռչակելու առաջին իսկ տարիներից ձեռնամուխ է եղել բնության հատուկ պահպանվող տարածքների, արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի ստեղծման գործընթացին: Հրապարակվեց «Ղարաբաղի բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը»: Մշտական ուշադրության տակ էին բնության հուշարձանները: Խստացվել էին պատժամիջոցներն անտառահատումների, փայտանյութի արտահանման, մարդածին հրդեհների, որսագողության համար:

Անտառներով հարուստ Արցախում մշտապես իրականացվել են ծառատունկի միջոցառումներ: Արցախցիներն առավել շահախնդիր էին հայրենի բնությունը մաքուր, անաղարտ պահելու հարցում: ԱՀ քաղաքացիները մեծ հոգատարությամբ մաքուր էին պահում Ստեփանակերտի և մյուս բնակավայրերի փողոցներն ու բակերը, նույն կերպ էլ հոգում էին բնության մասին:

Հանրապետությունում զարգանում էին էկոտուրիզմը և ագրոտուրիզմը: Արցախի գործադիր մարմինը խիստ բնապահպանական նորմեր էր սահմանել հանքարդյունաբերության ոլորտի և գետերի վրա կառուցված ՓՀԷԿ-երի համար: Կաշենի պղնձի, ոսկու հանքավայրը շահագործվում էր բնապահպանական միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան՝ ի հեճուկս հակառակի մասին պաշտոնական Բաքվի և կեղծ բնապահպանների, իրականում՝ Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակիցների հայտարարությունների:

Էկոկրթության ուղղությամբ էին հիմնարար քայլեր արվում. շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված կրթական ծրագրեր էին ներդրվել հանրակրթական և բարձրագույն կրթական հաստատություններում: Արցախի հայության դեմ սանձազերծած հերթական ռազմական ագրեսիայի տարում՝ 2020 թվականին, շարունակվում էին բնության հուշարձանների անձնագրերի կազմման, քարտեզագրման աշխատանքները՝ դրանց հարուստ բազմազանության պահպանման և կայուն օգտագործման ապահովման նպատակով:

44-օրյա պատերազմից երկու տարի անց արդեն պաշարված Արցախում ժողովուրդը և պետությունը համատեղ շարունակում էին բնապահպանական պետական քաղաքականությունը, ինչը հատկանշական էր ադրբեջանական կեղծ բնապահպանների՝ Բերձորի միջանցքի փակման ակցիայի խորապատկերին:

Հացի, անվտանգության, ջեռուցման կարիք ունեցող, պաշարված Արցախում կառավարությանը մաս կազմող լիազոր մարմինը՝ Բնապահպանության կո-

միտեն, շարունակում էր իր ընթացիկ աշխատանքները: Այսպես՝ 2023 թ. մարտ ամսին քննարկումներ էին կազմակերպվել Արցախի Հանրապետության կառավարության՝ նույն տարվա փետրվարի 22-ի որոշումներով հաստատված «Էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցառումների» և «Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի մոնիթորինգի» ծրագրերի շուրջ:

«Ծրագրերի նպատակն է Արցախի Հանրապետության էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման բնագավառում պետության և հասարակական կառույցների միջև ներդաշնակ համագործակցության ընդլայնումը՝ ուղղված էկոլոգիական կրթության որակի բարելավմանը, հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Մշտադիտարկումների միջոցով իրականացվելու է Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի էկոլոգա-երկրաքիմիական առանձնահատկությունների գնահատում և մոնիթորինգի տվյալների հիման վրա գետերի ջրերի որակի նորմերի սահմանում»,- ասվում էր պաշարված Արցախից տարածված հաղորդագրության մեջ: Այդ ծանր ժամանակահատվածում վերոնշյալ ծրագրերով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար նաև ստեղծվեցին համապատասխան աշխատանքային խմբեր:

Կես տարուց ավելի բլոկադայի մեջ գտնվող Արցախում Բնապահպանության կոմիտեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ ամռանը հեռավար դասընթացներ էր իրականացնում շրջակա միջավայրի պահպանության գործնական մեխանիզմների շուրջ: Այդ ընթացքում էներգետիկ շրջափակման պատճառով գրեթե ցամաքել էր Արցախի ամենամեծ ջրային ռեսուրսը՝ Սարսանգի ջրամբարը, որտեղ արդեն արձանագրվում էր միկրոկլիմայի կտրուկ փոփոխություն՝ ջրային ֆաունայի և ֆլորայի կորստով:

Արցախի բնապահպանական կոմիտեն այդ օրերին ահազանգում էր, որ վտանգվել են ջրամբարի ափերին բնակվող կենդանիների և բույսերի՝ Կարմիր գրքում ընդգրկված մի շարք տեսակներ:

Հոնուրի կիրճը

Ազոիի քարանձավը

Ջրամբարի մակարդակի նման իջեցումը հանգեցրել էր ափամերձ տարածքի ուտելի և համեմունքային (մոտ 125 տեսակ), դեղաբույսերի (մոտ 35 տեսակ), մեղրատու (մոտ 156 տեսակ) բույսերի կորստի լրջագույն ռիսկերի, իսկ նշված բուսատեսակները այդ տարածքի շրջակա միջավայրի ու բնակչության կենսապահովման անբաժանելի մասն են: Արցախի ջրերում տարածված 17 տեսակի ձկներից 12-ը կամ 70,8%-ը առկա են Սարսանգի ջրամբարում, և ջրի ծավալի այդպիսի կրճատումը կտրուկ բարձրացրել էր ձկների խտությունը, ինքնաթունավորման ռիսկերը:

Արցախի բնապահպանական կառույցն ահազանգում էր, որ ջրամբարի տարածքում է գտնվում Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով «կրիտիկական վիճակում» գտնվող փոքրասիական տրիտոնը, ափամերձ տարածքում բնակվող սիրիական սխտորագորտը, սողուններից՝ միջերկրածովային կրիան, անդրկովկասյան սահնօձը: Սարսանգի ջրամբարի հարակից տարածքում են բնակվում նույն ցուցակներում գրանցված կաթնասուններից ջրասամույրը, իսկ թռչուններից՝ փոքր ձկնկուլը և մեծ ձկնկուլը, որոնք ձվադրում են ափամերձ խիտ բուսուտներում, իսկ ջրամբարի չորացումը հանգեցրել էր այդ տեսակների բնադրագաղութների իսպառ վերացմանը:

Կյանքի և մահու պայքար մղող Արցախի բնապահպանական կոմիտեն այդ օրերին իրականացնում էր ջրամբարի բնապահպանական իրավիճակի մշտադիտարկումներ:

Արցախի Հանրապետության պետական մյուս կառույցը, որը մասնագիտացված էր բնապահպանական հարցերում, «Կանաչ Արցախ կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ն էր, որն ուներ 3 մասնաճյուղ՝ «Կովական» պետական արգելոցը, «Սոսիների պուրակ» պետական արգելավայրը և «Կաչաղակաբերդ» ազգային պարկը:

Արցախի փոքր տարածքում առկա են զգալի թվով բնության հուշարձաններ: Կառավարությունը մինչև Արցախի հայաթափումը հասցրել էր հաստատել 28 նման հուշարձանների կարգավի-

ճակը: Նախատեսվում էր շարունակել դաշտային ուսումնասիրությունները բնության հուշարձանների ցանկի համալրում իրականացնելու նպատակով: Այդ հուշարձանների մեծ մասն՝ իրենց ինքնատիպությամբ, եզակի էին ողջ տարածաշրջանում:

Այսպես՝ «Ազոխի քարանձավ» բնության հուշարձանը, որը գտնվում է Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Ազոխ և Դրախտիկ գյուղերի միջև, ունի շուրջ 8000 քառակուսի մետր մակերես և պարունակում է 8 լայն ծայրերով, 600 մետր երկարությամբ խճճված անցքեր: Այն Անդրկովկասի ամենամեծ քարանձավն է, որն ունի մուտքեր և ելքեր՝ 6 բավիղանման սրահներ: Բնության հուշարձանի ամենամեծ սրահն ունի 3000 քառակուսի մետր մակերեսով տարածք: Հսկայական կլոր դահլիճի պատերն ունեն տարօրինակ մակերևույթ, կարծես նրանց օձեր են կպցրած: Քարանձավում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են շուրջ 300 000 տարվա պատմություն ունեցող քարե գործիքներ, այդ ժամանակվա կենդանական և բուսական աշխարհի բրածո մնացորդներ, նախամարդու արվեստի հետքեր և այլն:

Անզուգական գեղեցկություն և բնական արժեք ունի «Հոնուտի ձոր» կիրճ բնության հուշարձանը, որը գտնվում է Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Քարին տակ և Ասկերանի շրջանի գյուղական համայնքների միջև՝ Կարկառի գետահովտում: Բնության հուշարձանի հատակի բարձրությունները ծովի մակարդակից առավելագույնը 1078 մետր են, նվազագույնը՝ 903 մետր: Այն Կարկառ գետի հոսանքով հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևելք ձգվող մոտ 2315,64 մետր երկարությամբ անտեսանելի հովիտ է, որի ձախակողմյան սարավանդի վրա տեղաբաշխված է Շուշի քաղաքը, իսկ աջակողմյան սարավանդը պատված է մարգագետիններով, թփուտներով և նոսրանտառով: Անհիշելի ժամանակներից ժողովուրդն այս հովտին տվել է «Հոնուտի ձոր» անվանումը: Առանձնակի գեղեցկություն ունի բնության հուշարձանի միջնամասի ձախափնյա հատվածում գտնվող «Զոնտիկներ» կոչվող ջրվեժը, որն առաջացել է ժայռի տակից բխող աղբյուրի գահավիժումից: Արտաքինից այն նման է անձրևանոցի:

Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանում է գտնվում գեղատեսիլ «Կաչաղակաբերդ» ժայռագագաթ բնության հուշարձանը: Այն անձեռակերտ ժայռագագաթ-ամրոց է, որը հյուսիսային, արևելյան և արևմտյան կողմերից շրջափակված է մինչև 50-60 մետր բարձրությամբ կատարյալ զառիթափ լանջերով, իսկ հարավային կողմից՝ 8-10 մետր բարձրությամբ համեմատաբար թեք լանջով, որտեղից հնարավոր է մուտք գործել դեպի ժայռագագաթ: Ժայռագագաթ-ամրոցին հասնելու համար պետք է մագլցելով բարձրանալ ժայռերը:

Իր գերիշխող դիրքի և բացարձակ անմատչելիության շնորհիվ բերդում կարելի էր պաշտպանվել նույնիսկ առանց զենքի: Ժողովուրդն ամրոցը կոչել

Ծալք լիճը

է «Կաչաղակաբերդ», քանի որ միայն կաչաղակներին էր այն հասանելի: Տեղի բնակիչները բերդը նաև անվանում են «Սղսղան», քանի որ բազմաթիվ դեպքեր են եղել, երբ մարդիկ սահել են լեռան գագաթից՝ չհասնելով պարսպին:

Մեծառանք գավառի իշխանները 8-րդ դարում ամրացրել են «Կաչաղակաբերդը»՝ բնակչությանն արաբական զավթիչներից փրկելու համար պարզապես քարերով և կրաշաղախով ամրացնելով հարավային մասում գտնվող մուտքը: Հետագայում այն դարձել է Խաչենի մելիքության ապաստարանը, որտեղ պատերազմների ժամանակ թաքնվում էր խաղաղ բնակչությունը:

Իրենց ինքնատիպությամբ և բնական արժեքով չեն զիջում Արցախի մյուս բնության հուշարձանները՝ «Ալ լճեր» հրաբուխ, «Քառման» հրաբուխ (Քարմանբեքթափե լեռ), «Մեծ ալ» լիճ, «Վերին ջերմաջուր» հանքային աղբյուր, «Փոքր ջերմաջուր» հանքային աղբյուր, «Ծալք լիճ» և այլն:

Հարուստ բնաշխարհը, էնդեմիկ կենդանական և բուսական տեսակները պահպանելու համար Արցախի Հանրապետությունում ձևավորված են նաև արգելոցներ-արգելավայրեր, ընդունվել են դրանց կառավարման և պահպանման գործընթացը կանոնակարգող օրենքներ: Ադրբեջանական ցեղասպանական գործողությունների հետևանքով անտեր են մնացել ինչպես արցախյան հազարամյա պատմություն ունեցող բնակավայրերը, պատմամշակութային կոթողները, այնպես էլ հարուստ բնությունը: Վերջինիս ոչնչացումն Ադրբեջանը սկսել էր դեռ 44-օրյա պատերազմի օրերին, երբ միջազգային կոնվենցիաներով արգելված ֆոսֆորային զենքով հրկիզում էր Արցախի գեղատեսիլ անտառները, իսկ այսօր արդեն կացնով անտառը հատող ադրբեջանցու ձեռքը բռնող չկա: Վերջինս անարգել ոչնչացնում է ոչ միայն Արցախի հայկական պատմամշակութային արժեքները, այլև ազգեր և սահմաններ չճանաչող կենդանական և բուսական աշխարհը, իսկ համաշխարհային բնապահպանական ուժեղ համայնքը համառորեն չտեսնելու է տալիս հիմնահարցը և լռում է: ■

Ադրբեջանում արտահերթ նախագահական ընտրությունների անցկացման հնարավոր պատճառները. ընդհանուր ակնարկ

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ասիստենտ

2024 թ. փետրվարի 7-ին Ադրբեջանում կայացած արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում ձայների ճնշող մեծամասնությամբ հաղթանակ տարավ և նախագահի պաշտոնում վերընտրվեց Իլհամ Ալիևը: Արտահերթ նախագահական ընտրություններ անցկացնելու մասին հայտարարել էր անձամբ Ալիևը դեռևս 2023 թ. դեկտեմբերին: Քաղաքական ընդդիմության մի մասը հրաժարվել էր մասնակցել ընտրություններին, քանի որ, նրանց կարծիքով, անիրատեսական էր ընդամենը մեկ ամսում քարոզչություն իրականացնելը և 40 հազար ստորագրություն հավաքելը (դա պետք է արվեր մինչև հունվարի 7-ը): Իսկ այն թեկնածուները, որոնք համաձայնել էին մասնակցել ընտրություններին, որպես այդպիսին, քարոզչություն չեն իրականացրել և չեն քննադատել նախագահին: Հատկանշական է, որ քարոզարշավի և նախագահական ընտրությունների անցկացման նույն տրամաբանությունն է գործել նաև 2018 թ.՝ վերջին նախագահական ընտրությունների ժամանակ: Նախորդ ընտրությունների համեմատ՝ միակ տարբերությունը թերևս այն էր, որ 2024 թ. Ի. Ալիևը հանդես էր գալիս «հաղթողի» և Արցախի Հանրապետությունը բռնազավթածի դիրքերից:

Արտահերթ նախագահական ընտրություններին ընդառաջ հարցեր էին առաջանում, թե ինչու է Ի. Ալիևը շտապում և 2025 թ. նախատեսված ընտրությունները անցկացնում 2024 թ.: Չնայած արտահերթ ընտրություններ անցկացնելու նախաձեռնությունը պատկանում էր Ադրբեջանի գործող իշխանությանը՝ այնուամենայնիվ նա արտահերթ ընտրությունների անցկացման անհրաժեշտության վերաբերյալ բավարար հիմնավորումներ չէր ներկայացրել: Կարծիքներ կային, թե արտահերթ ընտրությունների նպատակներից մեկը ներկայիս նախագահի բարձր լեգիտիմությունը ցույց տալն էր Արևմուտքի այն շրջանակներին, որոնք Ի. Ալիևի հետ խոսում էին սպառնալիքների լեզվով:

Հիմնվելով պատմական դիտարկումների և ընդհանուր քաղաքական դրդապատճառների վրա՝ կարելի է մի քանի պատճառ առանձնացնել, որոնք կարող էին ստիպել Ի. Ալիևի նման բռնապետին՝ գնալու արտահերթ նախագահական ընտրությունների:

Նախ՝ առաջնային նշանակություն ուներ քաղաքական լեգիտիմության ամրապնդման հարցը: Արտահերթ ընտրությունների նախաձեռնությամբ քաղաքական ղեկավարը կարող է իր քաղաքական մանդատը ամրապնդելու նպատակ հետապնդել, հատկապես, եթե նա բախվում է իր լեգիտիմության հետ կապված մարտահրավերներին: Ի. Ալիևի պարագայում ակնհայտ է, որ նա տարիներ շարունակ եղել է իր հոր՝ Հեյդար Ալիևի ստվերում և, ըստ էության, պայքարել այդ ստվերի դեմ: Արցախի բռնազավթմամբ նա փորձել է ապացուցել, որ հորից առավել ուժեղ և կամային է և հոր՝ 1990-ականների պարտությունը փոխարինել է իր «հաղթանակով»:

Արտահերթ նախագահական ընտրությունների պատճառ է նաև քաղաքական բարենպաստ իրադրության առկայությունը: Երբ առաջնորդը կարծում է, որ տվյալ շրջանի քաղաքական և տնտեսական պայմանները բարենպաստ են, նա կարող է դա իր օգտին ծառայեցնել՝ արտահերթ ընտրություններ անցկացնելով: Սա կարող է նպաստել իշխանության ամրապնդմանը և պաշտոնավարման ժամկետի երկարաձգմանը: Ադրբեջանի դեպքում իշխող կուսակցությունը հնարավոր է ցանկանում էր ամրապնդել իր իշխանությունը՝ շահարկելով բարենպաստ քաղաքական իրադրությունը: Արտահերթ ընտրությունների միջո-

ցով նրանք կարող են ապահովել իրենց մանդատը, ուժեղացնել վերահսկողությունը կառավարության վրա և մարգինալացնել պոտենցիալ ընդդիմությանը:

Մեկ այլ կարևոր հանգամանք է կայունության և վերահսկողության պահպանման անհրաժեշտությունը: Արտահերթ ընտրությունների կոչով առաջնորդները կարող են փորձել կանխել հնարավոր քաղաքական անկայունությունը կամ իշխանության դինամիկայի փոփոխությունները: Դա նրանց թույլ է տալիս վերահաստատել իրենց վերահսկողությունը քաղաքական դաշտի վրա և մեղմել ընդդիմադիր խմբերի կամ իրենց կուսակցության ներսում գտնվող մրցակիցների հնարավոր մարտահրավերները: Չնայած 44-օրյա պատերազմում ձեռք բերած հաջողություններին և Արցախում իրականացրած ցեղասպանության ընթացքում Արցախի բռնազավթմանը՝ Ադրբեջանի ներսում սոցիալ-տնտեսական ճգնաժամը չի ավարտվում, և հասարակությունը պարբերաբար դժգոհում է սոցիալական խնդիրներից: Ասվածի համատեքստում իշխող կուսակցությունը հավանաբար կարծում էր, որ արտահերթ ընտրությունների անցկացումը կօգներ վերականգնելու հասարակության վստահությունը, ապահովելու կայունության զգացումը և լուծելու բնակչությանն անհանգստացնող հրատապ խնդիրները:

2023 թ. հունվարից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, երկրի մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) աճել է ընդամենը 0,2%-ով: Այս ՀՆԱ-ի կեսից ավելին նավթն ու գազն են: Երկրում տարիներ շարունակ աճող նվազագույն աշխատավարձը 2023 թ. եղել է ամսական 200 դոլարից մի փոքր ավելի (345 մանաթ): Բացի այդ՝

հաշմանդամության թոշակ ստացողների թիվը 2020 թ. ի վեր հանրապետությունում անընդհատ նվազել է՝ չնայած նրան, որ մինչ այդ ամեն տարի միայն աճել է: Բացի այդ՝ հանվել է փոքր ձեռնարկատերերի արտոնյալ եկամտահարկը, և նրանք այժմ պետք է վճարեն ոչ թե շահույթի 5 տոկոսը, այլ 20 տոկոսը:

Նման պայմաններում հասարակության շրջանում հարց է առաջացել, թե ո՞ւր են գնացել այդ գումարները: Դատելով իշխանական հայտարարություններից և ՋԼՄ-ներում տարածված լուրերից՝ օկուպացված Արցախում արդեն իսկ ծախսվել է 7 միլիարդ դոլար: Հատկապես այն բանից հետո, երբ իրար կողքի երկու լուսանկար տարածվեց սոցիալական ցանցերում. համեմատելով Ադրբեջանի գյուղական շրջաններից մեկում փլուզվող դպրոցը և օկուպացված Արցախում նորակառույց ագարակը՝ հասարակության ցասումը բորբոքվեց: Ակնհայտ է, որ նման անհավասարության դեմ դժգոհությունը կուտակվելու է հատկապես մարզերում, և առկա տնտեսական ու սոցիալական խնդիրները ներքին նոր հակասությունների պատճառ են դառնալու:

Վերոնշյալին գումարվում է նաև գործազրկության բարձր մակարդակը մարզերում: Պաշտոնապես Ադրբեջանում գործազրկությունը ցածր է՝ ընդամենը 5%, սակայն հենց ադրբեջանցի փորձագետներն են կարծում, որ իրականում շրջանների և գյուղերի բնակչության զգալի հատվածը գործազուրկ է:

Ոչ երկրորդական տեղում է նաև ռազմավարական հնարավորությունների օգտագործման հանգամանքը, երբ վաղաժամկետ ընտրությունները կարող են օգտագործվել մարտավարական առավելություններն օգտագործելու համար, ինչպիսիք են մասնատված ընդդիմությունը կամ կոնկրետ պահերին սեփական բարձր վարկանիշը: Առաջնորդները կարող են օգտվել արտաքին գործոններից, ինչպիսիք են աշխարհաքաղաքա-

կան իրադարձությունները կամ ճգնաժամերը՝ իրենց դիրքերն ամրապնդելու և պաշտոնավարման ևս մեկ ժամկետ ապահովելու համար: Տվյալ դեպքում միջազգային ճնշումը կամ աշխարհաքաղաքական նկատառումները կարող էին ազդել արտահերթ ընտրություններ անցկացնելու որոշման վրա: Ադրբեջանը հնարավոր է բախվել է համաշխարհային դերակատարների կամ Արևմուտքի ճնշմանը՝ ժողովրդավարական գործընթացներ և կառավարման թափանցիկություն ցուցադրելու առումով, ուստի արտահերթ ընտրությունները կարող էին դիտվել որպես դրանք փաստելու միջոց:

Դեռևս հստակ չէ, թե Ի. Ալիևը ինչ վարկանիշ ունի երկրում: Երբ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց 44-օրյա պատերազմը, երկրի ներսում տեղի պացիֆիստները կարծում էին, որ Ի. Ալիևին պատերազմն անհրաժեշտ է իր քաղաքական վարկանիշը բարձրացնելու համար: Այն, որ նրա վարկանիշը որոշ ժամանակով բարձրացել է, կարելի է դատել նրանով, թե ինչպես 2020 թ. պատերազմից հետո և նույնիսկ դրա ընթացքում ռեժիմի որոշ հակառակորդներ, այդ թվում՝ արտերկրում գտնվողները, սկսեցին բացահայտորեն համակրել Ի. Ալիևին:

Բայց այս ամենը տեղի է ունեցել 2020 թ., այսինքն՝ ավելի քան երեք տարի առաջ: Արդյո՞ք սա նշանակում է, որ նախագահի վարկանիշը շարունակում է բարձր մնալ, կամ առկա մարտահրավերները չեն ազդելու Ալիևների կլանի վրա:

Ակնհայտ է, որ Ի. Ալիևը ոչ միայն հանրային աջակցության անկման մարտահրավերի, այլև Արևմուտքի հետ որոշակի անհամաձայնությունների առջև է կանգնել, ուստի վաղ թե ուշ երկրի ներսում ընդդիմադիր տրամադրությունների աճը կարող էր անկառավարելի դառնալ: Իրավիճակի վատթարացումից առաջ ընտրություններ անցկացնելով՝ Ի. Ալիևը փորձել է հաղթանակ ապահովել և հնարավոր կորուստները մեղմելու ավելի մեծ հնարավորություններ ստանալ:

Փաստացի, Արցախի բռնազավթված տարածքներում խոշոր շինարարական աշխատանքների, ենթակառուցվածքային ծրագրերի, բնակչության վերաբնակեցման, նոր աշխատատեղերի ստեղծման հետ կապված խնդիրները թույլ չեն տվել Ալիևի վարչախմբին պատշաճ ուշադրություն դարձնել Ադրբեջանում առկա սոցիալական խնդիրների լուծմանը, բնակչության առաջնային կարիքների բավարարմանը: Երկրում առկա կաշառակերության և բյուրոկրատական կամայականությունների դեմ

վարչական միջոցներով պայքարը նույնպես չի կարողացել և չի կարող էական ազդեցություն ունենալ այս խնդիրների արմատական լուծման վրա: Գործազրկության և գնաճի վերաբերյալ կառավարության ցուցանիշներն էապես տարբերվում են միջազգային կառույցների ցուցանիշներից, ընտրություններին մասնակցող թեկնածուները նշել են, որ երկրի ֆինանսական և բանկային հատվածում ստեղծված իրավիճակը լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն է պահանջում:

Երկրի ՀՆԱ-ն հիմնականում ձևավորվում է նավթի և գազի փոխադրումներից ստացվող եկամուտներով: Հարկային և մաքսային համակարգում ստեղծված իրավիճակը պահանջում է հրատապ միջոցներ, իսկ կրթության ոլորտում քանակական ցուցանիշները գերազանցում են որակականին:

Ի վերջո, Իլհամ Ալիևին անհրաժեշտ էին արտահերթ նախագահական ընտրություններ՝ նոր ժամկետով վերընտրվելու համար, քանի դեռ բոլորի համար ակնհայտ չեն դարձել ղարաբաղյան քարոզարշավի բացասական լուրջ հետևանքները, որոնք կարող էին խանգարել նրա վերընտրվելուն, եթե ընտրություններն անցկացվեին ժամանակին: Ստացվում է, որ Ի. Ալիևի համար առավել նպատակահարմար էր ևս մեկ ժամկետով վաղաժամ վերընտրվելը, քան լուրջ ճգնաժամի սպասումով հետագայում չընտրվելու վտանգի առջև կանգնելը:

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական նպատակներն ու դիրքորոշումը Եմենի կոնֆլիկտում

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Վերջին տարիներին միջազգային հանրության ուշադրությունն առավել կենտրոնացած էր Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների վրա, մինչդեռ պակաս կարևոր և խորքային չէ մեկ այլ արաբական երկրի՝ Եմենի քաղաքական նշանակությունը Մերձավոր Արևելքում, որտեղ իրենց քաղաքական նկրտումներն են փորձում կենտրոնացնել ինչպես իշխանամետ, այնպես էլ ընդդիմադիր արտաքին ուժերը: Եմենի ռազմավարական գլխավոր արժեքն այն է, որ նա վերահսկում է Միջերկրական ծովը Հնդկական օվկիանոսին կապող գլխավոր երկու նեղուցներից մեկը՝ Բաբ էլ Մանդեբի նեղուցը: Եվրոպան Ասիային կապող ամենակարճ ճանապարհի վրա գտնվող այս նեղուցով է անցնում համաշխարհային առևտրի մի հսկայական մասը:

Ընդհանուր առմամբ Եմենը բաժանված է երկու ազդեցության լծակների միջև: Մի կողմը պրո-իրանական հյուսիսն է, որն ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի թիրախային գոտում է: Այս դեպքում, ի տարբերություն Սիրիայի, որտեղ Իրանը միանշանակ աջակցում է Բաշար Ասադի կառավարությանը, այստեղ նա գործուն օժանդակություն է ցուցաբերում հակակառավարական ուժերին՝ հութիներին: Մյուս կողմում Սաուդյան Արաբիան է՝ իր պրո-իշխանական դիրքորոշմամբ:

Սաուդյան Արաբիան տարածաշրջանի այն երկրներից է, որը Իրաքում Սադամի տապալումից հետո լուրջ մրցակցության մեջ է մտել Իրանի հետ և փորձում է Իրանի դեմ մի որոշակի հավասարակշռություն հաստատել և կանխել վերջինիս հզորացումը: Սա է պատճառը, որ տարածաշրջանի մյուս արաբական երկրների համեմատությամբ՝ նա լիովին ագրեսիվ է վերաբերվում տարածաշրջանում Իրանի քաղաքականությանը: Սաուդյան Արաբիայի իշխանությունները կարծում են, թե ԱՄՆ-ի հարձակումը Աֆղանստանի և Իրաքի վրա հանգեցրել է հակաիրանական ուժերի հեռացմանը և այս երկու երկրներում Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցության վերելքին:

Փաստորեն, Սաուդյան Արաբիան Եմենում զեյդ շիաների աճը մեկնաբանում է որպես Իրանի տարածաշրջանային հզորության աճ և իրեն տեսնում է շիաներով շրջապատված: Սաուդցիները տարիներ շարունակ ձգտում են ստեղծել Մերձավոր Արևելք՝ կենտրոնացած Սաուդյան Արաբիայի շուրջ: Ուստի նրանք ձգտում են դեր խաղալ տարածաշրջանային բոլոր զարգացումներում, սակայն տարածաշրջանում տեղի ունեցած բոլոր իրադարձություններում նրանք բախվել են ձախողման և փակուղու: Չնայած մեծ քանակությամբ նավթային դոլարներ ծախսելուն՝ նրանք չկարողացան Բաշար Ասադի իշխանությունը հիմնա-

վորել որպես դիմադրության առանցքներից մեկը: Դրանից հետո նրանք չկարողացան ստեղծել իրենց ցանկալի համակարգը Իրաքում: Այսպիսով՝ այս հաջորդական անհաջողությունները և ձախողումները պատճառ են դարձել, որ նրանք դիմեն ռազմական միջամտության նաև Եմենում:

Իրան-Եմեն հարաբերություններն ունեն խոր պատմական անցյալ: Դեռևս իսլամի ընդունումից առաջ Եմենի տարածքները ընդգրկված են եղել Պարսկական կայսրության մեջ, իսկ Իրանի սուֆիները մեծ դերակատարում են ունեցել Հարավային Արաբիայում իսլամի տարածման գործում: Արդեն 20-րդ դ.-ի սկզբին Եմենում գործում էր բավական հզոր զեյդական իմամություն և, Իրանն էլ, լինելով տարածաշրջանի շիայական առաջնորդ, բնականաբար մշտապես աջակցել է Եմենի շիաներին՝ ուղղակիորեն չխառնվելով վերջինիս ներքին գործերին:

Իրանի Իսլամական Հանրապետության և Եմենի հարաբերությունները վերջին տարիների ընթացքում մշտապես եղել են տարածաշրջանային և միջազգային փոփոխությունների կիզակետում: Իսլամական հեղափոխության հաղթանակից առաջ Հյուսիսային և Հարավային Եմենները հստակ սահմանում և դիրքորոշում չունեին Իրանի արտաքին քաղաքականության հարցում:

1990 թվականի մայիսի 22-ին երկու Եմենները միավորվեցին, և այդ միությունից հետո Իրանի և Եմենի հարաբերություններն ուղեկցվեցին վերելքներով և վայրէջքներով: Սկզբում Իրանի դեսպանատունը վերածվեց հյուպատոսության, իսկ հետո հյուպատոսությունը վերածվեց ներկայացուցչության: Երկու երկրների քաղաքական հարաբերությունների վերելքներն ու վայրէջքները չխանգարեցին մշակութա-

յին հարաբերությունների զարգացմանն ու աճին, ուստի երկու Եմենների միավորումից հետո Իրանը և Եմենը միասին ստորագրեցին մշակութային, գիտական և կրթական բնույթի տարբեր պայմանագրեր[1]:

Իրանի և Եմենի հարաբերություններն էլ ավելի զարգացան, երբ Եմենում իշխանության եկան հութիները: Աջակցելով հութիների շարժմանը՝ Իրանն առաջին հերթին Սաուդյան Արաբիային փորձեց հասկացնել, որ Եմենը իր ռազմավարական հետաքրքրությունների տարածքն է և արաբա-իսրայելական դիմադրության առանցքի գլխավոր կետերից մեկը: Պատահական չէ, որ իրանցի մի շարք պաշտոնյաներ բազմիցս նշել են, որ Իրանի համար Եմենում «Անսար-Ալլահը» նույնն է, ինչ «Հեզբոլլահը»՝ Լիբանանում: Եմենը նաև Իրանի իսլամական հեղափոխության արտահանման գլխավոր շարժիչ ուժերից է արաբական աշխարհում[2]:

Իրավիճակը սրվեց այս տարվա սկզբից, երբ ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան հունվարի 12-ի գիշերը հարվածներ հասցրին Եմենի հյուսիսում իշխող և Իրանի կողմից աջակցվող շիայական «Անսար Ալլահ» (հութիների) շարժման օբյեկտներին՝ դա անվանելով պատասխան Կարմիր ծովում նավարկության ազատության դեմ սպառնալիքին:

Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը նշել է, որ Եմենի հութիներն Իրանից ոչ մի հրաման չեն ստանում: Նա նաև նշել է, որ ծովային անվտանգությունը իրենց համար շատ կարևոր է, քանի որ Իրանը նավթ է արտահանում, և եթե անվտանգության սպառնալիքները իրենց սահմաններին մոտ են, դա իրենց օգուտ չի բերում[3]:

Որպես հակափաստարկ սրան՝ տարածաշրջանում տեղակայված ամերիկյան հակաահաբեկչական ուժերի հրամանատարական կենտրոնը (CENTCOM) հայտարարություն է տարածել և պնդել, որ այս տարվա հունվարի 11-ին ԱՄՆ ռազմածովային ուժերի կողմից Արաբական ծովում՝ Սոմալիի ափերի մոտ, գրավվել է Եմենի ազգային բանակի համար իրանական զինամթերք տեղափոխող նավ[4]: Իրենց հերթին, հութիներն էլ նախազգուշացրել են շարունակել իրենց ռազմական գործողությունները Իսրայելի և նրա արևմտյան դաշնակիցների՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դեմ, քանի դեռ Գազայի հատվածում պատերազմն ու շրջափակումը չեն ավարտվել[5]:

Այսպիսով՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը, որպես ակտիվ դերակատար և տարածաշրջանային հեգեմոն, Եմենում ճգնաժամի սկզբից և լարվածության գագաթնակետին հասնելուց ի վեր փորձել է պաշտպանողական և անվտանգային մոտեցում որդեգրել Եմենի ազգային պետության նկատմամբ՝ ապահովելու համար նրա տարածաշրջանային անվտանգությունը: Իրանն, իհարկե, այս երկրում ունի նաև մի շարք շահեր, որոնց պաշտպանությանն էլ, կարելի է ասել, ուղղված է իր ներկայիս քաղաքականությունը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Իրանը Եմենում ունի մի քանի ռազմավարական նպատակներ.

- Միջերկրական ծովից մինչև Ադենի ծոց մեծ ազդեցության գոտու ստեղծում. ազդեցության տակ պահելով Եմենը՝ Իրանը կարող է փակել «շիայական կիսալուսինը» և դառնալ տարածաշրջանի գլխավոր դերակատարը:
- Մուտք դեպի Կարմիր ծով և վերահսկողության սահմանում Բաբ-էլ Մանդեբի նեղուցի նկատմամբ. սա թույլ կտա արդեն Հորմուզի նեղուցի վրա ազդեցություն ունեցող Իրանին լիակատար վերահսկողություն սահմանել Պարսից ծոցի երկրների նավթի տարհանման վրա:
- Եմենի՝ Սաուդյան Արաբիայի հետ սահմանակից տարածքներից բուֆերային գոտու ստեղծում. սրա շնորհիվ Իրանը կկարողանա ազդեցություն սահմանել թագավորության նկատմամբ:

Հղումներ

1 دلایل حمایت جمهوری اسلامی ایران از یمن https://www.farsnews.ir/news/13960128001712/%D8%AF%D9%84%D8%A7%DB%8C%D9%84-%D8%AD%D9%85%D8%A7%DB%8C%D8%AA-%D8%AC%D9%85%D9%87%D9%88%D8%B1%DB%8C-%D8%A7%D8%B3%D9%84%D8%A7%D9%85%DB%8C-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%A7%D8%B2-%DB%8C%D9%85%D9%86 (05.02.2024).

2 آیا ایران واقعا یمن را به کنترل خود در آورده است؟ , http://www.irdiplomacy.ir/fa/news/۱۹٤٤۲۳۷/\ (۰٤,۰۲,۲۰۲٤):

3 https://fararu.com/fa/news/700879/%D8%A7%D9%85%DB%8C%D8%B1%D8%B9%D8%A8%D8%AF%D8%A7%D9%84%D9%84%D9%87%DB%8C%D8%A7%D9%86-%DB%8C%D9%85%D9%86%DB%8C%E2%80%8C%D9%87%D8%A7-%D8%A7%D8%B2-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%AF%D8%B3%D8%AA%D9%88%D8%B1-%D9%86%D9%85%DB%8C%E2%80%8C%DA%AF%DB%8C%D8%B1%D9%86%D8%AF (06.04.2024).

4 https://www.mehrnews.com/news/5996642/%D8%A7%D8%AF%D8%B9%D8%A7%DB%8C-%D8%A2%D9%85%D8%B1%DB%8C%DA%A9%D8%A7-%D8%AF%D8%B1%D8%A8%D8%A7%D8%B1%D9%87-%D8%AA%D9%88%D9%82%DB%8C%D9-%81-%D9%85%D8%AD%D9%85%D9%88%D9%84%D9%87-%D8%B3%D9%84%D8%A7%D8%AD-%D9%87%D8%A7%DB%8C-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86%DB%8C-%D8%AF%D8%B1-%D9%85%D8%B3%DB%8C%D8%B1-%DB%8C%D9%85%D9%86 (05.02.2024):

5 https://www.aa.com.tr/en/middle-east/iran-says-us-military-approach-has-complicated-yemen-situation/3127095#:~:text=Iran's%20Foreign%20Minister%20Hossein%20Amir%2DAbdollahian%20said%20the%20%22military%20approach,complicated%E2%80%9D%20the%20situation%20in%20Yemen (05.04.2024):

Հայերի եկվորության տեսությունից մինչև Հայաստանի պատմություն. պատմակեղծարարության քաղաքական հետևանքները

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հայ ժողովրդի ծագման հարցը տասնամյակներ շարունակ զբաղեցրել է ոչ միայն հայ և օտարազգի գիտնականներին, այլև մեր թշնամիներին, որոնք մեր պատմական հայրենիքի զավթումը փորձում են բացատրել այն հանգամանքով, թե հայերը իբր եկվորներ են իրենց անունը կրող լեռնաշխարհում, իսկ իրե՛նք՝ զավթիչները, «տեղաբնիկներ» են:

Այս պնդումը «ապացուցելու» և իրենց քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար մեր թշնամիները հենվում են արհեստականորեն ստեղծված «հայերի եկվորության տեսության» վրա:

Ե՞րբ, ինչպե՞ս և ի՞նչ նպատակներով ստեղծվեց այս տեսությունը:

19-րդ դարում ծնունդ առավ համեմատական լեզվաբանությունը, ըստ որի՝ հայերն ունեն հնդեվրոպական ծագում, մի շարք այլ ժողովուրդների հետ նախապատմական ժամանակներում կազմել են մեկ էթնիկ ընդհանրություն («հնդեվրոպական մայր ժողովուրդ») և զբաղեցրել միևնույն տարածաշրջանը, որը գիտության մեջ պայմանականորեն կոչվում է «հնդեվրոպական նախահայրենիք»:

Այդ ժողովուրդների ծագման հարցը այս տեսության շրջանակներում շաղկապված էր հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության հետ: Տարբեր ժամանակներում գիտության մեջ գերիշխող են եղել նախահայրենիքի տեղադրության տարբեր վարկածներ (հարավարևելյան Եվրոպա, հարավռուսական տափաստաններ, Առաջավոր Ասիայի հյուսիս և այլն):

19-րդ դարում համեմատական լեզվաբանության մեջ լայն տարածում ստացավ հնդեվրոպական նախահայրենիքը հարավարևելյան Եվրոպայում տեղադրելու տեսակետը:

Դա մի կողմից, մյուս կողմից՝ հույն հեղինակների վարկածը հայերի բալկանյան ծագման վերաբերյալ առաջ բերեց հայերի եկվոր լինելու տեսությունը:

Ձևավորվեց մի տեսակետ, ըստ որի՝ հայերը գաղթելով Բալկանյան թերակղզուց՝ Ք.ա. 8-6-րդ դարերում մուտք են գործել Ուրարտու, նվաճել այն և վերջինիս անկումից հետո՝ Ք.ա. 6-րդ դարում, ստեղծել իրենց պետությունը (Երվանդունյաց թագավորությունը):

Այս տեսակետը, որը չի հիմնվում փաստերի ամբողջության վրա, ուստի և չի կարող ճշմարտացի լինել մի շարք պատճառներով, դարձավ և մինչ օրս մնում է քաղաքական շահարկումների առարկա (հատկապես պատմության թուրք կեղծարարների կողմից):



Հաջորդը հայերի ծագման վերաբերյալ հաբեթական կամ ասիանիկ տեսությունն էր, համաձայն որի՝ հայերենը ոչ հնդեվրոպական, խառնածին լեզու է, հետևաբար հայերը չեն մասնակցել հնդեվրոպական գաղթին և առաջացել են տեղաբնիկ ասիական (այդտեղից էլ «ասիանիկ» անվանումը) ցեղերից:

Այս տեսությունը չէր կարող դիմանալ լուրջ գիտական քննության և այժմ էլ մերժվում է, քանի որ չեն լինում խառնածին լեզուներ. երկու լեզուների ձուլումից չի առաջանում երրորդը:

Ժամանակին Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներին, այսպես ասած, «իրավական ձևակերպում» տալու նպատակով հույն հեղինակները շրջանառության մեջ դրեցին պարսիկների, մարերի և հայերի «հունական ծագման» վերաբերյալ տեսակետը:

Հայերի ծագման վերաբերյալ հունական ավանդությունը.

Հայերի ծագման հունական զրույցը կապվում է Հին Հունաստանում սիրված ու տարածված մի վիպաշարի՝ արգոնավորդների մասին ավանդության հետ:

Վերջինիս համաձայն՝ հայերի նախահայրը և Հայաստանի անվանադիրը Արմենոս Թեսալացին էր, որը Յասոնի և մյուս արգոնավորդների հետ մասնակցել է Ոսկե գեղմի համար կատարված նավարկությանը, հաստատվել Հայաստանում, որն էլ նրա անվամբ կոչվել է «Արմենիա»:

Ավանդությունը հաղորդում է, որ նրա նախնական բնակավայրը եղել է Թեսալիայի (մարզ Հունաստանում) Արմենիոն քաղաքը:



Մովսես Խորենացի

Դատելով փաստերից՝ հայերի ծագման մասին զրույցը ստեղծվել և արգոնավորդների ավանդությանն է զուգորդվել Մակեդոնացու արշավանքների ժամանակաշրջանում:

Ամենայն հավանականությամբ դա ունեցել է նույնպիսի քաղաքական միտում, ինչպիսիք են պարսիկների և մարերի (մեդացիներ) հունական ծագման մասին զրույցները:

Պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ որևէ նվաճող իր ծրագրերն իրականացնելուն «իրավական» տեսք տալու համար նախապես ստեղծում էր կեղծ հիմնավորումներ: Ուստի և այս ավանդության առանցքը կազմող տեղեկությունը հայերի թեսալական (հունական) ծագման վերաբերյալ չի կարող համարվել արժանահավատ:

Հայերի արևմտյան (փռյուգիական) ծագման մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել հույն հեղինակներ Հերոդոտոսի (Ք.ա. 5-րդ դ.), Եվդոքսոսի (Ք.ա. 4-րդ դ.) և այլոց երկերում: Այդ տեղեկություններում բերված փաստարկները վերաբերում են փռյուգիացի և հայ զինվորների նման հագնված լինելուն և հայերենում փռյուգերեն շատ բառերի առկայությանը: Դրանցով, իհարկե, չի կարող բացատրվել մի ժողովրդի մյուսից ծագած լինելը. փռյուգիացիներն ու հայերը ազգակից են (ունեն ընդհանուր՝ հնդեվրոպական, ծագում), և նրանց լեզուներում նույն (կամ նույնարմատ) բառերի առկայությունը, առավել ևս զինվորների միանման հագուստ կրելը պետք է օրինաչափ համարել[1]:

Այս տեսակետը, սակայն, որոշ ժամանակ անց իրեն սպառեց, ուստի հայերի «եկվորության» նոր տեսակետ մշակեցին՝ ասելով, որ «հայերը Հայկական լեռնաշխարհ են եկել Ք. ա. 7-6-րդ դարերում, բայց Ք. ա. 9-րդ դարի Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում հիշատակվում են բազմաթիվ հայանուն աստվածներ՝ ընդ որում, յուրահատուկ հայկական անուններով: Հնդեվրոպական մայր լեզվից դուստր լեզուներին անցնելիս յուրաքանչյուր լեզու դրսևորում է իր առանձնահատկությունները:

Հնդեվրոպական նախալեզվից հայկականացված այս ձևերը գոյություն ունեն միայն հայերենում: Բացառվում է երկրորդ բացատրությունը:

Այստեղ ոչ միայն անհեթեթ է այն տեսակետը, թե հայերը Հայկական լեռնաշխարհ են եկել Ք. ա. 7-6-րդ դարերում, այլև պարզորոշ զգացվում է միտումը: Այդ «տեսակետը» պաշտպանող հեղինակներին ձեռնտու էր, որ հայերը լինեին եկվոր»[2]:

Նպատակը, իհարկե, քաղաքական է, որն ամենից շատ ձեռնտու է Թուրքիային և որն այս հարցում կարծես ունի նաև ԱՄՆ-ի «հայագետների» աջակցությունը. շատ հանրահայտ «Հայ ժողովուրդը հնից մինչև նոր ժամանակները» երկհատորյակում, որը խմբագրել է Ռիչարդ Հովհաննիսյանը, հայ ժողովրդի կազմավորման վաղ շրջանը և Ուրարտուի պատմությունը գրել է հրեա Ջեյմս Ռասելը (Հարվարդի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչն է): Այդ ամբողջ բաժինը լեցուն է անհեթեթ սխալներով (Բելի հակառակորդը Վահագնն է, Էրեբունի ամրոցը հիմնադրել է Արգիշտի Բ-ն և այլն): Այնտեղ իշխողը ուղղակիորեն հայերի եկվորության նոր «տեսակետն» է: Այսինքն՝ փնտրեցին, գտան մի հարմար շրջան, որտեղ կարելի է հայերին եկվոր համարել, իսկ դա Ք. ա. 13-րդ դարի վերջը և 12-րդի սկիզբն էր, երբ Բալկանների տարածքից դեպի Առաջավոր Ասիա ներխուժեցին մի շարք կիսավայրենի ցեղեր (եգիպտական աղբյուրներում նրանց անվանում են «ծովի ժողովուրդներ»): Հայանուն ոչ մի տարր չի նկատվում այնտեղ: Հայերին կապեցին մուշքերի հետ: Այդ կապը «բացատրեցին» մուշք բառի վերջին ք տառով, որը գրաբարյան հոգնակիակերտն է: Այս տրամաբանությամբ ք-ով ավարտվող բոլոր տեղանունները և ցեղանունները պետք է հայկական անվանել…»[3]:

Հունական ավանդությանը հակադրվում են արաբական և վրացական ավանդությունները:

Վրացական ավանդությունը ստեղծվել է հայկականի ազդեցությամբ և գրի է առնվել 9-11-րդ դարերի վրաց հեղինակների կողմից (Անանուն պատմիչ, Լեոնտի Մրովելի և այլք): Ըստ վրացական ավանդության՝ Թարգամոսի (Թորգոմի) ութ որդիներից առաջացան մի շարք ժողովուրդներ. ավագ որդի Հայոսից՝ հայերը, Քարթլոսից՝ վրացիները, մյուս որդիներից՝ կովկասյան մի շարք ժողովուրդներ:

Այն որոշակիորեն կրում է իր ստեղծման ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակի կնիքը, երբ հայոց Բագրատունի արքաների ազդեցությունը տարածված էր այսրկովկասյան երկրներում:

Դրանով էլ պետք է բացատրել ութ եղբայրներից Հայոսի ավագը լինելու հանգամանքը:

Հայկ Նահապետի արձանը

Արաբական ավանդությունը ևս հայերի ծագումը կապում է ջրհեղեղից հետո ազգերի՝ Նոյի որդիներից առաջացած լինելու պատկերացման հետ: Այն առավել հանգամանորեն շարադրված է 12-13-րդ դարերի արաբ մատենագիրներ Յակուտիի և Դիմաշկիի երկերում: Ըստ այդ ավանդության՝ Նոյի որդի Յաֆիսից (Հաբեթ) ծնվեց Ավմարը, ապա նրա թոռ Լանթան (Թորգոմ), որի որդին էր Արմինին (հայերի նախնին), և որի եղբոր որդիներից սերում են աղվաններն ու վրացիները: Այս ավանդությունը ազգակից է համարում հայերին, հույներին, սլավոններին, ֆրանկներին և իրանական ցեղերին. հետաքրքիր է, որ այն պահպանել է ազգակից հնդեվրոպական ժողովուրդների միասնության շրջանից եկող հիշողությունը:

Դե, իսկ հին եբրայական ավանդությունը գրի է առնվել Հովսեպոս Փլավիոսի (Ք.ա. 1-ին - Ք.հ. 1-ին դդ.) «Հրեական հնախոսության» էջերում: Ավանդության համաձայն՝ «Ուրոսը հաստատեց Հայաստանը»:

Հայագիտության մեջ այդ տեղեկության սկզբնաղբյուրի և մեկնաբանության վերաբերյալ չկա միասնական տեսակետ: Կա կարծիք, որ այստեղ խոսքը Արամ նահապետի որդի Արա Գեղեցիկի մասին է: Ըստ մեկ այլ տեսակետի՝ Ուրոսը կարող է լինել Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում հիշատակվող արքա «Ռուսա Էրիմենայի որդին»: Ասորեստանյան սեպագիր աղբյուրներում «Ռուսա» անունը հիշատակվում է նաև «Ուրսա» արբերակով, իսկ «Էրիմենա» անունը կարող է մեկնաբանվել և՛ որպես անձնանուն, և՛ որպես ցեղանուն[4]:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի ծագման մասին հայկական աղբյուրներին կամ ավանդությանը, ապա այն մեզ է հասել պատմահայր Խորենացու կողմից. «Աստվածներից առաջիններն ահեղ էին և երևելի և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի ու բազմամարդության սկիզբ: Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը... Սրանցից մեկն էր և Հապետոսթյան Հայկը…. իսկ մեր աշխարհը, մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք…»[5]:

Քրիստոնեական ժամանակաշրջանում հայկական ավանդությունը ենթարկվում է ձևափոխության՝ հարմարեցվելով Աստվածաշնչի պատկերացումներին, որոնց համաձայն՝ համաշխարհային ջրհեղեղից հետո ողջ մարդկությունը սկզբնավորվեց Նոյի երեք որդիներից (Հաբեթ, Քամ և Սեմ):

Ըստ ավանդության՝ նորացված, քրիստոնեացված տարբերակի Հայկ նահապետը համարվում է Հաբեթի ժառանգներից Թորգոմ նահապետի որդին. այդտեղից էլ՝ միջնադարյան գրավոր աղբյուրներում Հայաստանին տրված «Թորգոմա տուն» և հայերին տրված «Թորգոմյան ազգ» անվանումները:

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, թե՛ հայկական, թե՛ վրացական, թե՛ արաբական ավանդությունները հերքում են «հայերի եկվորության» տեսությունը, բայց այս աղբյուրներից բացի՝ բազմաթիվ գիտնականներ, ինչպես նաև ժամանակակից գենետիկական հետազոտություններ փաստել են, որ հայ ժողովուրդը իր անունը կրող լեռնաշխարհի բնիկն է, ասել է թե՝ հայ ժողովրդի ծագումն ու զարգացումը տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհում, որին հետագայում դարձյալ քաղաքական նպատակներով արհեստականորեն պետք է կպցնեին «Անատոլիական բարձրավանդակ» և «Հարավային Կովկաս» եզրույթները:

1980-ական թթ. հնդեվրոպական նախահայրենիքի տեղի հարցը որոշակիացավ: Այն Ք.ա. 5-4-րդ հազարամյակներում գտնվել է Առաջավոր Ասիայի հյուսիսում՝ Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելյան շրջաններում, Հյուսիսային Միջագետքում և Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում: Հերքվեց հայերի եկվորության հարցը: Հայ ժողովուրդը կազմավորվել է իր պատմական հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում[6]:

Հակառակ սրան՝ Հայաստանում 2023 թ. հրատարակված 7-րդ դասարանի «Հայոց պատմություն» դասագրքում հեղինակը, թեև ոչ բացահայտ, բայց առաջ է տանում «հայերի եկվորության տեսությունը» (այս մասին «Դրօշակի» 2023 թ. 12-րդ համարում արդեն խոսել ենք)՝ պնդելով. « …Ամենից վճռորոշ գաղթը կատարեց հոմո սապիենսը, որը սնունդ փնտրելու նպատակով մոտ 80.000 տարի առաջ Արևելյան Աֆրիկայից շարժվեց դեպի հյուսիս: Գաղթականները հասան Արևմտյան Ասիա, նաև Հայկական լեռնաշխարհ»[7],- շատ վարպետորեն «մոռանալով», որ մինչ այդ էլ Հայկական լեռնաշխարհը բնակեցված էր (այդ մասին են վկայում, ինչպես արդեն ասել ենք, Գուգարքի 1.8 միլիոն տարեկան բնակատեղին և Արցախի Հադրութի շրջանի Ազոխի քարանձավի 300.000 տարեկան թվագրվող մարդկային մնացորդները)[8]:

Հաշվի չառնելով այս ամենը և փաստորեն արտահայտելով Հայաստանի ղեկավարության պաշտոնա-



Հայկական լեռնաշխարհի քարտեզը

Պորտասար. Նեոլիթյան շրջանի հնավայր հայկական լեռնաշխարհում

կան տեսակետը՝ Ս. Հովհաննիսյանը հիշատակում է հայերի «բալկանյան ծագման» տեսությունը, իսկ պատմահայր Խորենացու տվյալները համարում է «առասպելական»:

«Հայերի եկվորության տեսությունը» հերքել և հերքում են ոչ միայն Աստվածաշունչն ու բազմաթիվ հայ գիտնականներ, այլ նաև օտարերկրյա բազմաթիվ ուսումնասիրողներ, մասնավորապես. «20-րդ դարի 80-ական թվականներից մինչ օրս հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության տեսությունը, որը կապվում է Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների հետ, վերարծարծեցին ոչ հայազգի մասնագետներ: Ժամանակին այդ մասին գրվել է, լույս են տեսել մենագրություններ: Հիշատակենք Վյաչեսլավ Իվանովի և Թամազ Գամկրելիձեի համահեղինակած «Հնդեվրոպացիները և հնդեվրոպական լեզուները» ստվարածավալ երկհատորյակը:

Անգլիացի Քոլին Ռեմֆրյուն, ռուս նշանավոր գիտնական Սերգեյ Տոկարևը և շատ ուրիշներ նորանոր փաստերով հիմնավորում են, որ հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելքում, Միջագետքի հյուսիսում և Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում:

Բնականաբար, նախահայրենիքի կենտրոնում գտնվելով՝ մենք մնացինք մեր հայրենիքում»[9]:

Թե՛ այս և թե՛ «հայերի եկվորության տեսությունը» մեր օրերում անհրաժեշտ էր ստուգել ժամանակակից գենետիկայի միջոցով, ինչն էլ արեցին հայ և արտասահմանցի հայագետները, որոնք հետազոտել են Բալկաններից և Հայկական լեռնաշխարհից ստացված հնագույն ԴՆԹ-ի նմուշները՝ նեոլիթից մինչև անտիկ դարաշրջան և համեմատել են այդ նմուշները նշյալ տարածաշրջանների այսօրվա բնակիչների ԴՆԹ-ի հետ: 2021 թ. դեկտեմբերի 22-ին հրապարակվեցին արդյունքները. «Ամբողջական գենոմային վերլուծության արդյունքում պարզվել է, որ հայկական գենոֆոնդն ունի ավելի քան 6000 տարվա շարունակական գենետիկական պատմություն: Այս պատկերն էականորեն տարբերվում է հարավարևմտյան Ասիայի՝ արտաքին գենետիկական զգալի ազդեցությունների ենթարկված այլ պոպուլյացիաների ժողովրդագրական պատմությունից:

Մի քանի հազարամյակների ընթացքում գենոֆոնդի կայունության բարձր մակարդակով հայերն առանձնանում են նույնիսկ Սարդինիայի բնակչությունից, որը երկար ժամանակ համարվում էր դասական՝ գենետիկական իզոլյատ նեոլիթից ընդհուպ մինչև բրոնզի դարի վերջը, այն դեպքում, երբ գրեթե ողջ մայրցամաքային Եվրոպան ենթարկվել է բազմաթիվ ներխուժումների օտարերկրացիների կողմից, որոնց գենետիկական ազդակները պահպանվել են մինչ օրս»[10]:

Այլ կերպ ասած՝ Հայկական լեռնաշխարհի վաղնջագույն շրջանի բնակիչների ԴՆԹ-ն և այսօրվա հայերի ԴՆԹ-ն նույնն են, ինչն էլ ապացուցում է, որ հայ ժողովուրդը սկզբնավորվել, կազմավորվել և զարգացել է Հայկական լեռնաշխարհում, այսինքն՝ բնիկ է:

Այս փաստերի համադրումից հետո բնական հարց է առաջանում. ինչ նպատակով է ՀՀ ԿԳՄՄՆ-ի պատվերով հրատարակվող դասագրքում ներառվել «հայերի եկվորության» տեսությունը՝ հաշվի չառնելով դրա վտանգավորությունը:

Մասնավորապես այս տեսությունը շատ ձեռնտու է պատմության կեղծարարությամբ աչքի ընկնող Թուրքիային և Ադրբեջանին, որոնք միլիոնավոր դոլարներ են ծախսում ապացուցելու համար, որ հայերը Հայաստանում եկվորներ են և այստեղ են հայտնվել միայն 15-16-րդ դարերում և յուրացրել «քրիստոնյա աղվանների մշակույթը»:

Մինչև «թավշյա հեղափոխությունը» հայկական պատմագիտությունը հիմնվում էր հայերի տեղաբնիկության ակնհայտ փաստերի վրա, և ըստ այդմ էլ կառուցվում էր պետական քաղաքականությունը: 2018 թ. «թավշյա հեղափոխությունից» հետո վերանայվեց նաև այս մոտեցումը, և հայկական պատմագիտության մեջ սկսեցին ակտիվություն ցուցաբերել թուրքական տեսակետները պաշտպանողները, հայոց պատմության դասագրքերի ու Հայկական լեռնաշխարհի քարտեզների աղավա-

ղումը Հայաստանի ներկայիս իշխանության կողմից դեռ ամենը չէր. օրեր առաջ Հայաստանի վարչապետի աթոռը զբաղեցնողը հայտարարեց, թե իբր մի շարք ուսուցիչներ իրեն առաջարկել են «Հայոց պատմություն» առարկայի անվանումը փոխել «Հայաստանի պատմություն» անվամբ[11]:

Այս ձևակերպումը բավականին վտանգավոր է, որովհետև «Հայոց պատմությունը» բավական լայն հասկացություն է և իր մեջ ներառում է ոչ միայն Հայկական լեռնաշխարհի վաղնջագույն՝ նախապետական, ժամանակաշրջանի, պետականությունների, Մեծ և Փոքր Հայքերի, այլ նաև հայկական մշակույթի, Կապադովկիայի, Կիլիկիայի, պետականության բացակայության պայմաններում հայ առաքելական եկեղեցու գործունեության, հայկական գաղթօջախների ու Սփյուռքի, Հայոց ցեղասպանության և Արցախի պետականության պատմությունը, իսկ «Հայաստանի պատմությունը» ունի ընդգծված նեղ իմաստ: Քանի որ ըստ Հայաստանի վարչապետի աթոռը զբաղեցնողի՝ Հայաստան է միայն այն 29. 800 քառ կմ-ը, որը Քեմալ-Լենին ապօրինության հետևանքով է փոքրացվել, ուրեմն «Հայաստանի պատմությունն» էլ միայն 29. 800 քառ կմ-ի պատմություն է, ասել է թե՝ Արցախն ու Նախիջևանը, Վանն ու Կիլիկիան, Սիփանն ու Մասիսը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն ու Բեյրութի Հայկազյան համալսարանը, Մադրասի խմբակն ու Վենետիկի Մխիթարյան միաբանությունը հայերի հետ որևէ աղերս չունեն, իսկ 29. 800 քառ կմ-ի պատմությունը, եթե անգամ սկսեն էլ 1918-ից, ապա էլի՛ խեղաթյուրված է, քանզի Ադրբեջանի շահերից ելնելով՝ ամենայն հավանականությամբ Տիգրանաշենը, Սյունիքի, Տավուշի ու Գեղարքունիքի մի շարք բնակավայրեր ներկայացվելու են որպես «անկլավներ», իսկ Թուրքիայի ու Ադրբեջանի համար թշնամական համարվող կերպարները՝ Արամ Մանուկյանը, Դրոն, Ռուբեն Տեր-Մինասյանը, Մ. Սիլիկյանը, որոնք կանգնած են Հայաստանի Հանրապետության ստեղծման ակունքներում, Զանգեզուրը պահած Նժդեհն ու ժողովրդական հերոս Անդրանիկը կամ կհեռացվեն հայոց պատմությունից, կամ էլ խորհրդային տարիների օրինակով կներկայացվեն բացասական լույսի ներքո:

Արցախը վերադարձնելը ավելի հեշտ է լինելու, քան աղճատված պատմական հիշողությունը վերականգնելը: Ավելին, նաև մեր ամբողջական պատմության ընկալմամբ ենք զորանալու՝ Արցախը և ոչ միայն Արցախը ետ բերելու համար[12]:

Հայ ժողովրդի պատմական հիշողությունը ջնջելու միտում ունի «Հայոց պատմությունը» «Հայաստանի պատմություն» վերանվանելը, իսկ հայ ժողովրդի պատմական հիշողությունը այն զենքն է, որով դարեր շարունակ հայությունը պայքարել է բոլոր տեսակի մարտահրավերների դեմ և հասել 21-րդ դար, հետևաբար Հայաստանի ու հայության ֆիզիկական և հոգևոր անվտանգությանը սպառնացող իշխանության ձեռքը հնարավորինս արագ բռնել է պետք, որպեսզի Հայաստանում թուրքական շահերը սպասարկողները միայն 13-րդ դարում մեր տարածաշրջանում հայտնված թրքախոսներին մեր հայրենիքի տերը դարձնելու համար պատմահայր Խորենացուն՝ «պատմակեղծարար», հայերին էլ «եկվոր» չդարձնեն՝ նպաստելով պանթյուրքիստական քաղաքականության իրականացմանը:

Հայության պատմական հիշողությունը, ինչպես նշեցինք, ամենազորեղ զենքն է թշնամու դեմ, այդ հիշողությունը անաղճատ պահելը՝ օրվա հրամայական, լինել-չլինելու կենսական խնդիր, իսկ լինելու համար Հայաստանը պետք է ազատագրվի թուրքական շահերն սպասարկող ապազգայինների իշխանությունից: Ազգային, քաղաքական, զինվորական ու մտավորական շրջանակները այս ուղղությամբ հսկայական աշխատանք ունեն կատարելու: ■

Օգտագործված գրականություն

ա) Գրականություն

1. Խորենացի Մ., Հայոց պատմություն., Եր., 1981
2. Հովհաննիսյան Ս., Հայոց պատմություն 7, Եր., 2023
3. Պետրոսյան Ա., Հայոց ազգածագման հարցեր, Եր., 2006
4. Гамкрелидзе Т., Иванов В., «Индоевропейский язык и индоевропейцы», т. II, Тбилиси, 1984

բ) Սամուլ

1. «Դրօշակ», 2023., թիվ 12
2. Петросян А., Этногенез (Армяне. Серия «Народы и культуры», М., 2012

գ) Համացանցի նյութեր

1. http://www.historyofarmenia-am.armin.am (մուտք՝ 1.02.2024)
2. https://www.hayagitaran.am/2014/02/id-3967.html (մուտք՝ 1.02.2024)
3. https://escs.am/am/news/11092 (մուտք՝ 1.02.2024)
4. https://168.am/2024/01/14/1982844.htm (մուտք՝ 1.02.2024)
5. https://yerkir.am/hy/article/2024/01/23/24041 (մուտք՝ 1.02.2024)

Հղում

[1] http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_hay_joxovrdi_tsagumn_u_kazmavorumy (մուտք՝ 1.02.2024):

[2] https://www.hayagitaran.am/2014/02/id-3967.html (մուտք՝ 1.02.2024):

[3] Նույն տեղում:

[4] http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_hay_joxovrdi_tsagumn_u_kazmavorumy (մուտք՝ 1.02.2024):

[5] Խորենացի Մ., Հայոց պատմություն., Եր., 1981., էջ 109-113:

[6] Гамкрелидзе Т., Иванов В., «Индоевропейский язык и индоевропейцы», т. II, Тбилиси, 1984, Պետրոսյան Ա., Հայոց ազգածագման հարցեր, Եր., 2006, Петросян А., Этногенез (Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, с. 42-49:

[7] Հովհաննիսյան Ս., Հայոց պատմություն 7, Եր., 2023., էջ 21:

[8] Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասագրքերը թուրքական շահերի պաշտպան., «Դրօշակ», 2023., թիվ 12., էջ 28:

[9] https://www.hayagitaran.am/2014/02/id-3967.html:

[10] https://escs.am/am/news/11092:

[11] https://168.am/2024/01/14/1982844.htm:

[12] https://yerkir.am/hy/article/2024/01/23/24041:

Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը

Կարօ Սասունի
Ազգային ազատագրական պայքարի նշանաւոր դեմքերեն մեկը: 1920 թ. նշանակուած է Ալեքսանդրապոլի նահանգապետ, ընտրուած է ՀՀ խորհրդարանի անդամ, եղած է 1921 թ. Փետրուարեան ապստամբութեան ղեկավարներեն մեկը: Պատմագիտական և գեղարուեստական գրքերու հեղինակ:

Հինգ տարի անցած է այն օրէն, երբ հայ աշխատաւոր ժողովուրդը մէկ մարդու պէս ոտքի կանգնեցաւ եւ տապալեց բոլշեւիկեան բռնակալութիւնը:

Փետրուարեան ապստամբութիւնը ոչ միայն խորտակեց օրուայ ոճրագործ իշխանութիւնը, այլեւ հիմնապէս յեղաշրջեց Հայաստանի ընկերային-քաղաքական մտածողութիւնը:

Հինգ տարի յետոյ կարելի է աւելի պաղարիւնութեամբ անդրադառնալ Փետր. 18-ի յեղափոխութեան եւ բնորոշել շարժումը:

Հայ ժողովուրդը փոթորիկներու մէջ կը հիմնէր իր անկախութիւնը: Դէպքերը զինք կծկեր էին Սեւանայ լճին ափը ու երբ կը տարածուէր դէպի իր բնական սահմանները եւ հետզհետէ ազգային պետական կազմակերպութիւն կը դառնար, Ռուսաստանը եւ Տաճկաստանը իրարու հետ դաշնակցած՝ իրենց հարուածներու տակ կ'առնէին Հայաստանը:

Հայ ժողովուրդի քաղաքական հակումները եւ կորովը փորձութեան կ'ենթակուէին մայիսեան խռովութեան օրերուն: Հ. Յ. Դաշնակցութիւնը մինչեւ 1920 Մայիս եղած էր վերին աստիճանի բարեացակամ հանդէպ բոլոր ընդդիմադիր կուսակցութիւններուն, ինչպէս նաեւ բոլշեւիկներու: Բայց մայիսեան խռովութիւնները եւ թուրք-թաթարական շրջաններու ապստամբութիւնները ուղղուած էին Հայաստանի Հանրապետութեան գոյութեան դէմ ու կը հարկադրէին մեր կուսակցութիւնը դառնալ խիստ եւ թոյլ չտալ, որ ընդդիմադիր տարրերը թուրք ապստամբ շրջաններու հետ ձեռք ձեռքի տապալեն նորակազմ հանրապետութիւնը: Այս շարժման ընթացքին արեւմտահայութիւնը կուռ շարքերով եւ յանդուգն ցասումով հրապարակ եկաւ՝ հայրենիքի անկախութիւնը պաշտպանելու: Ապստամբութիւնը զսպուեցաւ, եւ մեր զօրքերը զօրաւոր ճակատ մը կազմեցին Դիլիջան-Ղազախի շրջանի մէջ՝ դիմադրելով ռուս եւ ադրբէյջանական զօրքերուն:

Ազգային պետութիւն մը կազմելու եւ անկախօրէն դէպի հայկական վերածնունդը դիմելու ձգտումը դեռ նոր կ'ամրապնդուէր, երբ Հայաստան պարտուեցաւ թրքական պատերազմին մէջ հարաւի եւ հիւսիսի գերազանց ուժերու ճնշման տակ: Այդ խոշոր հարուածին հետեւանքով իր ազգային-քաղաքական դաւանանքն ալ անկախ ապրելու ձգտումը մեծապէս պարտութեան կը մատնուէր: Այս կացութիւնը կը ստիպէր մեզ կամովին հրաժարիլ իշխանութենէ 1920 Դեկտ. 2-ին:

Ռուսաստանը կուգար:

Կարօ Սասունի

Հայաստանը բոլորովին տկարացած էր: Թուրքերը կեցեր էին Ախուրեանի եւ Արաքսի ափը: Ռուսական «օրիանտասիոնը» փրկութեան նոր ճանապարհ մը կը համարուէր:

Միայն Դաշնակցութեան բազմաճիւղ կազմակերպութեան գլխաւոր կորիզներն էին, որ ազգային-քաղաքական հիմնական ուղեգիծ մը ունէին, իսկ մնացած մտաւորականութիւնն ու լայն զանգուածները ֆիզիքական վտանգի ծանրութեան տակ կքած՝ պատրաստ էին ենթարկուելու որեւէ ուժի, պայմանաւ, որ այդ ուժը թրքականը չըլլար:

Այդ ընդհանուր ժխորին մէջ հրապարակ դրուած էր թրքական վտանգը եւ ռուսական հովանին՝ իր երեւելի եւ աներեւոյթ բարիքներով, որոնք խոստացուած էին Մոսկուայի գործակալներուն կողմէ:

Ռուսաստանը յաղթեց: Հայ ժողովուրդը սիրտը կոտոր, լռելեայն ենթարկուեցաւ ռուսական ուժին:

Այս մոլոր մթնոլորտին մէջ էր, որ հայ բոլշեւիկները եկան՝ կառավարելու Հայաստանը՝ մեծապէս երախտապարտ մնալով թուրք փաշաներուն եւ մանաւանդ չավուշներուն:

Ալագեազի հրամանատարական կազմը, նստածներուն կեդրոնը՝ Կարօ Սասունին, Փետրուար 1921 թ.

Խիստ ծանր քարի մը պէս բոլշեւիկեան իշխանութիւնը նստաւ հայ ժողովուրդի կրծքին: Լուռ ու անճար ժողովուրդը մտածեց ու վերագնահատեց: Երեք ամիսներու խելառ ու հակամարդկային տիրապետութիւն փութացուց այդ վերագնահատման ընթացքը: Ժողովուրդը նորէն փրկութեան ճանապարհ մը որոնեց: Ու ցնցուեցաւ:

Պայթեցաւ փետրուարեան ապստամբութիւնը:

Այդ շարժումը եկաւ՝ վերջնական կաղապարում տալու քաղաքական համոզումներուն եւ սպասելիքներուն: Փետրուարի 18-ը դարձաւ սոյն քաղաքական շրջակէտը, որ որոշակի ցցուեցաւ երկու իրարամերժ քաղաքական հոսանքներու միջեւ եւ եղաւ հիմնական ելակէտը Դաշնակցութեան քաղաքական գործունէութեան:

Փետրուար 18-ը հայ ժողովուրդի աշխատաւորական յեղափոխութիւնն է: Եւ իրօ՛ք, մէկ կողմը կանգնած էին հայ աշխատաւորական զանգուածները՝ երէկուայ բովէն անցած ու թրծուած, որոնք Հ. Յ. Դաշնակցութեան գիւղական կազմակերպութիւններու շուրջը կը համախմբուէին, իսկ միւս կողմը Ադրբէյջանէն եւ Ռուսաստանէն եկած հայ, ռուս եւ թուրք բոլշեւիկ գործակալներն էին, որոնց կը միանային Երեւանի եւ Ալէքսանդրապօլի մէջ արգելափակուած բոլշեւիկները: Այս նոր իշխանաւորները՝ իրարու հակամարտ ընկերային սկզբունքներով, բայց գործակից կողոպուտի ու մարդասպանութեան, քանդումի ու մատնութեան մէջ, կուգային դուրսէն եւ դահիճի մը լրբութեամբ, մտրակի ու ատրճանակի հարուածներով կը սկսէին կառավարել երկիրը:

Քիչ մը աչք պտտցուցէք այդ օրերու անցքերուն վրայ եւ պիտի տեսնէք, թէ ինչպէ՜ս գիւղական ճարպիկ կուլակը, երէկուայ ցարական լրտեսը (որ սմքած էր ռուսական յեղափոխութիւնէն յետոյ), շահադէտը, պետական զեղծարար պաշտօնեաները, «մաւզէրիստը» (ոչ՛ յեղափոխական և ոչ՛ ալ ահաբեկիչ, այլ պարզապէս շանթաժիստ, վախկոտ, բայց ատրճանակը միշտ կողքին) եւ քրէական յանցանքով հետապնդուած անհատները մէկ մարդու պէս սրբազան դաշնակցութեամբ մը գործակցեցան բոլշեւիկեան խուժանավարներուն: Հայ աշխատաւորութիւնը՝ պարտուած թրքական պատերազմէն, արիւնաքամ ու ուժասպառ եղած էր: Դաշնակցութեան խաղաղ տեղատուութեամբ ղեկավարներու մէկ մասը երկրէն դուրս ելած էր, իսկ միւս մասը ձերբակալուած եւ բանտարկուած էր Երեւանի, Էջմիածնի, Աշտարակի, Ղամարլուի, Բայազիտի եւ Ախտայի բանտերուն մէջ (այս հաշուին մէջ չեն մտներ Ղարաքիլիսէի եւ Դիլիճանի բանտարկեալները, զորս Փետր. 18-ին կարելի չեղաւ ազատել): Երեւանի մէջ եւ լեռները կը մնային մատի վրայ հաշուած քանակի մը գործիչներ: Թէեւ Դաշնակցութեան ղեկավար մարմիններու անդամներն ու բոլոր գործօն տարրերը բանտարկուած էին, սակայն Դաշնակցութեան ողնաշարը, աշխատաւորական յեղափոխական զանգուածը կը մնար: Գիւղին մէջ հնազանդ ու լուծի ենթակայ՝ իր վախի աչքը ուղղած դէպի թրքական վտանգը, իսկ յոյսի աչքը՝ դէպի նոր եկող Ռուսաստանը՝ ան կը սպասէր ու կը տոկար:

Երկրորդ շարքը նստածներուն մէջ աջէն երկրորդը՝ Երեւան արշաւած ապստամբական ուժերի հրամանատար խմբապետ Մարտիրոսը. Փետրուար 1921 թ.

Այս աշխատաւորական զանգուածը իր աչքով տեսաւ ու համոզուեցաւ, որ Ռուսաստանը ոչ միայն իր սպասած բարիքները չէ բերած, կուգայ ոչ թէ իբրեւ թշնամի թուրքին, այլ իբրեւ անոր բարեկամն ու զինակիցը: Իր համբերութեան բաժակը լեցաւ, երբ տեսաւ, թէ բոլշեւիկեան նոր իշխանութիւնը ո՛չ ազգային, ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական եւ ո՛չ ալ դասակարգային օգուտ չունի: Իրօ՛ք, հակայեղափոխութիւն մըն էր եղածը, որ կուգար ոչնչացնել ռուսական փետրուարեան յեղափոխութեան եւ Հայաստանի անկախութեան շրջանի բոլոր ազգային եւ դասակարգային ազատութիւններն ու նուաճումները խայտաբղէտ խմբակի մը կողմէ՝ աջակցութեամբ Ադրբէյջանի, Նախիջեւանի եւ Թուրքիոյ բէգէրուն եւ փաշաներուն: Այդ հարուածին կեդրոնական նպատակն էր կոտրել կազմակերպուած հայ աշխատաւորութեան մէջքը, ստրկացնել զայն անշնչացնելու աստիճան:

Քսան եւ չորս ժամուայ ցնցող հարուածով մը կը տապալէր բոլշեւիկեան բռնակալութիւնը, եւ ճարպիկ ղեկավարները՝ իրենց բոլոր գործակիցներով եւ ռուսական գունդերով կ'ապաստանէին Բօիւք-Վէտիի եւ Նախիջեւանի խաներուն քով, իրենց արժանաւոր դաշնակիցներուն մօտ:

Ապստամբութիւնը ե՛ւ ժողովրդական էր, ե՛ւ դաշնակցական-կուսակցական:

Ժողովրդական էր այն պատճառով, որ ամբողջ աշխատաւորութիւնը մէկէն ցնցուեցաւ, ինք բաղձաց եւ ինքը զոհեց այդ յեղափոխութեան համար: Երբ անցքերը իրարու քով դասաւորէք, կը տեսնէք, թէ ինչպէս Նոր-Բայազիտի շրջանը եւ Դարալագյազը կ'ապստամբին նոյն օրերուն՝ առանց լուր ունենալու Երեւանէն եւ Էջմիածինէն: Նախ, որ յարաբերութիւնները խիստ դժուար էին. գաղտնապահութիւնը կը ստիպէր միայն քիչերուն հետ խօսիլ եւ զգուշանալ գրաւոր հրահանգներէ, իսկ բերանացի պրոպականտը անհնարին էր, սակայն ժողովուրդը կազմակերպուած բանակի մը պէս պատրաստ էր շարժելու: Ինք իր վճիռը տուած էր:

Դաշնակցական շարժում էր, անոր համար, որ դաշնակցական մէկ-երկու նորակազմ մարմիններ կային, որոնք մէկը միւսին օղակուած՝ կազմակերպած աշխատաւորութեան հետ էին, շարժումները կը ղեկավարէին, կարգ ու կանոնը կը պաշտպանէին եւ ժողովրդի մտածումներն ու բաղձանքները ընդհանուր յայտարարի մը կը բերէին: Թէեւ Բիւրօն գոյութիւն չունէր, կ. կոմիտէները ցրուած էին, բայց Դաշնակցութեան յեղափոխական ոգին կուռ էր, պատասխանատուութեան գիտակցութիւնը՝ խոր:

Ժողովրդական ու յեղափոխական այդ ապստամբութեան եւ մանաւանդ յետագայ քառասունեւհինգօրեայ դիմադրութեան ատեն մեզ հետ էին ս. դէմօկրատները, ժողովրդական, թէ պահպանողական այլ հոսանքներու պատկանողները: Մեզ դէմ կը մնային բոլշեւիկներն ու թիւրք-թաթարական տարրերը:

Երբ քննութեան առնենք Հայաստանի եւ Լեռնահայաստանի հակաբոլշեւիկեան շարժումները, անմիջապէս կը տեսնենք Դաշնակցութեան կորովը եւ հայ ժողովուրդի անվերապահ համակրանքը հանդէպ մեր կուսակցութեան յեղափոխական ձեռնարկներուն:

Հայաստանի մէջ տեղի ունեցած ապստամբութիւններն ու կռիւները քաղաքացիական կռուի հանգամանք չունէին: Իրենց էութեամբ այդ կռիւները ուղղուած էին օտար տիրապետութեան դէմ:

1920 Մայիսին, երբ բոլշեւիկները խռովութիւններ յարուցին ամբողջ Հայաստանի մէջ, տեսանք, թէ ինչպէս ռուսական կարմիր դրօշը եկաւ, իր տիրապետութիւնը տարածեց Ղարաբաղի եւ Զանգեզուրի վերեւ՝ փրկելով Նախիջեւանի հակահայ խաները: Հայ լեռնական ժողովուրդը տեղի տուաւ՝ սպասելով մեծն Ռուսաստանի խոստացած հրաշքներուն եւ եկող ուժին մեջ տեսնելով դաշնակից մը հանդեպ թուրք-թաթարական տարրերուն:

Հայաստանը կրցած էր զսպել բոլշեւիկեան ապստամբութիւնը եւ հաստատ կը մնար իր անկախութեան տեսակէտին վրայ: Բայց Ռուսաստանի դաշնակից Թուրքիան այս անգամ կը հարուածէր մեզ՝ տեսնելով, որ Լեռնահայաստանը արդէն գրաւուած է Ռուսաստանէն ու Ադրբէյջանէն, իսկ նորակազմ Հայաստանը տկար է: Այս հարուածէն յետոյ հայ ժողովուրդը մեծ սպառնալիքներով ընդունեց ռուսական ուժը՝ միշտ նկատի ունենալով իր ֆիզիքական եւ քաղաքական գոյութիւնը:

Հայ ժողովուրդն ու մտաւորականութիւնը իրենց աչքերով տեսան նոր Ռուսաստանը, չափեցին զայն տնտեսական եւ քաղաքական տեսակէտով, մանաւանդ վերջնական պատասխանը ստացան այն յոյսին, զոր դրած էին ռուսին վրայ՝ թրքական վտանգը վանելու համար: Լեռնահայաստանը, որ միշտ անկախ կը մնար, մէկ մարդու պէս ոտքի կանգնեցաւ՝ դիմադրելու բոլշեւիկեան արշաւանքին: Իսկ Հայաստանի մէջ երեք ամիսը բաւ եղաւ, որ ժողովուրդը իր վերագնահատումը կատարէր եւ փետրուարեան փառաւոր ապստամբութեամբ իր քաղաքական դաւանանքը հրապարակէր կտրուկ եւ որոշ: Հայ ժողովուրդը անձնական դառն փորձով, երկար տատանումներէ յետոյ, պայքարով եւ յեղափոխութեամբ կը ճշդէր իր քաղաքական ուղին: Կը դադրէին Ռուսաստանի վրայ դրուած յոյսերը եւ քաղաքական վառ երազները: Ռուսական «օրիանտասիոնը» վերջնական հարուած կը ստանար Փետրուար 18-ով:

Այլեւս բոլորն ալ համոզուեցան, թէ բոլշեւիկեան Ռուսաստանը՝ սերտօրէն դաշնակցած թուրք պետութեան, հայուն համար թուրքին թշնամութիւն չպիտի ընէ: Իսկ հայ ժողովրդի հողային ամբողջութիւնը, ցիր ու ցան հայութեան կեդրոնացումը, Տաճկահայաստանի եւ Ռուսահայաստանի միացումը եւ ազգային պետութեան մը ստեղծումը կարելի է միայն՝ այսօրուայ աշխարհակալ Թուրքիոյ դէմ շարժելով: Դէպքերը կը ցուցանեն, թէ բոլշեւիկեան Ռուսաստանը երբէք չպիտի թշնամանայ քեմալական Թուրքիոյ հետ՝ հայ ժողովրդի կեանքի ու մահուան խնդիրը լուծելու համար: Բոլշեւիկեան Ռուսաստանը կրնայ միշտ ալ իր մէջ սնուցանել ամբողջ Թուրքիոյ կցումը եւ խորհրդայնացումը, բայց այդ չերթար հայկական բարձրաւանդակի վրայով: Ամենայն հաւանականութեամբ խորհրդային Թուրքիա մը՝ միացած բոլշեւիկեան Ռուսաստանին, պիտի դառնայ աւելի վտանգաւոր մեզ՝ հայերուս՝ իր թուրանական ծրագրով, քան այժմու կղզիացած վիճակով Թուրքիան: Հանդուրժելը, վար ու ցանքով պարապիլը եւ կուշտ փոր մը հաց ուտելը ազգի մը ապրելու եւ վերածնունդի ճանապարհը չեն, այլ ֆիզիքական գոյութեան պահանջը: Հայ ժողովուրդը՝ ինքնամփոփուած, իր ներքին ուժերու խտացման ու դասաւորութեան մէջ կը գտնէ իր փրկութեան ճանապարհը: Կեանքի դառն փորձերը իրեն սորվեցուցին, որ մէծ ազգերն ու դէպքերը փոքր ժողովրդի մը վրայէն կրնան անցնիլ, ու այդ ժողովուրդը կամ կ՚ընկճուի եւ կա՛մ իր վերածնունդի պատեհութիւնը կը կորսնցնէ, եթէ ներուժ կազմակերպութիւն մը չունի: Իսկ եթէ քաղաքական անցքերը՝ հյուսիսէն, թէ արեւմուտքէն, մեզի նպաստաւոր դասաւորութիւն մը ստանան, աւելի՛ լաւ:

Փետրուարեան ապստամբութեան խելահեղ թափը, ժողովուրդի անհուն հրճուանքը կարելի է բացատրել անկախ պետութեան, ազատ հայրենիք ունենալու բուռն բաղձանքով: Ազգային անկախութեան աղաղակն էր, որ կը պոռթկար փետրուարեան ցնցումներուն մէջ: Անշուշտ, մէծ գործ էր երկու հազարէ աւելի մտաւորական եւ զինուորական գործիչներու ազատումը, քաղաքացիական ազատութեան վերահաստատումը, բոլշեւիկեան աւարառուներու վտարումը: Բայց այդ բոլորէն վեր կը խօսէր քաղաքական խոր գիտակցութիւնը՝ վերականգնել կորսուած անկախութիւնը եւ հայրենիքը ազատել օտար ու անօգուտ լուծէն, ստեղծել հարազատ վարչութիւն մը՝ ժողովուրդն ամբողջ մասնակից դարձնելով հայրենիքի զարգացման գործին:

Փետրուարեան, ինչպէս եւ Լեռնահայաստանի անցքերը հիմնապէս կոտեցին եւ կոփեցին հայ ժողովուրդին քաղաքական մտածողութիւնը: Եւ այսօր հայ ժողովրդի հոծ զանգուածները, կազմակերպուած Հ. Յ. Դաշնակցութիւնը, հայ մտաւորականութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կանգնած կը մնան անկախութեան, հողային լայնացման եւ հայահավաքման տեսակէտին վրայ, իսկ հայ բոլշեւիկները, ռամկավարներն ու շարք մը խայտաբղէտ տարրեր փառք կուտան Ռուսաստանի հպատակ, նեղ ու սեղմուած երկրի մը՝ դուրս ձգելով երկու միլիոնէն աւելի հայութիւն մը, քանդելով բոլոր հարուստ քաղաքական հեռանկարները եւ թումբ կանգնելով հայ ժողովրդի վերածնունդի ճամբուն վրայ:

Անկախութեան կուսակիցները կը տեսնեն, թէ ինչպէս հայ ժողովրդի մեծամասնութիւնը անհայրենիք կը թափառի ու կը ծիւրի՝ ենթակայ տնտեսական եւ քաղաքական հալածանքներու, կը տեսնեն, թէ ինչպէս յարաճուն հայ ժողովուրդը հարկադրուած է թողուլ Հայաստանը եւ անցնիլ Ռուսաստան՝ դիմանալու համար տնտեսական դաժան պայմաններուն, եւ այս բոլորը՝ հակառակ բոլշեւիկներու առուներուն եւ առուակներուն, որոնք սկսած են հեքիաթներու կարգը անցնիլ: Այս բոլորի կողքին կը տեսնեն նաեւ սահմանակից Տաճկահայաստանը՝ կարօտ աշխա-

№ 1. ՇԱԲԱԹ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ 1921 թ.

ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

Օրգան Հայաստանի Հանրապետական Կառավարության

ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ. ՏԷՊԵԼԻԵՆ

ՍՏԵՂԾՈՒԵԼ Է ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՄԻՍԻՈՆԻ

ԲԱՆՏԱՐԿԵՍԼ ԸՆԿԵՐՆԵՐՆ Ս. ԱԶԱՏԻՆ

ԿԵՑՑԻ; ԸՆԴԱՌ ՈՒՆԿԱԼԻ ՀԱՅՐՍՏԱՆԸ

ՀԱՄԱՆԱՍՊՈՒ ՍՊԱՆԻԱՆ

Ա Զ Դ

ՀՀ կառավարութեան կողմէն 1921 թ. Փետրուարի 19-ից լոյս ընծայուած «Ազատ Հայաստան» թերթի առաջին համարը

տաւոր բազուկներու եւ զուրկ բնակչութենէ: Հայ ժողովուրդը քաղաքական եւ տնտեսական պահանջներու բնական մղումով կը ձգտի միացեալ Հայաստանին: Անկախութեան եւ միացեալ Հայաստանի ըմբռնումները ձուլուած, միս ու արիւն դարձած են Հ. Յ. Դաշնակցութեան, ինչպէս եւ ժողովրդական զանգուածներուն համար:

Կարճ խօսքով, փետրուարեան ապստամբութիւնը կը դառնայ այն դարձակէտը, որմէ յետոյ դաշնակցական երիտասարդութիւնը, արտասահմանի, Երկրի եւ Ռուսաստանի մէջ կը համախմբուի անկախութեան ու ազգային պետութեան քաղաքական նպատակին շուրջը: Փետրուար 18-ը կը ստեղծեր անկախութեան մարտիկ սերունդ մը, որ այսօր ողնաշարը կը կազմէ Հ. Յ. Դաշնակցութեան ինչպէս Հայաստան եւ Կովկասի մէջ, այնպէս էլ Թավրիզէն մինչեւ Փրակա, Սիւրիայէն մինչեւ Փարիզ եւ Ամերիկա:

Առաջին մէկ-երկու տարիներու ընթացքին Ռուսաստանի եւ Կովկասի թոհ ու բոհին մէջ, ինչպէս նաեւ Կարսի անկման ու Լօզանի դաշնադրութեան բեկումները հանդարտ դատումի արգելք կ'ըլլային: Բայց հիմա, երբ ուշադրութեան կ'առնենք երկրի երիտասարդութեան մտածումներն ու բաղձանքները, կը կշռենք անոր քաղաքական հասունութիւնը, նկատի կ'առնենք կուսակցական գերագոյն ժողովներու որոշումներն ու վերագնահատութիւնները, կը տեսնենք, որ փետրուարեան ապստամբութիւնը իր հետ բերած է քաղաքական որոշ թարմութիւն մեր կուսակցութեան, եւ ինչ որ կարեւորն է, բացորոշ ու անսայթաք քաղաքական ուղեգիծ մը պարտադրած է բոլորին:

Քաղաքական պայքարին մէջ մեծ արժէք ունին միակամութիւնը, հաւատքը եւ կորովը: Փետրուար 18-ը ամրապնդեց այդ առաքինութիւնները: Անցնող հինգ տարիներու ընթացքին աւելի ու աւելի այդ ուղղութեամբ կը գործէ մեր կուսակցութիւնը՝ խտացնելով յեղափոխական կուռ բանակի շղթան, որ իրարու կը միացնէ հեռաւոր գաղութէն մինչեւ Հայաստանի լեռնային անկիւն մը թառած «Դաշնակցութեան մտայնութեան» ներկայացուցիչները:

Հայ-թրքական պատերազմին պարտութեան հետեւանքով ոչ միայն հայ ժողովուրդի մէջքը կոտրած էր, այլեւ «ԵՍ»-ը: Հազիւ ինքզինքին կուգար, բայց կը տեսնէր թրքական կրունկները, որ զինք կը ճնշէին Արաքսի եւ Ախուրեանի ափերուն վրայ: Անկախութիւնը կորսնցուցած, հայ ժողովրդի «ԵՍ»-ը փշուր-փշուր եղած՝ կ'ենթարկուէր ուրիշ լուծի մը՝ ռուսականին, որ փոխանակ իր մէջքը շտկելու՝ աւելի կը հարուածէր թէ՛ ֆիզիքապէս եւ թէ՛ բարոյապէս:

Փետրուարեան հակահարուածը եկաւ՝ զգետնուած ժողովուրդի մը մէջքը շտկելու եւ զգացնելու, որ տրորուելու եւ կոտորուելու արժանի հօտ մը չէինք: Այդ հզօր պոռթկումը ազգային «Ես»-ի վերականգնումն էր, թրքական պարտութեան վրէժխնդրութիւնն էր, փախուստէ մը յետոյ եղած միահոդոյն եւ կորովի հակայարձակումն էր, որ կը փրկէր հայ ժողովրդի մարդկային հպարտութիւնն ու պատիւը:

Այդ հարուածին առջեւ ապշած մնացած էին բոլոր օտարները, իրենք՝ ռուսները, մեր դեմ եկող ռուսական բանակի հրամանատարները եւ թուրքերը՝ տեսնելով, թէ ինչպէ՛ս երէկուայ պարտուած ու նահանջող ժողովուրդը կորովի շարժում մը փորձեց: Եւ ինչ որ աւելի ուշագրաւ էր, ապաստամբութենէն յետոյ, քսան եւ հինգ օրւայ անդուլ ու անընդհատ ճակատամարտներու ընթացքին հայ ժողովրդական վաշտերը կորովի դիմադրութիւն ցոյց տուին ռուսական բանակին ու շատ անգամ պարտութեան մատնեցին զայն: Հայաստանը ռուսներու կողմէ գրաւուեցաւ թիզ առ թիզ, ահռելի կոիւներով: Այն օրերուն Դաշնակցութեան եւ անոր համագործակից բոլոր հոսանքներու ղեկավարները, մտաւորականութիւնը եւ գիւղական զինուորները ցոյց տուին վճռական կամք, կռուի ընդունակութիւն եւ կատարեալ համերաշխութիւն:

Ռուսներն ու իրենց գործիչ հայ բոլշեւիկները ռուսական սուիններու ուժով եկան, կրկին տիրեցին մեր երկրին: Բայց Ապրիլ 2-ին անոնք այլեւս չգտան Դեկտեմբերի 2-ի կորաքամակ հայ ժողովուրդը: Լենինի նամակը Միասնիկեանին կը թելադրէր տեղական պայմանները նկատի առնել ու այնպէս գործել: Պարտուած յեղկոմը կուգար՝ Փետրուար 18-ի անողոք հարուածներուն տակ վերագնահատելու իր ուղին … Հայաստանի մէջ:

Հինգ տարի անցած է այն օրէն, բայց Հայաստանի բոլշեւիկեան կառավարութիւնը կը մնայ բարոյապէս պարտուած, իսկ ժողովուրդը՝ լուռ, բայց յաղթական: ■

«ԴՐՕՇԱԿ», թիւ 3 (251), Մարտ 1926, Փարիզ

Հայասեր, թե հայասպան. Ահմեդ Ջեմալ փաշա

Մելինե Անումյան
Թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու

Որոշ թուրք պատմաբանների կողմից շրջանառության մեջ է դրվել մի թեզ, թե իբր իթթիհադական եռապետության դեմքերից մեկը՝ Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ահմեդ Ջեմալ փաշան, ի տարբերություն մյուս երիտթուրք առաջնորդների, ավելի հանդուրժող է եղել հայերի նկատմամբ, դեմ է եղել նրանց տեղահանությանն ու կոտորածներին և կողմ է եղել առավել մեղմ քաղաքականության:

Այսպես՝ Ամասիայի համալսարանի թուրք պրոֆեսորներից դոկտոր Գիրայալի Քարաքուշը 2023 թ. հոկտեմբերին հրապարակված հոդվածում շեշտում է, թե Ջեմալը, ի տարբերություն արաբների հանդեպ ցուցաբերած կոշտ դիրքորոշման, «նույն խստությամբ չի մոտեցել հայերին»[1]: Վերոհիշյալ թուրք պրոֆեսորը նույն հոդվածում վկայակոչում է պանթուրքիստական հայացքներով հայտնի թուրք արձակագիր Հալիդե Էդիփ Ադըվարին: Ըստ Գիրայալի Քարաքուշի՝ Հալիդե Էդիփի վկայության համաձայն՝ «հայ կանայք իրենց վզին կրել են Ջեմալ փաշայի դիմանկարով զարդեր և շատ են սիրել նրան»: Նույն թուրք գիտնականը փորձում է համոզել, թե Ջեմալ փաշայի քաղաքականությունը «խարսխված չի եղել բնաջնջման վրա»: Այդ թեզն իբրև թե «հիմնավորող ապացույց էլ» բերում է Թուրքական պատմագիտական ընկերակցության (Türk Tarih Kurumu) հայկական բաժնի նախկին ղեկավար, պրոֆեսոր Հիքմեթ Օզդեմիրի շրջանառած այն փաստարկը, թե Ջեմալ փաշան Առաջին աշխարհամարտի տարիներին լինելով օսմանյան 4-րդ բանակի գլխավոր հրամանատարը՝ մեծ ջանքեր է գործադրել Սիրիայի անապատներում հայ կանանց և երեխաներին փրկելու և նրանց հումանիտար օգնություն ցուցաբերելու ուղղությամբ[2]:

Իսկ Անկարայում գործող Հաջեթթեփե համալսարանում 2014 թ. «Լիբանանի հայերը (1914-1939 թթ.)» վերնագրով դոկտորական թեզ պաշտպանած Հալիլ Օզշավլըն իր ատենախոսության մեջ գրում է, թե իբր Ջեմալը պատրաստ էր ձեռքից եկածն անել «հայ աքսորյալներին պաշտպանելու և այդ աղետից նվազագույն վնասներով փրկելու համար»[3]: Ըստ Հալիլ Օզշավլըի՝ «Ջեմալի տեսակետով ամեն հայ, որպես անհատ, Օսմանյան պետության քաղաքացին էր»: Նա նաև ընդգծում է, թե 1916 թ. մարտին Դամասկոսում Գերմանիայի հյուպատոսի հետ հանդիպման ժամանակ Ջեմալ փաշան հայտնել է, թե մտադիր է որբատներ բացել հայ երեխաների համար: Հալիլ Օզշավլըն շեշտում է, թե «հայերին փրկելու ուղղությամբ Ջեմալի գործադրած ջանքերը» վրդովեցրել են երիտթուրքական առաջնորդներից Բեհաեդդին Շաքիրին և այլ իթթիհադականների»: Նա նշում է, որ Ջեմալ փաշան օսմանյան կառավարությունից պահանջել է պետության հաշվին մի որբատուն բացել հայ երեխաների կարիքները հոգալու նպատակով, և որ 376 հայ մանուկի օթևանը դարձած այդ մանկատան, ինչպես նաև Հալեպում հիմնված մեկ այլ որբանոցի ծախսերը հոգացվել են բանակի բյուջեի հաշվին: Հալիլ Օզշավլըն նաև հայտնում է, որ այդ որբատների սաներն ու դաստիարակները «Ջեմալ փաշայի պատկերով թաշկինակներ են ասեղնագործել՝ ի նշան երախտիքի»[4]:

Ադըյամանի համալսարանի դասախոսներից դոցենտ, դոկտոր Նևզաթ Արթուչը «1915 թ. աքսորի ու վերաբնակեցման օրենքը և Ջեմալ փաշան» վերնագրով հոդվածում գրում է, թե իբր «2000-ականների սկզբներին, երբ ինքը դոկտորական ուսումնասիրություն կատարելու համար հետազոտում էր վարչապետարանի օսմանյան արխիվները, բազմաթիվ փաստաթղթերի է հանդիպել, որոնք ներկայացնում են Ջեմալ փաշայի՝ հայ քարավանների նկատմամբ մարդկային վերաբերմունքը»[5]: Նույն հոդվածում նա վկայակոչում է թուրք պատմաբան Ռամազան Չալըքին, որը «Ջեմալ փաշան՝ ըստ գերմանական աղբյուրների» վերնագրով ուսումնասիրության մեջ հաղորդում է, թե Ջեմալը «ամեն տեսակի միջոցներ է ձեռնարկել Սիրիա աքսորված հայերի կյանքը երաշխիքի տակ վերցնելու համար, տեղահանված հայերին վերաբնակեցրել է Բեյրութում, Հալեպում և Երուսաղեմում,

նրանց ապահովել է սնունդով»: Ռամազան Չալը-քը նաև հայտնում է, որ «Ջեմալը շուրջ 20 հազար աքսորյալ հայ կանանց և աղջիկների ապահովել է աշխատանքով, իսկ որը մնացած մոտ 4000 հայ մանուկի էլ տեղավորել է Այնթուրայի, Դամասկոսի և Հալեպի նորաբաց որբատներում. մանկատներ, որոնք Ջեմալ փաշայի հովանու տակ էին գտնվում»[6]:

Նևզաթ Արթուչը վերոնշյալ հոդվածում շեշտում է, որ «ATASE» անվամբ հայտնի գլխավոր շտաբի արխիվում պահվող փաստաթղթերի համաձայն՝ Ջեմալ փաշան հայ աքսորյալների «կյանքը փրկելու և նրանց համար կենսական պայմաններ ապահովելու նպատակով» բացել է հիվանդանոցներ ու սանատորիաներ: Նույն հեղինակը վկայակոչում է նաև թուրք պատմաբան Ահմեդ Թեթիքի հոդվածը, որում վերջինս հայտնում է, թե Ջեմալը մեծ ջանքեր է գործադրել տեղահանված հայերի շրջանում տիֆի նման համաճարակների տարածումը կանխելու ուղղությամբ[7]:

Արթուչը, անդրադառնալով Տեղահանության մասին օրենքի նկատմամբ Ջեմալ փաշայի՝ մյուս երիտթուրք առաջնորդներից մի փոքր տարբերվող դիրքորոշմանը, նշում է, որ Ջեմալը «դեմ է հանդես եկել հայերի՝ Միջագետքի անապատներ աքսորվելուն, քանի որ կարծել է, որ այդ շրջան ուղարկված հայերը մեծ դժվարությունների էին հանդիպելու. այդ վայրերն արդեն իսկ խառը վիճակում էին գտնվում, և դա կարող էր բացասաբար անդրադառնալ հայ քարավանների վրա: Ի սկզբանե Ջեմալ փաշան հարմար է համարել, որ հայերը Միջագետքի փոխարեն վերաբնակեցվեն Կոնիայում, Անկարայում և Կաստամոնուում: Սակայն նրա այդ առաջարկը չի ընդունվել մյուս իթթիհադական առաջնորդների կողմից: Այնուամենայնիվ Ջեմալը չի հանձնվել և հետագայում կարողացել է ապահովել, որ հայերը տեղափոխվեն Սիրիայի և Բեյրութի վիլայեթներ, որտեղ ավելի լավ կենսական պայմաններ կային»[8]: Դարձյալ նույն հեղինակի համաձայն՝ Ջեմալի այդ դիրքորոշումը հարուցել էր Բեհաեդդին Շաքիրի դժգոհությունը, և վերջինս բողոքել էր Էնվերին: Այնուամենայնիվ Ջեմալը կարողացել էր իր առաջարկն ընդունել տալ, և իր իսկ համառ պահանջով հայերին սկսել էին Սիրիա աքսորել՝ Միջագետքի անապատների փոխարեն[9]:

Այսպիսով՝ հայերի հանդեպ Ջեմալ փաշայի դիրքորոշման մասին թուրք պատմաբանների փաստարկները հետևյալն են.

1. Համաձայն թուրք պատմաբանների՝ Ջեմալ փաշան տեղյակ չի եղել հայերին տեղահանելու որոշման մասին. դրա մասին տեղեկացվել է միայն 1915 թ. հոկտեմբեր ամսին:

Թուրք պատմաբանները պնդում են, թե իբր Ջեմալ փաշային բավականին ուշ են հայտնել օսմանյան կառավարության կողմից պաշտոնապես 1915 թ. մայիսի 27-ին ընդունված «Աքսորի և վերաբնակեցման ժամանակավոր օրենքի» մասին: Որպես հիմնավորում էլ բերում են այն «փաստարկը», որ Ջեմալը Տեղահանության մասին ժամանակավոր օրենքի ընդունման պահին չի գտնվել Ստամբուլում:

Ջեմալ փաշա

Իմ կարծիքով՝ այդ փաստարկը խիստ անհիմն է և անհեթեթ. նախ «Աքսորի և վերաբնակեցման օրենքը» ներկայացվել էր օսմանյան կառավարության բոլոր անդամների, այդ թվում՝ ռազմածովային նախարար Ջեմալի վավերացմանը[10]: Բացի այդ՝ ինչպես հայտնի է, «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը 1915 թ. հունիսի 1-ին հրապարակվել էր տվյալ ժամանակաշրջանի պաշտոնաթերթ «Takvim-i Vekayi» պարբերականում: Այսինքն՝ առնվազն միամտություն կլինի համարել, որ Ջեմալն այդ մասին տեղեկացվել է մի քանի ամիս անց միայն:

2. Որոշ թուրք պատմաբաններ ենթադրում են նաև, թե Ջեմալը ձգտել է ապահովել աքսորյալ հայերի կյանքի անվտանգությունը:

Թեև տեղեկություններ կան, որ Ջեմալ փաշան, ինչ-ինչ պատճառներից ելնելով, փրկել է որոշ հայերի կյանքը, սակայն այդ դեպքերը կրել են ոչ թե համատարած, այլ մասնակի բնույթ: Եթե Ջեմալն իրապես ցանկանար ապահովել հայերի անվտանգությունը իր անմիջական հրամանատարության տակ գտնվող բանակի հսկողության տարածքում, այսինքն՝ Սիրիայում, ապա հնարավոր չէր լինի Դեր Զորի անապատում հայության մեծ ջարդը, որը 1916 թ. իրագործվեց Զոր սանջակի (մարզի) կառավարիչ Զեքի բեյի կողմից կազմավորված հրոսակախմբերի կողմից[11]: Ինչպես հայտնի է, Ջեմալ փաշան 1914 թ. դեկտեմբերից մինչև 1917 թ. դեկտեմբեր, ուղիղ 3 տարի ի պաշտոնե մնացել է Սիրիայում: Այսինքն՝ եթե Ջեմալի կողմից հայերին «փրկելու» դեպքեր գրանցվել էլ են, ապա դրանք եղել են եզակի:

3. Ըստ թուրք պատմաբանների՝ Ջեմալ փաշան իբրև թե «մեծ բծախնդրությամբ է մոտեցել» իր հրամանատարության տակ գտնվող օսմանյան 4-րդ բանակի հսկողության շրջանում հայերի տեղահանությունն «ապահով կերպով» իրականացնելու գործին և մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի կանխվեն համաճարակային հիվանդությունները:

Իմ կարծիքով՝ այդ բծախնդրությունը պայմանավորված էր Ջեմալի այն մտահոգությամբ, որ նման հիվանդությունները չդառնան համատարած և չտարածվեն նաև տեղի բնակչության ու հատկապես՝ բանակի շրջանում: Մանավանդ, որ իր հրամանատարության տակ գտնվող բանակը կռվում էր կարևոր ռազմաճակատներում, և էպիդեմիկ հիվանդությունների տարածումը կարող էր իրապես մեծ վտանգի առաջ կանգնեցնել օսմանյան բանակին և նպաստել աշխարհամարտում Օսմանյան պետության պարտությանը: Ջեմալի նույն մտահոգությամբ էր պայմանավորված նաև այն փաստը, որ նա ի սկզբանե առաջարկել էր հայերին աքսորել ոչ թե ռազմաճակատներին մոտ գտնվող տարածքներ, այլ Օսմանյան պետության ներքին շրջաններ, մասնավորապես՝ Կոնիա, Անկարա և Կաստամոնու:

4. Եվ վերջին պնդումը. թուրք պատմաբանները, որպես Ջեմալի «հայասիրության արտահայտություն», ներկայացնում են այն փաստարկը, թե նրա ջանքերով բացվել են մի շարք մանկատներ և արհեստանոցներ, որտեղ հայ մանուկներն ու պատանիները կարողացել են դաստիարակվել և պատրաստվել կյանք մուտք գործելուն:

Այս փաստարկը շեշտադրող թուրք պատմաբաններին հարկ է հիշեցնել, որ ցեղասպանություն է համարվում ոչ միայն ֆիզիկական բնաջնջումը, այլ նաև տվյալ էթնիկ խմբի ներկայացուցիչների փոխանցումը մեկ այլ էթնիկ խումբ: Գաղտնիք չէ, թե ինչու էին հատկապես Սիրիայում և Լիբանանում բացվել հայ երեխաների համար նախատեսված մանկատները: Հենց այս վայրերում պետք է վերջնականապես կտրվեին հայության արմատները, որոնք կարող էին ծիլ տալ նոր սերնդի միջոցով: Ինչպես դա ավելի վաղ ընդգծել է նաև թուրք ցեղասպանագետ Թաներ Աքչամը, հայ երեխաների վերադաստիարակումը՝ ըստ թուրք-իսլամական օրենքների, նույն ցեղասպանությունն է, սակայն ոչ ֆիզիկապես վերացնելու ճանապարհով[12]:

Հայոց ցեղասպանության պատմությանը հայտնի են նման մի շարք որբանոցներ, որտեղ հայ մանուկներին զրկել են նախ՝ հայկական անունից, ապա՝ կրոնից, նրանց մոռացրել մայրենի լեզուն ու հայրենիքը և դաստիարակել որպես թուրք ու մուսուլման: Այդ մեթոդը օսմանցիներն սկսել էին կիրառել շատ ավելի վաղ, երբ դևշիրմեի՝ մանկահավաքի ճանապարհով կազմավորվում էր ենիչերիական զորքը: Հանրահայտ է նաև Քյազըմ Կարաբեքիրի կողմից ստեղծված «Gürbüzler Ordusu»-ն՝ «Առույգ պատանիների բանակը», որի նպատակը նույնպես հայ մանուկների թուրքացումը և իսլամացումն էր, նրանց թուրք պետության համար նվիրյալ քաղաքացի դարձնելու, սեփական ազգությունը լիովին մոռացնելու քաղաքականությունը:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ հայության հանդեպ Ջեմալ փաշայի դիրքորոշումն ու քաղաքականությունը թեև առաջին հայացքից և ձևականորեն կարող է տարբեր թվալ մյուս ցեղասպան իթթիհադականների մոտեցումից, սակայն, ըստ էության, այն գրեթե նույնն է, քանի որ լիովին միանման է նպատակը, այն է՝ հայերի, որպես ազգի, իսպառ վերացումը:

Ինչպես իրավամբ նկատում է այս թեմայով ուսումնասիրության հեղինակ Ումիթ Քուրթը[13]. «Ջեմալի դիրքորոշումը մյուս երիտթուրքերից տարբերվում էր միայն մեթոդի առումով»: Այսինքն՝ նա ևս հայերի բնաջնջման կողմնակիցներից էր, սակայն առավելապես ուծացման՝ ասիմիլյացիայի միջոցով:

Բացի այդ՝ ըստ իս՝ Ջեմալ փաշայի նման Հայոց ցեղասպանության հիմնական հեղինակների՝ այլ լույսի ներքո ներկայացնելը հղի է նաև այլ վտանգներով, քանի որ կարող է, այսպես կոչված, «հայասեր թուրքի» կերպարը հայասպան թուրքի հանդեպ գերիշխող դարձնել հայության շրջանում, այն էլ՝ անհիմն կերպով: Այս մեր եզրակացության համար կարող է հիմնավորում ծառայել թեկուզ այն փաստը, որն առնչվում է Ջեմալի թոռան՝ 2014 թ. Հայաստան այցելության հետ: Այդ այցը հայ հանրության որոշ ներկայացուցիչների շրջանում այնպիսի համակրական վերաբերմունք էր ձևավորել, կարծես մոռացել էին, որ խոսքը մեծագույն հայասպաններից մեկի թոռան մասին էր...

Հղում

1. https://bizimtv.com.tr/yazarlar/dr-girayalp-karakus/cemal-pasa-ermenileri-korudu-araplari-modernlestirmek-istedi-1476 (վերջին դիտում՝ 19.12.2023 թ.):
2. Նույն տեղում:
3. https://openaccess.hacettepe.edu.tr/xmlui/bitstream/handle/11655/1393/4abae24c-0550-41a0-9abb-92cb6e43bbdf.pdf?sequence=1&isAllowed=n (վերջին դիտում՝ 19.12.2023 թ.):
4. Նույն տեղում
5. Nevzat Artuç, Sevk ve İskân Kanunu ve Cemal Paşa, Yeni Türkiye, 60/2014:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. Այդ մասին ավելի մանրամասն տես Арсен Авакян, Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений | Изд-во. “Гитутюн”, Ереван, 1999:
11. Դեր Զորի սանջակի (մարզի) կառավարիչ Ջեքի բեյը կազմակերպել էր մի կերպ այստեղ հասած հայության մնացորդացի կոտորածը, որի պատճառով 1920 թ. ապրիլի 28-ին Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանը նրան հեռակա կարգով դատապարտել էր մահվան: Տես Deyr-i Zor Davasi Karar Sureti, Cezâ-yi İ'dâm, Alemdar Gazetesi, 30 Nisan, 1920:
12. Թաներ Աքչամ, Հայերի բռնի իսլամացումը. լռություն, ժխտում և ուծացում, Երևան, 2016:
13. Ümit Kurt, Bir fail, bir kurtarici ve bir muamma: Cemal Paşa, Araplar ve Ermeniler, *Toplum ve Bilim*, 157, 2021:

Հիսուն տարիների վաստակի վավերագրերը

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Գրասեղանիս բազմած գրքերից առանձնանում է մեկը՝ «Յուշամատեան «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միութեան «Գլաձոր» մասնաճիւղի գործունէութեան 1969-2019» (այսուհետև՝ «Յուշամատեան») խորագրով: Հատորը բացվում է Գրիգոր Հոթոյանի առաջաբանով, ներկայացված են նաև «Համազգայինի» հիմնադիրների լուսանկարները: Ժիրայր Փոլ Փիթըրի նյութական ու բարոյական զոհաբերությունների գնով լույս տեսած այս հատորն արժանի է հարգանքի. գրքի 416 մեծադիր էջերում իմաստավորվել է հայ գաղթօջախի պատմության կեսդարյա հատվածը:

Առաջին անգամ չէ, որ առնչվում եմ «Համազգայինի» աշխարհածավալ գործունեությանը, փա՛ռք Աստծո, 2007-ին առիթ եմ ունեցել իմ լուման էլ հավելելու այդ հայակենտրոն ու հայանպաստ ընկերության գործունեությանը: Սեփական փորձով գիտեմ, թե միության անդամներն ինչպե՛ս են հաղթահարում ամենօրյա անխուսափելի դժվարությունները՝ հանուն բազմազան ձեռնարկների հաջողության:

Այս շքեղ հատորն ինձ կարդալու է տվել տիկին Էլիզ Շարապխանյանը, որ առանձին փաստեր ու տեղեկություններ օգտագործեմ պարոն Մարգար Շարապխանյանի ստացած մի քանի տասնյակ անտիպ նամակները ծանոթագրելու համար: Նամակներին առնչվող գործն անելուն զուգընթաց կամաց-կամաց հասունացավ «Գլաձոր» մասնաճյուղի գործունեության մասին գրելու ցանկությունը, որն ավելի շուտ երախտագիտության արտահայտություն է միության մի քանի անդամների անունների ու կազմակերպված ձեռնարկների հիշատակության միջոցով:

«Համազգայինի» «Գլաձոր» մասնաճյուղի մասին հետաքրքիր տեղեկություններ գտա ««Հայ Կեդրոնի» կառուցման եւ Հ.Օ.Մ.-ի ամէնօրեայ վարժարանի հիմնադրութեան 20-ամեակ» (Տորոնտո, 1999) գրքույկի էջերում (էջերը համարակալված չեն): Մասնաճյուղը հիմնադրվել է 1970-ի մայիսի 24-ին և երեք տարի անց «օժտուած է իր ներքին կանոնագրով»: Գրական, երաժշտական և թատերական հանձնախմբերի գործունեությանը 1971-ի հոկտեմբերի 3-ին հավելագրվել է «Յարութիւն Մանուկեան» գրադարանի բացումը, որին հաջորդել է «Գրատարածի» բաժնի ստեղծումը, որ հայերեն գիրքը հասնի ընթերցողին: Ցուցասրահի, «Գուսան» երգչախմբի, պարախմբի գործունեության բազմաթիվ վկայություններն են սևսպիտակ լուսանկարները:

Ճիշտ է, գրքի էջերում առաջին հերթին փնտրել եմ ծանոթ անուններ, բայց սկսեմ գրքին նվիրված ձեռնարկներից: Խնդրեմ, Հարություն Մանուկյան

նի անձնական գրադարանի գրքերը դարձել են այդ ՀԱՅ մարդու անունը կրող հանրային գրադարանի հիմնադրման պատճառ ու հիմք: «Յուշամատեանի» 347-349-րդ էջերը նվիրված են «Համազգայինի» «Յարութիւն Մանուկեան» գրադարանի վերաբացմանը (տեղի է ունեցել 2017 թ. հոկտեմբերի 11-ին): «Գրադարան եւ գրատարած» խորագիրը հատորում ամենահաճախադեպն է, սրան հավելեմ «Գրքի օրերը», «Գրասէրներու հաւաքները». ներկայացրել ու քննարկել են գրական երկեր), աստունքի երեկոները, արտասանական մրցույթները, հատկապես հիշատակեմ «Գրական սիրերգութեան երեկոյի» մասին տեղեկատվությունը: 1978 թ. մարտ 18-ին կազմակերպել են «Հայ գրքի մեծարման օր» (դասախոս՝ Յակոբ Կարապենց):

Համոզված եմ՝ Տորոնտոյի հայության ձեռքերումների ամենակարևոր նախապայմանը գրքի նկատմամբ հարգանքն է (և ի՞նչ համեմատություն կարող է լինել մեր օրերում գետնանցումների աստիճաններին կուչ եկած գրքերի հետ … ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում):

Գրքին նվիրված ձեռնարկներից անբաժան են տարբեր ձևաչափերով կազմակերպված հանդիպումները գրողների հետ. անունները թվարկելն անգամ դժվար է: Աշխարհի տարբեր ծագերից հայ գրողներից շատ-շատերը հասել են Տորոնտո՝ վայելելու գրասեր ու գրքասեր հայության հետ հանդիպումների ջերմությունը: Ահա՛ այդ ձեռնարկների «ժանրային» բազմազանությունը՝ գինեձոն, մեծարման երեկոյ, զրույց-հանդիպում, յիշատակի հանդիսութիւն, գրա-

կան ձեռնարկ, յոբելեանական հանդիսութիւն հեղինակին ներկայութեան, ճաշկերոյթ-զրոյց, յուշ-երեկոյ, յուշահանդէս, մշակութային համախմբում. սրան հավելեք նաև հայ գրողների հոբելյաններին և մահվան տարելիցներին նվիրված ձեռնարկները:

Սկսեմ Արամ Հայկազին վերաբերող էջերով. 1972 թ. նոյեմբերի 25-ին և 26-ին Պողոս Մնապեանը խոսել է Արամ Հայկազի (նշել են գրողի գրական գործունեության 50-ամյա հոբելյանը) և Եղիշե Չարենցի մասին (էջ 5, 6, 7): Նշեմ, որ 2014-ի մարտի 23-ի ձեռնարկը նվիրված է եղել Արամ Հայկազի հիշատակին (էջ 258):

Այս հատորի 29-րդ, 47-րդ, 65-րդ, 137-րդ էջերում անդրադարձ կա Պ. Մնապյանի դասախոսություններին Հակոբ Օշականի մեծարման երեկոյի ժամանակ (9 նոյեմբեր, 1980), երկու օր անց գրականագետը հարցազրույց է տվել: Հաջորդը (1984-ի հոկտեմբերի 13) «Գինեձոն՝ ի պատիւ Պողոս Մնապեանի» խորագիրն ունի: 1988-ի հոկտեմբերի 16-ին «Մուսա Տաղի քառասուն օրերը» վեպին նվիրված գրական երեկոյի բանախոսը Պ. Մնապյանն էր: Նա նաև 1999-ի նոյեմբերի 9-ին «Արդի հայ գրականութիւն» թեմայով դասախոսել է՝ մասնակցելով «Զրույց-հանդիպում» ձեռնարկին:

«Յուշամատեանի» 297-րդ էջում ներկայացված են լուսանկարներ Պ. Մնապյանի հիշատակին նվիրված հանդիսությունից, որը տեղի է ունեցել 2016-ի փետրվարի 18-ին. ««Բագինի» քուրմը» թեմայով բանախոսել է Հարություն Պերպերյանը:

Հակոբ Կարապենցը հաճախ էր լինում Տորոնտոյում. նա հայ գաղթօջախի սիրելի հյուրն էր, Մարգար և Էլիզ Շարապխանյանների մտերիմներից: Բարեբախտաբար, պահպանվել են գրողի նամակներն այս ամոլին: Բայց այդ մասին՝ մեկ այլ առիթով: Առայժմ նշեմ, որ այս հատորի 11-րդ, 33-րդ, 39-րդ, 47-րդ, 95-րդ, 317-րդ էջերում հանդիպեցի Հակոբ Կարապենցի անվանը. 1975 թ. մայիսի 10-ին նա դասախոսել է «Մեծարանքի երեկոյ Մինաս Թէօլէօլեանի 40-ամեայ վաստակին ներկայութեամբ յոբելեարին» երեկոյի ժամանակ, 1982 թ. մարտի 6-ին ներկա է եղել իր «Միջնարար» հատորին նվիրված ձեռնարկին, հաջորդ օրը դասախոսել է Ուիլյամ Սարոյանի մասին (Վրեժ-Արմեն Արթինյանի հետ): Նույն թվականի նոյեմբերի 6-ին շքեղ հանդիպում են կազմակերպել Հակոբ Կարապենցի, Խաչիկ Թեոլեոլյանի, Վահե Օշականի և Ժիրայր Աթթարյանի հետ: 1985-ի փետրվարի 24-ի գրական երեկոն նվիրված էր Դանիէլ Վարուժանին, դասախոսել է Հակոբ Կարապենցը:

Գրողի մահից հետո՝ 1994-ի նոյեմբերի 27-ին, Տորոնտոյում հարգել են նրա հիշատակը, իսկ 2017 թ. հունվարի 20-ին դոկտ. Արա Ղազարյանը դասախոսել է «Յակոբ Կարապենց մարդն ու գրողը» թեմայով:

1978 թ. դեկտեմբերի 2-ին Վահե Օշականը բանախոսել է հոր մասին նրա մահվան 40-րդ տարելիցին



նվիրված ձեռնարկի ժամանակ (հատորի 21-րդ էջում՝ «Յակոբ Օշականի մահուան 40-ամեակ»), հաջորդ օրը դասախոսել է « Սփիւռքահայ գրականութիւնը վերջին 30 տարիներուն» թեմայով: 1994 թ. հունիսի 11-ին Տորոնտոյում մեծարել են Վահե Օշականին՝ «հեղինակին ներկայութեան» (էջ 91): Նշեմ՝ Վահե Օշականը մասնակցել է «Համազգայինի» 16-րդ մշակութային համախմբմանը 1991 թ. հոկտեմբերի 11-14-ին (էջ 79):

1975-ի հոկտեմբերի 25-ին նշել են Մուշեղ Իշխանի գրական գործունեության 40-ամյակը՝ «ներկայութեամբ յոբելեարին». դասախոսել է Կարապետ Փոլատյանը (էջ 13): Հաջորդ օրը կազմակերպել են ճաշկերույթ-զրույց Մուշեղ Իշխանի և Կարապետ Փոլատյանի հետ: 2014-ի ապրիլի 26-ի հուշ-երեկոն նվիրված էր Մուշեղ Իշխանի ծննդյան 100-ամյակին (էջ 253):

Հասանք խորհրդահայ գրողներին: Խնդրեմ՝ 1973 թ. հոկտեմբերի 4-ին «Հանդիպում գրագիտուհի Սիլվա Կապուտիկեանի հետ» (էջ 9), 2007-ի մարտի 25-ին՝ բանաստեղծուհու հիշատակին նվիրված հուշ-երեկո (էջ 175): 1977-ի հոկտեմբերի 20-ին կազմակերպել են հանդիպում-զրույց «հայրենի բանաստեղծ Վահագն Դաւթեանի հետ» (էջ 15), 1989 հունիսի 20-ին՝ «Գրական ձեռնարկ՝ նուիրուած հայրենի գրագէտներ Ռազմիկ Դաւոյեանի եւ Հրանդ Մաթեւոսեանի (համազաղութային ձեռնարկ)» (էջ 69), տասն օր անց՝ «Գինեձոն՝ ի պատիւ Ռազմիկ Դաւոյեանի եւ Հրանդ Մաթեւոսեանի»:

Հատորի 159-րդ և 212-րդ էջերում ներկայացված են Պարույր Սևակին նվիրված երկու ձեռնարկներ՝

Տորոնտոյի «Հայ կեդրոնի» շենքը

2005-ի մայիսի 20-ին՝ «Պ. Սեւակի ծննդեան 80-ամեակի նուիրուած երեկոյ» և 2012-ի փետրվարի 26-ին՝ «Յուշահանդէս՝ Պ. Սեւակի մահուան 40-ամեակին ձօնուած»:

«Յուշամատեանի» մի քանի էջեր նվիրված են տարբեր բեմադրություններին, գրքերի քննարկումներին, թեմի հոգևոր առաջնորդներ Գերաշնորհ Կորյուն Արք. Պապյանի և Գերաշնորհ Մեսրոպ Արք. Աշճյանի հետ հանդիպումներին, նրանց ելույթներին ու կազմակերպած հոբելյանական ձեռնարկներին:

Գաղութի ակնառու և գործուն դեմքերից է լուսանկարիչ Գալուստ Պապյանը, որի գործունեությանն են նվիրված հատորի բազմաթիվ էջեր (35-րդ, 208-րդ, 218-րդ, 245-րդ, 247-րդ, 280-րդ):

Ըստ «Յուշամատեանի» տվյալների՝ երջանկահիշատակ Մարգար Շարապխանյանը 1971-1972, 1975-1976, 1976-1977, 1978-1979 թթ. «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միութեան «Գլաձոր» մասնաճիւղի ատենապետն էր, իսկ 1974-1975, 1977-1978 թթ.՝ շրջանային վարչութեան Տորոնտոյի ներկայացուցիչը: Այլ խոսքով՝ 1971-1979 թթ. նա եղել է ոչ միայն կազմակերպված ձեռնարկների գործուն անդամն ու մասնակիցը, այլև նախաձեռնողը: Սրան հավելենք դասախոսություններ, պատկերիզների ցուցադրություն, բեմադրություն, գրքերի քննարկում և այլն, և այլն (էջ 1, էջ 21, էջ 44, էջ 46, էջ 51, էջ 55, էջ 66, էջ 79, էջ 91): Ամենևին էլ պատահական չէ, որ Մարգար Շարապխանյանի սաներն ու գործընկերները ցայսօր խորին երախտագիտությամբ են հիշում նրա հետ ապրած օրերը, հարգում ու խոնարհվում են նրա թողած մանկավարժական, հրատարակչական, գրական, թարգմանական, վերլուծական ժառանգության առջև:

«Յուշամատեանի» 120-րդ, 134-րդ, 186-րդ, 189-րդ էջերում տպագրված լուսանկարներում պահպանվել են այս շնորհալի ու խանդավառ մարդու կյանքից առանձին պահեր, որոնք նրա ծանր կորստից հետո առանձնակի արժեք ունեն բոլորիս համար:

Տիկին Էլիզի՝ կազմակերպության ոչ պակաս գործուն անդամի գործերը ներկայացված են հատորի բազմաթիվ էջերում (էջ 92, էջ 98, էջ 146, էջ 160, էջ 161, էջ 178, էջ 185, էջ 190, էջ 191). նրա գրական հետաքրքրությունների կիզակետում են Հակոբ Կարապենցի, Մովսես Պչաքճյանի, Ուիլյամ Սարոյանի և մյուսների գրական ժառանգությունը: Նրա աչքից չեն վրիպել նաև Տորոնտոյի հայության կյանքում կատարված կարևոր իրադարձությունները, ինչպես նաև տեղական մամուլում հայ գրականության ու հայ գրողների մասին լույս տեսած հետաքրքիր հոդվածները, որոնք թարգմանաբար ներկայացրել է հայ ընթերցողի ուշադրությանը:

Որպես վերջաբան:

Ուշադրությունս գրավեցին վիճաբանական երեկոները: Քննարկել են այս հարցերը՝ «Ազգային զգացումը գիտակցութիւն է, թէ՞ դաստիարակութեան եւ միջավայրի արդիւնք» (5 նոյեմբեր, 1972), «Սփիւռքեան պայմաններուն մէջ կարելի՞ է հայկական մշակոյթ ստեղծել եւ պահել» (5 մարտ, 1978), «Կարելի՞ է հայեցիութիւնը պահել Ամերիկայի եւ Գանատայի մէջ» (31 մայիս, 1981): Զգիտեմ՝ քննարկված հարցերի գոհացուցիչ պատասխաններ գտել են, թե՞ ոչ, բայց թեմաների ընտրությունը հուշում է՝ չեն խուսափել անգամ անլուծելի թվացող խնդիրներից:

Պարզապես չեն վախեցել, խիզախել են. մի բան, որի պակասն այնքա՜ն զգալի է հիմա մեր ազգային կյանքում և՛ Հայաստանի Հանրապետությունում, և՛ Սփյուռքում (Արցախի մասին … պարզապես լռում եմ):

Չարենցը քաղաքական մեղադրյալ՝ նացիոնալիստ, դաշնակցական, ժողովրդի թշնամի

Դավիթ Գասպարյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ամեն ինչ սկսվեց Չարենցի գրական գործունեության 20-ամյակի կապակցությամբ Մկրտիչ Արմենի տպագրած «Չարենցի և հարակից խնդիրների մասին» աղմկահարույց հոդվածից («Գրական թերթ», 1933, թիվ 7, 21 ապրիլ) և երեք ամիս անց Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի արգելքից (1933): Քաղաքական մահացու հարվածն իջավ «Նոյեմբեր» միության նախկին անդամների գլխին, որի մեջ Չարենցի կողքին նաև Բակունցն էր, Մահարին, Արմենը և ուրիշներ:

«Լենինիզմի հարցերի շուրջ» գրքում այդ հարցերի վերաբերյալ Ստալինն ասել էր. «...բովանդակությամբ՝ պրոլետարական, ձևով՝ ազգային, այսպիսին է այն համամարդկային կուլտուրան, դեպի որն ընթանում է սոցիալիզմը: Պրոլետարական կուլտուրան չի վերացնում ազգային կուլտուրան, այլ ձև է տալիս նրան»: Խոսվում է նաև «ազգերի կոնսոլիդացիայի» մասին (1926, էջ 257-258):

Արմենի նախադրյալները պայմանավորված են այս դրույթներով:

Նույն համարում տպագրվում են Զուբարի «Ձախջախել խմբակայնությունն ու նացիոնալ-դեմոկրատական տենդենցները» և Վանանդեցու «Լեգենդա ազգային և «միջազգային» ձևի մասին» հոդվածները, որոնք նացիոնալիզմի վտանգավոր մեղադրանքներով ուղղված են Արմենի հոդվածի դեմ:

Արմենի հոդվածը բաժանված է ենթամասերի՝

«1. Քննադատության մասին»,

«2. Ինչո՞վ է Չարենցն արժեքավոր»,

«3. Ազգայնականը և ազգայինը»,

«4. Գրական տենդենցներն այսօր»:

Մի ամբողջ գրական խմբակցության անունից հեղինակն ընդդեմ Վանանդեցու պրոլետարական գաղափարական համահարթեցման և Չարենցի գրական ճանապարհի իմաստավորմամբ պաշտպանում է ազգային առանձնահատկությունների խտացման դրույթը:

Արմենը գրում է. «Չարենցի գրական-հասարակական գործունեության քսանամյակի առնչությամբ մեր քննադատությունը բնականաբար պետք է հատուկ ուշադրություն դարձներ Չարենցի ստեղծագործության և հարակից այլ խնդիրների վրա: Սակայն մեր քննադատությունը, որ տառապում է հանցավոր ամլությամբ, մինչև այժմ դեռ հրապարակ չի քաշել ոչ մի խնդիր և ոչ մի հարց՝ կապված այս քսանամյակի հետ: Կարծեք թե մեր գրականությունը ունի մի քանի տասնյակ Չարենցներ, որոնցից մեկին,- ինչ կա որ,- կարելի է անտեսել»:

Այնուհետև. «Չարենցի մեծագույն արժեքը և խոշոր ծառայությունը մեր կուլտուրային այն է, որ նա *հանդիսանում է մեր ազգային կուլտուրայի ստեղծման առաջավոր հարվածայինը:* <...>: Կանգնած լինելով *ցարական գաղութից ազգային հանրապետության* վերածվող Խորհրդային Հայաստանի շեմքին՝ նա իր ստեղծագործությունները կապեց այն հեղափոխական պրոցեսի հետ, որը կոչվում է «ազգությունների զարգացման ընդհանուր պրոցես» (Ստալին): <...>... պրոլետարական միջազգային կուլտուրան ստեղծվում է ազգային կուլտուրաների ստեղծման ճանապարհով և *միայն դրանով*: <...> ...երևութական ինտերնացիոնալիզմով [տարվածները] Չարենցի ստեղծագործության մեջ ավելի և ավելի նկատվող *ազգային հատկանիշների* խտացումը համարել են ազգայնականություն: Չարենցի ուղին դա շարունակ եղել է *ազգային հատկանիշների կոնսոլիդացիայի* ուղին իր երկերում...<...>: ...*միջազգային գրող* լինելու միակ ուղին *ազգային գրող* լինելն է, *միջազգային կուլտուրա* ստեղծելու միակ ուղին՝ *ազգային կուլտուրա* ստեղծելը»: Ըստ նրա՝ պետք է «ընթանալ ազգային կուլտուրայի կոնսոլիդացիայի ուղիով», Չարենցի «ստեղծագործությունը զարգացել է «ազգային ձևի շարունակական խտացմամբ ու բյուրեղացմամբ»:

«Չարենցի ֆուտուրիզմը, նրա մայակովսկիականությունը պետք է բնորոշել ոչ թե իբրև քմահաճ ընտրություն նրա կողմից, այլ իբրև նորմալ ընտրություն ազգային միֆին հակադրվելու համար»:

Ըստ ամենայնի Չարենցի օրինակով Արմենը պաշտպանում է «Նոյեմբեր»-ականների ընտրած ազգային

ինքնորոշման ճանապարհը՝ յուրովի շարունակելով Մյասնիկյանի 1922 թ. դեկտեմբերի սկզբին ԽՀ-ում տպագրած ծրագրային հոդվածի դրույթները:

Ըստ Արմենի՝ սխալ է Ն. Ձարյանը, «որ դեռ կանգնած է *անազգային* ձևով պրոլետարական գրականության դիրքերի վրա»:

Չուբար. «Մ. Արմենի հոդվածը նշանակալից է նրանով, որ նա փորձում է ձևակերպել որոշ գրուպայի սկզբունքային տենդենցները: Արմենի ստորագրությամբ լույս տեսնող այս դոկումենտն արտահայտում է նացիոնալ-դեմոկրատիզմի ազդեցության փաստը հեղինակի վրա»:

Այս վայրագության դեմ 1933 թ. ապրիլի 28-ին Չարենցը գրում է «Բաց նամակ Խ. Հ. Գ. Մ. Կազմկոմիտեին և «Գր.[ական] թերթի» խմբագրությանը», որը մնում է անտիպ (ԳԱԹ, ՁՖ; ՀԱԱ, ֆ. 91, ց. 3, գ. 5373): Առաջին անգամ տպագրվել է «Գրականության մասին» ժողովածուի մեջ (1957, էջ 128-156, արտատպվել ԵԺ, VI, էջ 216-243): Ուղղված է Արմենի հոդվածի հետ թերթի նույն համարում ՀԽԳՄ-ի կազմկոմիտեի նախագահ, ԽՀ-ի խմբագիր Չուբարի ելույթի դեմ: Թերթի նույն համարում տպագրված են նաև Վանանդեցու «Լեգենդա «ազգային» և «միջազգային» ձևի մասին» և անստորագիր «Պայքար երկու ճակատով» հոդվածները:

Սկիզբը. «Մկրտիչ Արմենի «Չարենցի և հարակից խնդիրների մասին» հոդվածի առթիվ «Գրական թերթ»-ի միևնույն համարում տպված հոդվածները թողին ինձ վրա ծայր աստիճանի ճնշող տպավորություն»: Խոսում է իր և խմբի դեմ ուղղված ծանր մեղադրանքների մասին, ասես լինեն քաղաքական հանցագործներ: Արմենի հոդվածի դեմ ուղղված հիմնական մեղադրանքը՝ իբր Արմենը առաջնայինը «համարում է *ազգային ձևը* – և ոչ թե պրոլետարական բովանդակությունը: <…> ընկ. Արմենը միանգամայն որոշակի կերպով է դնում ազգային ձևի խնդիրը իբրև միջոցի»: Ըստ Չարենցի՝ Արմենը տվել է «ազգային ձևի (գրականության մեջ) համարյա սպառիչ բնորոշումը: <…> *ազգային ձևը* գրականության մեջ հանգում է ոչ այլ ինչի, եթե ոչ *բովանդակության ռեալիստական, կոնկրետ դրսևորման…*»: «Ավելի պարզ ասած՝ *ազգային ձևը* գրականության մեջ ոչ այլ ինչ է նշանակում, եթե ոչ՝ բովանդակության այնպիսի դրսևորում, երբ հեղինակի լեզուն, ոճը, նկարագրած մարդկանց և վայրերի ընդհանուր կոլորիտը ադեկվատ է տվյալ ազգային միջավայրին, բնորոշում է տվյալ ազգային միջավայրի բոլոր այն հատկանշական կողմերը, որոնք բնորոշ են *միմիայն այդ ազգային միջավայրի համար և իբրև ձև տարբերվում են բովանդակությամբ նման բոլոր այլ միջավայրերից*»:

Ազգային ձևի բացակայությամբ է պատճառաբանում Վշտունու արևելյան պոեմների, Ալազանի, Ձարյանի, մյուս պրոլետգրողների գրական ձախորդությունը: Չուբարը, ըստ նրա, դառնում է ՀՊԳԱ-ի «իսկական *ռևանշիստական տրամադրությունների*» արտահայտիչ: «Չուբարը նախ հնարում է բովանդա-

կության անտեսումը մեր կողմից, մեզ դարձնում է ազգային ինքնանպատակ ձևի քարոզիչներ, իբրև թե մենք պահանջում ենք ազգային ձև՝ *ինչ բովանդակությամբ ուզում է լինի… <…>*: *Դուք ազգային ձևը մեխանիկորեն հակադրում, բաժանում եք բովանդակությունից…*»:

Չուբարին այսպես՝ որպես կողմնակալ գրական ղեկավար, որպես քաղաքականապես անպատրաստ մեկը հոչակելով՝ շարունակում է. «…ժամանակն է, որ մեր գրական ղեկավարությունը, *մի կողմ դնելով խորհրդային տարբեր գրողների նկատմամբ երկու չափ և երկու կշիռ գործադրելու հանցավոր պրակտիկան*, ծավալուն քննադատություն սկսի այդ տենդենցների դեմ…»:

Հետևում է թերթի նույն համարում Անանուն հոդվածագրի գաղափարական բարձրարվեստ ոչնչացումը՝ որպես «*ամենատիպիկ ռևանշիստ*»: Ժխտվում է նրա այն դրույթը, թե «Նոյեմբեր»-ը եղել է սպեցիֆիկյան կազմակերպություն և լուծվել է ՀՊԳԱ-ի մեջ. «Պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միությունը ոչ թե լուծվեց Ասոցիացիայի մեջ, *այլ հատուկ համագումարում միացավ նրա հետ*, <…>, …կազմվեց այդ երկուսից մի երրորդ միություն, որ պաշտոնապես կոչվում է Հայաստանի Պրոլետգրողների *Միություն»:*

Վերջում անդրադառնում է իր գրական գործունեության 20-ամյա հոբելյանին. «Գիտեք ինչ, սիրելի ընկերներ, եկեք չնշենք այդ «հոբելյանը»: Որովհետև, առաջինը, ներկայումս մենք բոլորս ավելի մեծ և կարևոր գործերով ենք զբաղված, քան այս կամ այն գրողի «հոբելյանն» է:- Երկրորդ՝ ինչո՞ւ անպայման նշել գրողի գործունեության 20-ամյակը, և ոչ, ասենք, 30-ամյակը, կամ 40-ամյակը: Բայց, եթե ճիշտը կուզեք,

այս երկու արգումենտներն էլ, ինչպես ասում են, «հեչ»: Այս երկու արգումենտներն էլ ես բերեցի հենց այնպես, քաղաքավարության համար: Իսկ իմ իսկական արգումենտացիան հետևյալն է:

Յուրաքանչյուր հոբելյան ոչ այլ ինչ է, եթե ոչ հարգանքի և վստահության արտահայտություն դեպի տվյալ անձնավորության ո՛չ միայն անցյալ վաստակները, այլև *ներկա և ապագա*: Ուրեմն, այս ամբողջից հետո, էլ ավելորդ չէ՞ խոսել անգամ այդ մասին: Ավելի լավ չէ՞ գրական ղեկավարություն ստանձնած ընկերների կողմից մի «փոքր» *ավելի զգույշ, ավելի պատասխանատու*, ավելի *հարգալից* վերաբերմունք դեպի խորհրդային գրողը,- քան մի «մեծ» «հոբելյան»՝ առանց այդ վերաբերմունքի» (ԵԺ,VI, էջ 216-243): Չարենցը շրջապատված էր թշնամիներով, ինչը հատկապես սուր զգաց 1936 թ. նոյեմբերի 16-ի հարցաքննության ժամանակ, երբ ըստ ամենայնի պարտավոր էր արդարանալ իրեն ուղղված ամենածանր քաղաքական մեղադրանքներից: Իր կորստական վիճակի գիտակցությամբ հարցաքննությունից երեք օր անց՝ 1936 թ. նոյեմբերի 19-ին, ոչ թե ազդարարում, այլ ինքն իր համար գրում է «Ազդ!». «Եթե որևէ բերումով սույն գրություններն ընկնեն հանկացող մեկի ձեռն՝ պահել խնամքով և միայն իմ *մահից հետո* հանձնել մեր թանգարանին: Ոչ մի դեպքում չոչնչացնել: Լավ է հանձնել ուր լինի՝ անգամ իմ կյանքի օրով, իմանալով, որ սրանք ինձ կկալանեն – քան ոչնչացնել» («Գիրք մնացորդաց», 2017, այսուհետև՝ ԳՄ, էջ 230):

Այս օրերին արել է ծրագրային նշումներ, որոնք կարող էին դառնալ որևէ ելույթի, ավելի հավանական է ոչ թե տպագրության, այլ իր համար գրավելիք հոդվածի նյութ.

«*Կոնտրնացիոնալիզմ*:

Երգելով և ընդունելով ազգային արժեքները՝ գրգռում էին հայ ժողովրդի *պատրիոտիզմը*, որ որակավորվում էր իբրև նացիոնալիզմ:

***

1) Հայ կուլտուրայի ազգային արժեքների դաստիարակում:
   Ուժերի կուտակում:
   Ժառանգությունը չի ընդհատվում, տրադիցիա է դառնում:
2) Գրողների *առանձնացում:*
3) Պերիոդիզացիա, որ կտրում է սով.[ետական] գրակ. [անությունը] իր կարճատև ուղու նվաճումների փորձից:

Չարենցը օղակն էր այդ անցյալ կուլտուրայի և նոր կուլտուրայի» («Անտիպ և չհավաքված երկեր» 1983, այսուհետև՝ ԱՉԵ, էջ 475):

Նկատենք, որ իր մասին գրում է անցյալ ժամանակով՝ «Չարենցը օղակն էր…»:

1937 թ. ապրիլի 16-ին ՀԳՄ ընդլայնված նիստում զեկուցում է Աբովը, Չարենցին հռչակում նացիոնալիստ, հակահեղափոխական, հանցագործ, մինչդեռ կուսակցությունը «նրա նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում». ըստ էության ասում, թե ինչո՞ւ Չարենցը դեռևս ձերբակալված չէ:

«Նոյեմբեր» խմբի ամոթալի մերկացումներով է հանդես գալիս Արմենը, Չարենցին հռչակում են իր իսկ նվիրական գաղափարների թշնամի, և նա չի կարողանում ապացուցել լույսի պես պարզ այդ ճշմարտությունը: «Մի քանի վաստակավոր համբակներ և խառը այդ ժամանակներում ջրի երես թռած նորելուկ կարիերիստներ ատելով ատում էին Չարենցին: Ժողովների, գրական-գեղարվեստական հավաքույթների, գրավոր ու բանավոր վեճերի ժամանակ՝ բամբասանքի կարգով, բոլոր միջոցներով պախարակում, սևացնում էին նրան: Քաղաքական մեղադրանքներ էին բարդում գլխին: Ոչ նախանձն էր պակաս, ոչ էլ ծախու ճանապարհով առաջ գնալու տենդը: Հիշում եմ, Հայաստանի գրողների համագումարում, դեմքը դարձնելով Մոսկվայի ներկայացուցիչների խմբին (կարծեմ գրականագետ Կիրպոտինն էր), Չարենցը ամբիոնից բողոքում էր իր վիճակից: Ռուսերեն, ծայրահեղորեն բորբոքված, գոռաց. «Ինձ խեղդում են»… Այս ահավոր ճիչը մինչ այժմ էլ հնչում են ականջումս…» (Մ. Սարյան, «Չարենցի հետ: Հուշեր», 1997, էջ 409): Ահա, կատաղած, չարացած այս ռոմակը՝ վրեժխնդիր է լինում անպաշտպան հանճարից:

Եվ հուսահատության մատնված (տես՝ 1936 թ. մարտի 1-ի գրառումները), խոսում է ինքն իր հետ. «Քանզի չկա տանջանք ավելի մեծ և պատիժ ավելի սև, – քան դատել մարդուն նրա սրբազան գաղափա-

րի, նրա ողջ կյանքի միակ գործին դավաճան լինելու համար» (ԳՄ, էջ 261):

Որպես «կուստոմսավոր դաշնակցական», Չարենցի, Բակունցի կողքին հիշատակում Ներսիկ Ստեփանյանին, տրոցկիզմի մեջ մեղադրված Վաղարշակ Տեր-Վահանյանին, նրանց համարում «սրիկաների ռոմակ», ավելացնում է նաև այլ անուններ, որպես չիրականացված չարիք հայտնում, որ անգամ Ալազանը և ոմանք ցանկացել են Չարենցի թեկնածությունն առաջադրել ԳՄ նախագահի պաշտոնում, նույնիսկ Չարենցին տեղյակ են պահել կուսֆրակցիայի նիստերի բովանդակությանը…

Մահվան շուրջպարն սկսվել էր, և խոսքը տրվում է Կրեմլի քննադատ Վալերի Կիրպոտինին. «…նա, ով կոնֆլիկտի մեջ է մտնում ժողովրդի հետ, ով անցնում է նրա թշնամիների ճամբարը, կանգնում է վտանգավոր ուղու վրա: Եվ ահա այդպիսի վտանգավոր ուղու վրա է այժմ գտնվում Չարենցը, ինչի մասին պետք է ասել լիաձայն: <…>: Չարենցը, գովերգելով հեղափոխությունը, մինչև վերջ չձուլվեց նրան: Նա եղել է հեղափոխության կողմն անցած ինտելիգենտ ռադիկալ և ոչ թե լիովին պրոլետարիատի շարքերին ձուլված մարդ… Ըստ Չարենցի՝ հեղափոխությունը կատարում է դիմազուրկ մասսան [նկատի ունի «Ամբոխները խելագարված» պոեմը]»:

Կիրպոտինը չի գիտակցում ազգային ժառանգության շարունակականության չարենցյան սկզբունքները և, նկատի ունենալով «Գիրք ճանապարհի»-ն, անպատկառ խոսքեր է ասում նրա հասցեին: Նրա ելույթը բազմիցս ընդհատվում է սրիկաների՝ տեղերից հնչող «Ճի՛շտ է» ձայնարկումներով:

Հրաչյա Քոչար. «… բայց արդյոք միայն այդ պոեմնե՞րն են, որոնք ուղղված են մեր ժողովրդի դեմ, մեր կոմունիստական ապագայի դեմ: Եթե կարդաք նրա, այսպես կոչված, ամենաանմեղ բանաստեղծությունները, դուք կտեսնեք նույն դաշնակցական բամբասանքը մեր ժողովրդի դեմ»: Իբր Զոպանյանը Խանջյանին ներշնչել է սահմանների վերանայման հարց, ինչը մաքսանենգորեն «…իր գեղարվեստական թաքուն արտահայտությունն է գտել Չարենցի մեջ <…>: … այստեղ մենք տեսնում ենք ռեակցիոն լեզու, ռեակցիոն ոճ: <…>: Իր գրական և հասարակական գործունեությամբ վերջին տարիների ընթացքում Չարենցը մի քար էր՝ ընկած խորհրդային պոեզիայի ճանապարհին: Այսօր, ընկերնե՛ր, երբ մենք խոսում ենք սոցիալիստական ռեալիզմի մասին, անշուշտ, պետք է Չարենցի այս գրականությունը ջախջախվի և դեն շպրտվի, որպեսզի իր ազդեցությունը չունենա երիտասարդ գրողների վրա: Մի քանի խոսք մեր երիտասարդների մասին: Ես, ընկերնե՛ր, ասացի, թե Չարենցը վերջին տարիներում մի քար է եղել՝ ընկած մեր խորհրդային պոեզիայի ճանապարհի վրա: [Կրկնում է իրեն, ինչպես ստուգողական կրակոց՝ առաջին գնդակից սպանվե՞լ է թե դեռ ողջ է. Չարենցը ճանապարհի գիրքն էր բացում, բայց ահա գրակա-

նությունից հեռու մարդիկ նրան համարում էին ճանապարհին ընկած քար]: Ապա այդ ճանապարհով դեմ էին առնում նրանք և հնարավորություն չէին ունենում առաջ գնալու»: Ապա անվանարկում է Դաշտենցին, ով հանդգնել է «…իր ոտանավորներից մեկը նվիրել Չարենցին, նրա աղջկան և Աբգար աղային»:

Շարունակում է. «Կան մարդիկ, որոնք մտածում են, թե պատմությունը ապագայում նրանցից գոհ կլինի, որոնք բարյացակամ վերաբերմունք են ունեցել դեպի Չարենցը»: Ավելացնենք՝ այո՛, պատմությունն այսօր նրանցից գոհ է և գնահատում է նրանց գրական դիրքորոշումը: Այսպես ելույթ է ունենում գրող Քոչարը, որի խոսքը ոչինչով չի տարբերվում հետաքննիչների մեղադրանքներից ու մարդապանների կրակոցից:

Քոչարի հետ քոչարի է պարում Արտաշես Ոսկերչյանը, ըստ որի՝ Չարենցը «իր տեսական և քաղաքական ելույթներում եղել է հակահեղափոխական», «հանցանքներ է գործել ժողովրդի հանդեպ», «Չարենցի մոտ նկատվում է գազազած ատելություն դեպի այն ժողովուրդը, որը կառուցում է սոցիալիզմը»:

Հովիկ Մելիքյան. «…իբր թե այդ ժողովուրդը ոռնում է, քաղցած է, մերկ է և այլն: Հայ ժողովրդին մարդկային կերպարանքից հանում և գազանային կերպարանք է տալիս…», «Ասացեք խնդրեմ Նարեկացու և Չարենցի մեջ ի՞նչ տարբերություն կա», «Ես այստեղ չեմ ուզում շատ օրինակներ բերել Չարենցից՝ դարձնելով նրան մեր ժողովրդի կենտրոնը»: Ըստ նրա՝ նացիոնալիզմն ու տրոցկիզմը Չարենցի ստեղծագործության մեջ հանդես են գալիս միասին (ԳԱԹ, ԳՄՖ, 16-17):

1937 թ. ապրիլ 17-21-ին տեղի է ունենում հայ գրողների ընդհանուր *ժողովը* (նյութերը՝ ԳԹ, թիվ 12, 23 ապրիլ, թիվ 13, 1 մայիս, նաև՝ թիվ 18, 12 հունիս): Նախորդ օրվա՝ ապրիլի 16-ի փորձարկումից հետո, իրենց կրկնելով, լրացնելով, հանդես են գալիս կարմիր ջարդարարները: Հինգ օր շարունակ 40-ից ավելի պրոլետար գրողներ հոշոտում էին ոչ պրոլետար գրողներին. գրական բեմահարթակում երբևէ չեղած արյունոտ ողբերգություն էր: Շեքսպիրը սոսկ միամիտ

ու իմաստախոս ողբերգակ է այն ամենի համեմատ, ինչ կատարվում էր գրական-մշակութային կյանքի բեմահարթակում: Պահանջը Չարենցին խաչելն էր, նրա առաքյալներին ոչնչացնելը կամ հրապարակայնորեն լռեցնելը: Իսկ նա ոչ մի պաշտպան չուներ…

Գեղարվեստի վարպետները գեղեցիկից խոսելու փոխարեն՝ վարչակարգի թելադրանքով կամ մեղադրում են մեկմեկու, կամ արդարանում ու պաշտպանվում մեկը մյուսից:

Չարենցը չի մասնակցում, բայց տեղյակ էր անցուդարձին:

Առաջին օր՝ ապրիլի 17: Նախագահություն՝ Բաշինջաղյան, Իսահակյան, Կիրպոտին, Դաբաղյան, Աբով, Գյուլիքևխյան, Ջորյան:

Գրողների միության անելիքների մասին զեկուցում է *Աբովը*: Հիմքում մարտի 3-ի Ստալինի զեկուցման դրույթներն են. «Երկերեսանի նացիոնալիստ-տրոցկիստ թշնամիները՝ Բակունցը, Ալազանը և մյուսները, կարողացել էին իրենց շահատակությունների ասպարեզ դարձնել գրողների միությունը»:

Սիրաս. «Մեր առաջնորդի զեկուցումը, նրա հանճարեղ ցուցմունքները [ցուցումները] մեզ համար ուղենիշ կհանդիսանան՝ աշխատանքները ավելի բարձր աստիճանի վրա դնելու համար»:

Երկրորդ օր՝ ապրիլի 18: Առաջինը ելույթ է ունենում *Արագին*. «…յուրաքանչյուր գրական շեղում բերում է իր հետ նաև քաղաքական շեղում»:

Ելույթ են ունենում՝ Ղարագյոզյան, Հռ. Պողոսյան, Վեսպեր, Կորյուն, Վ. Գրգորյան, Ռ. Ջարյան, Խ. Այվազյան, Ջ. Եսայան:

«Հայտնի է, որ Ռ. Ջարյանը մեկն է այն երիտասարդ քննադատներից, որոնք ոչ այնքան հեռու անցյալում խնկարկել են Բակունցի և Ալազանի նման հակահեղափոխականների գրական ստեղծագործություններին: Ուստի՝ քաջալերելի է, որ իր ելույթում նա ընդունում է իր կատաարած սխալները:

Ծավալուն զեկուցմամբ հանդես է գալիս նույն Վալերի Կիրպոտինը՝ «Ստեղծագործական ոգևորությամբ դեպի նոր հաղթանակներ գրականության ֆրոնտում»:

Չարենցի մասին կրկնում է նախորդ օրվա ելույթը և շարունակում «Ես ցանկանում եմ հիշել նրա՝ որպես գրողի, էվոլյուցիայի մասին: Չարենցը՝ որպես պոետ, իր ստեղծագործությունն սկսեց հուսահատության երգերից: Նրա առաջին երգերը լի էին խավարով: Նա կապված չէր հեղափոխական շարժման հետ, դրությունը Հայաստանում ծանր էր, և նա ելք էր որոնում: Նրա առաջին երկերի մեջ հուսահատության նոտաներ, մահվան թախծի նոտաներ են հնչում: Երբ սկսվեց իմպերիալիստական պատերազմը՝ նա ընկավ նացիոնալիստների բանակը: <…>: Նա տեսավ կոտորած, միմյանց անողոք ոչնչացում, սարսափներ <…>: Չարենցը սարսափեց և հեռացավ, նա գնաց հեղափոխության կողմը <…> և ոչ թե միայն Չարենցի տաղանդն էր, այլ հենց նրա հեղափոխության կողմն անցնելն էր, որ ստեղծեց նրա ստեղծագործության հաջողությունը, փառք բերեց նրա համար: Միայն տաղանդը, միայն ձիրքը – դեռ ոչինչ չեն կարող ասել <…>: Չարենցը գովաբանեց հեղափոխությունը, նրա հետ չձուլվեց ոչ մինչև վերջ: Նա ռադիկալ ինտելիգենտ էր, անցած հեղափոխության կողմը, և ոչ թե մի մարդ, որը լիովին ձուլվել էր պրոլետարիատի շարքերի մեջ: <…>: Նա հեղափոխությունը հասկանում է ոչ որպես օրինաչափ մի պրոցես՝ նախապատրաստված մարդկության նախորդ պատմության ընթացքով, ինչպես այն նկարագրել են Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը,- նա հեղափոխությունը նկարագրում է որպես արբեցում, որպես կրակե մրրիկ, որն այրում է հին աշխարհը: Հեղափոխության ստեղծագործական ուժերին նա մոտենում է որպես ռադիկալ ինտելիգենտ: Իսկ Չարենցի համար հեղափոխությունը կատարում է դիմազուրկ մասսան»:

Գտնում է, որ Չարենցն այն ժամանակ հիմնավորապես ժխտում էր «կուլտուրական ժառանգությունը», որը «երբեմն ընդունում էր ուղղակի անարխիզմի երանգ– հիշենք «Ռոմանս անսերը»»:

<…>: Հետագայում Չարենցն ընկնում է հակահեղափոխական նացիոնալիստների ազդեցության տակ: Մենք անձամբ գիտենք նրա «բարեկամներին», որոնք ազդում էին նրա վրա – դրանք էին Բակունցը, Խանջյանը և ուրիշներ: Նա ստեղծում է մի գիրք («Գիրք ճանապարհի»), որն ամբողջովին գրված է որպես հայ գրականության «ազգային հատկանիշների խտացման» թեորիայի իլյուստրացիա: <…>: Չարենցը չի ցանկանում քննադատաբար վերանայել հինը՝ այսօրվան օգնելու համար, նա ցանկանում է, որ այսօրվա վրա կնիք դնեն մեռելները, նա ցանկանում է մեր այսօրվա գրականությունը վերածել որոշ չափով «թանգարանային գրականության», այնպիսի գրականության, որը ձայնակցում է անցյալի գերեզմաններին և ոչ թե ժողովրդական կյանքի կենդանի հորձանքին:

Եվ բնորոշ է, որ Չարենցի ստեղծագործության այս շրջանում ուղիներ չկան դեպի կենդանի ժողովրդական ստեղծագործությունը, որը Հայաստանում հորդում է անսպառ հորձանքով, որ ստեղծում է այնպիսի շեղևրներ, ինչպես «Հեքիաթը Լենինի մասին» [ակնարկում է Սարմենի «Լենին հսկան», 1937, ինչպես նաև բազմաթիվ աշուղների անարվեստ հանգերգային կցոնումները]»:

Այսքանից հետո հայ գրականությունը գիտակցաբար գլխատող և մոլախոտը գրականություն համարող գաղափարական դահիճ Կիրպոտինը հանգում է մահացու եզրակացության. «Չարենցի ձեռքից բռնեց թշնամին: Խորհրդային հասարակությունը <…> իր բոլոր օղակներում հիանալի համբերություն ու մեծահոգություն ցուցաբերեց դեպի Չարենցը, Չարենցը <…> պետք է ինքը հասկանա, որ նա դեռ կարող է դուրս գալ լուսավոր ուղի, կարող է միանալ իր ժողովրդին, և այն ժամանակ նրա ստեղծագործությունը կստանա նոր թռիչք, նոր խթան»:

Ըստ նրա՝ ժողովուրդը «ցանկանում է երգեր լսել Լենինի, Ստալինի մասին»: «Ազգային հատկանիշների խտացումը» բացատրում է որպես գաղափարական ընդդիմություն, ինչն իր մեջ չի կրում սոցիալիստական բովանդակություն: «Չարենցը կանգնել է նացիոնալիստական ուղու վրա»:

Կիրպոտինի ելույթը Չարենցի դատավճիռն էր՝ համաձայնեցված Ամատունու հետ:

Շարունակում է. «Սիմոնյանը, Բակունցը, Ալազանը և ուրիշներ գրականության մեջ գործել են որպես վնասարարներ, որպես հակահեղափոխականներ, որպես տրոցկիստներ, դաշնակներ, որպես միջազգային կապիտալի գործակալներ, նրա՛ համար, որպեսզի հայ ժողովրդին շեղեին երջանիկ կյանքի ուղուց և վերադարձնեին անցյալում նրա ապրած բոլոր սարսափները: Նրանք <…> գրողներին հրահրում էին միմյանց դեմ, խեղդում էին այն բոլոր նախաձեռնությունները, որոնց նպատակն [էր] հայ գրականությունը դուրս բերել համաշխարհային ճանապարհի վրա, նրանք խեղդում էին հայ գրականության տաղանդները»: «Տաղանդների» մեջ նաև անգրագետ աշուղներն էին, ովքեր արժանանում են նրա հովանավորությանը:

Կիրպոտինը դրվատում է Իսահակյանին, ով «բուրժուական նացիոնալիզմի բանակից» գալիս է դեպի մեզ: Իսահակյանը ներկա է եղել և լսել իր մասին ասածը. կա նրա արձագանքը՝ ռեպլիկը: Ընթերցվում է *Իսահակյանի* նամակը, որ նա գրել էր ելույթի փոխարեն, քանի որ հիվանդության պատճառաբանությամբ անձամբ ներկա չի գտնվել վերջին մի քանի նիստերին: Լույս է տեսնում «Իմ ազատ և ստեղծագործ ժողովրդի հետ» վերնագրով (ԳԹ, թիվ 12, 23 ապրիլ):

Իսահակյան. «Նրա [Կիրպոտինի] խոսքը տոն տվեց ինձ գրելու այս երկտողը:

Եղել եմ տոլստոյական, նիցշեական, Գերմանիայում ուսանող ժամանակս՝ սոցիալ-դեմոկրատ: Հուսահատված դարձել եմ անիշխանական, պեսիմիստ: Տարվել եմ Բուդդայով:

Ոգևորվել եմ հայկական մարտական ազգայնությամբ, դաշնակցական ոչ երկրորդական գործիչ՝ աշխատել եմ անձնվիրաբար, բանտեր եմ նստել, աքսորվել, փախել հայրենիքից:

<…>: Ինձ շատ մեծ վիշտ պատճառեց նաև մի քանի գրողների ձերբակալությունները, որոնց մեջ ունեի անձնական ընկերներ, բայց երբ վերադարձա Երևան և հնար եղածի չափ ծանոթացա իրերի և իրադարձությունների հետ, տեսա որ մեր կառավարությունը (որին անպայման վստահում ենք) և ժողովուրդը ուրիշ կերպ չէին կարող վարվել նրանց հետ: [Ժողովուրդը կապ չունի բռնությունների հետ. ժողովուրդը և քաղաքական վարչակարգը տարբեր են և հիմնականում անհամատեղելի]: Որովհետև նրանք շեղվել են ուղիղ, տրամաբանական ճանապարհից և ընթացել են մի դատապարտելի ճանապարհով, որ միայն վնաս է բերում մեր բազմաչարչար ժողովրդին»:

Այսինքն՝ բոլշևիկների կողմից գնահատված և ընդունված Իսահակյանը արդարացնում է բռնադատումները:

Երրորդ օր՝ 19 ապրիլ: Ելույթ է ունենում Քոչարը. «Խոսելով Չարենցի, Բակունցի և մյուսների «Նոյեմբեր» խմբակի մասին, ընկ. Քոչարը շեշտում է, որ այդ խմբակը տարել է նացիոնալիստական, սպեցիֆիկյան քաղաքականություն ոչ միայն հրապարակային ելույթներում, այլ նաև գեղարվեստական գրականության մեջ: Նա գտնում է, որ չնայած իր մի շարք հեղափոխական պոեմներին, այնուամենայնիվ, Չարենցը հետևողական հեղափոխական գրող չի եղել: Չարենցը ոչ մի լուսավոր էջ չի գտնում մեր ժողովրդի պատմության մեջ և այն պատկերացնում է «անդեկ, անգաղափար»: Ընկ. Քոչարը բերում է մի շարք փաստեր Չարենցի գրքից, որոնք ցույց են տալիս նրա նացիոնալիստական հանցանքները»: «Գիրք ճանապարհի»-ն տոգորված է նացիոնալիզմով:

Ս. Սողոմոնյանը քննադատում է Արմենի «Հեղնար աղբյուր»-ը:

Մ. Արմենը պաշտպանում է «Հեղնար աղբյուր»-ը՝ գտնելով, որ ինքը վրիպել է միայն «Երևան» վեպում: Այնուհետև. «Պատմելով «Նոյեմբեր» կազմակերպության անդամների նացիոնալիստական, հակահեղափոխական արարքների մասին, Արմենն աշխատեց որոշ չափով նվազեցնել իր դերն այդ ասպարեզում»: Գրողների ընդհանուր ժողովում Արմենը գրավոր հայտարարում է Չարենցի և Բակունցի գլխավորած «հակահեղափոխական խմբակի» գոյության մասին, որի անդամներից էր նաև ինքը:

«Ընկ. Վահունին իր ելույթում մի շարք օրինակներ է բերում այն մասին, թե ինչպես հակահեղափոխական Ալազաններն ու Բակունցները ստեղծում են հաճոյակատարության մթնոլորտ գրողների կազմակերպության մեջ»:

Դեմիրճյանն «ասում է, որ ինքը խորհրդային գրողի զգոնություն չի ունեցել՝ նկատելու և հասկանալու, որ Բակունցի, Ալազանի, Չարենցի և մյուսների պայքարը տարվում է ազգայնական դիրքերից, և այդ է պատճառը, որ նա իր ժամանակին պաշտպանել է նրանց»:

Վերստին ելույթ է ունենում Կիրպոտինը. «Չարենցը կանգնել է նացիոնալիստական ուղու վրա: Խորհրդային կառավարությունը ամենահամբերատար վերաբերմունք է ցուցաբերել նրա հանդեպ: Սակայն Չարենցը դեռ համապատասխան եզրակացություն չի արել այդ բոլորից: Նա նույնիսկ չմասնակցեց ժողովին և լռություն պահպանեց: Այժմ միայն Չարենցից է կախված, թե արդյոք նա կվերադառնա դեպի խորհրդային գրականությունը՝ մինչև վերջ գիտակցելով իր հանցանքները»:

Չորրորդ օր՝ 20 ապրիլ: Ընդդեմ «տրոցկիստ և նացիոնալիստ» գրողների ելույթ են ունենում Տիգրան Հախումյանը, Արաքսը, գյուղագիր Արշակ Շահնազարյանը…

Չարենցի աշխատասենյակը իր բնակարանում

Տարոնցին խոսում է «իր ստեղծագործության մեջ թույլ տված մի շարք նացիոնալիստական սխալների մասին: Կանգ է առնում հակահեղափոխական նացիոնալիստ Ալազանի և Նորենցի հետ միասին «Գրական թերթում» վարած նացիոնալիստական քաղաքականության վրա»:

«Ընկ. Ոսկերչյանը խոսում է Ս. Տարոնցու և Մ. Արմենի սխալների մասին, գտնում է, որ նրանք միչև վերջ էլ չխոստովանեցին իրենց սխալները: <…>: Արմենի նկարագրած Գյումրու արհեստավորության մեջ շերտավորում չկա, պայքար չկա: Խոսելով Չարենցի մասին՝ ընկ. Ոսկերչյանը գտնում է, որ ընկ. Կիրպոտինը չափազանց ճիշտ կերպով տվեց Չարենցի գնահատականը: Չարենցը մեծ հանցանքներ է գործել ժողովրդի նկատմամբ, նա մասնակից է եղել հակահեղափոխական նացիոնալիստների գործունեության, մեր կառավարությունը մեծահոգի գտնվեց նրա հանդեպ, նրան հնարավորություններ են տրված, որ ուղղի իրեն, այժմ մնում է, որ Չարենցը հիմնովին վերանայի իր գործունեությունը, եթե միայն ուզում է վերադառնալ դեպի խորհրդային գրականությունը»:

Սիմոն Հակոբյանը խոսում է Թերզիբաշյանի, Արմենի, Ստեփանյանի, Տեր-Սիմոնյանի դեմ: Այնուհետև. «Չարենցը դասագիրք էր կազմել, բայց այդ դասագրքից հանել էր ռուսական և եվրոպական գրողներին, մի խոսքով՝ օտար հեղինակների գրվածքները»: Հակոբյանը պիտի որ իմանար՝ այդպես էր վարվել, որովհետև ռուս և եվրոպական գրականությունները ներկայացվում էին առանձին դասագրքերով, իսկ այստեղ մեկնաբանվում է որպես նացիոնալիզմ:

«Ընկ. Ղազնչյանը նշում է, որ Չարենցի մոտ կա նաև բուխարինովշչինա, ինչպես Բուխարինը մի ժամանակ ռուս մեծ ժողովրդին համարում էր օբլոմովշչինա, ապա Չարենցը, Դր. Սիմոնյանը, Վանանդեցին աշխատում էին մեր լուսավոր անցյալի էջերը մթնեցնել: Նրանք ամբողջովին ուզում էին ժխտել մեր անցյալը»:

Հինգերորդ օր՝ 21 ապրիլ: Ելույթ են ունենում Գ. *Լևոնյանը* (Իսահակյանի մասին), Հ. *Մամիկոնյանը* (ՀԽԳՄ քննադատության բաժանմունքի աշխատանքների մասին), Գ. *Ղազարյանը* (պետհրատի տնօրեն Զոփուրյանի դեմ), *Վշտունին* (կազմակերպական հարցերի մասին), Հ. *Մելիքյանը* (բռնադատված գրողների դեմ), Ս. *Զորյանը* (դրվատում է Իսահակյանին), Հ. *Գյուլիքևիյանը* (խոսում է իր թույլ տված սխալների մասին), *Աբովը* (եզրափակիչ մեղադրանքներ): «Հայտնաբերվում» է «Հայաստանի հակահեղափոխական, նացիոնալիստական-տրիոցկիստական կենտրոն», գրողներից հերթական թիրախներ են դառնում Զ. Եսայանը, Ե. Չուբարը:

Այս մթնոլորտում 1937 թ. մայիսի 26-ին բացվում է ՀԿ(բ)Կ X համագումարը և տևում մինչև հունիսի 2-ը: Ճառով հանդես է գալիս ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին: Առանձին բաժնով ներկայացված են «Գրականության և արվեստի հարցերը»: Ամատունին իր ճառում խիստ քննադատում է Չարենցին, Բակունցին, նրանց համախոհ արդեն իսկ ձերբակալված գրողներին և «Նոյեմբեր» միության գործունեությունը:

Խանջյանի հանձնարարությամբ «դաշնակ» Բակունցը առաջարկում է ֆիլմ նկարահանել և ցուցադրել «դաշնակ ավանտյուրիստների հարձակումը Օտտոմանյան բանկի վրա, պահանջում էին կինոնկար պատրաստել հակահեղափոխական դաշնակ-խմբապետ Անդրանիկի մասին»:

ՀՊԳԱ-ն ներկայացնում է որպես ՌԱՊՊ-ի մասնաճյուղ, իսկ «Նոյեմբեր»-ը՝ սպեցիֆիկյան ուղղվածության ազգայնական կազմակերպություն:

««Նոյեմբեր» խմբակը, որ առաջ էր եկել 1925 թ. Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի նացիոնալ-ուկլոնիստական-սպեցիֆիկյան ղեկավարության աջակցությամբ [ակնարկում է Ա. Մյասնիկյանին և Ա. Հովհաննիսյանին], սնվում էր սպեցիֆիկների հակահեղափոխական թեորիայով, որը ժխտում էր Հայաստանում պրոլետարական գրականություն ստեղծելու անհրաժեշտությունն ու հնարավորությունը, հայկական խորհրդային գրականությունը հակադրում էր ռուսական խորհրդային գրականությանը:

Հենց այդ խմբակի ձայնափողն էր հանդիսանում գրող Մ. Արմենը, որը ապրիլի 23-ի որոշումից հետո հանդես եկավ «ազգային հատկանիշների խտացման» վերաբերյալ «տեսությամբ», որն ըստ էության մարտնչող նացիոնալիզմի պրոպագանդ էր:

Մեր նվաճումների ազդեցության տակ իր դիրքերի հակահեղափոխականությունը խոստովանեց գրող Եղիշե Չարենցը: Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի անունով ուղղած իր նամակում նա հայտարարում է. «Ես նույնիսկ չեմ կասկածում, որ, իրոք, իմ սխալներն ունեն նացիոնալիստական, հետևաբար և (սոսկում եմ ասել) հակահեղափոխական, ուրեմն և հակախորհրդային էություն»:

Այս խոստումները և իր սխալների ու վարմունքի

քննադատությունը Չարենցին պարտավորեցնում են մինչև վերջը գիտակցել իր հանցանքը խորհրդային գրականության հանդեպ և գործնականում նոր ստեղծագործական պրոդուկցիայով ապացուցել, որ նա իսկապես դառնում է լիարժեք խորհրդային գրող:

Ժամանակն է, վերջապես, որ Չարենցը լրիվ հաշիվ տա իրեն իր ամբողջ ուղու մասին և դադարեցնի թե իր և թե գրականության հանդեպ երկերեսանիություն անելը: Նա պետք է հասկանա, որ ամենից առաջ հարկավոր է անկեղծություն» (ԳԹ, թիվ 12, 12 հունիս; ՆԷ, էջ 561-562): Չարենցը արյան հրդեհների այս խելագար շուրջպարի մեջ էր:

Ամատունին գնահատող խոսք է ասում Իսահակյանի, Վշտունու, Ջարյանի, Սիրասի, Արազիի մասին, հանդուրժում ուղեկիցներ Դեմիրճյանին, Ջորյանին, Մանվելյանին, ովքեր «վերակառուցվել» են…

Մոսկվայում գնդակահարության դատավճիռներ էին կայացվել Ջինովև-Կամենևի, Բուխարին-Ռիկովի «խմբերի» նկատմամբ, մահապատժի էին ենթարկվել բարձրաստիճան զինվորականներ: Ամատունին իր հերթին «մերկացնում» ու դատապարտում է Խանջյանի շրջանակի կուսակցական և պետական գործիչների՝ Ա. Երզնկյան, Ս. Փիրումյան, Պ. Մակինցյան, Դ. Շահվերդյան, Ա. Շահվերդով, Ս. Մարտիկյան, Ռ. Դաշտոյան, Օ. Դուրգարյան և ուրիշներ: Իբր նրանք մտադիր էին Հայաստանը առանձնացնել Անդրֆեդերացիայից ու ԽՍՀՄ-ից և ստեղծել հակախորհրդային բուրժուական պետություն:

Առանձին դաժանությամբ է խոսում իբր Խանջյանի հովանավորությամբ և Ստեփանյանի, Տեր-Սիմոնյանի ու Բակունցի ղեկավարությամբ գործող «տրոցկիստական նացիոնալիստական տեռորիստական կենտրոնի» արդեն իսկ ձերբակալված անդամների մասին, որոնք ոչ միայն վնասարար գործունեություն էին ծավալում գրական ասպարեզում, այլև նախապատրաստում էին ահաբեկություն կուսակցության ղեկավարության դեմ»:

Համագումարում ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի՝ իր դեմ ուղղված խիստ քննադատական ելույթից հետո **1937 թ. մայիսին Չարենցը բաց նամակով դիմում է Ամատունուն**՝ ապացուցելու, որ ինքն անմեղ է և արդար: Իր խոսքը բնորոշում է որպես «քաղաքական անվերապահ հաշվետվություն. <…> [իր] քաղաքական-գրական սխալներն ու սայթաքումները գիտակցելու միջոցով՝ գտնելու հետագա խորհրդային գրական-հասարակական կյանքին ու աշխատանքներին կապվելու ուղիներ ու հնարավորություններ»:

Այսպիսի մի բաց նամակ նա Կենտկոմ էր ուղարկել նաև մայիսի 26-ից առաջ, որը Ամատունին հիշատակում է և որից մեջբերում է անում իր ճառում: Չարենցը բաց նամակով Կենտկոմ դիմել է և՛ համագումարից առաջ (Առաջին հայտարարություն), և՛ հետո: Մայիսի 30-ի գրություններից մեկի սկիզբը. «Ի հավելումն Ձեզ ուղղած իմ առաջին հայտարարության <…>: Մի քանի օր առաջ Ձեզ ուղղած իմ հայտարարության կոնկրետացման և պարզաբանման կարգով՝ խնդրում եմ թույլ տալ հայտնել Ձեզ հետևյալը» (ՆԷ, էջ 559-560):

Քաղաքական այս դաժան պայքարի մեջ, չունենալով ոչ մի աջակից, Չարենցը փորձում էր պաշտպանվել, իմանալով ճշմարտությունը՝ միաժամանակ ընդունել իրեն վերապահված պաշտոնական տեսակետը և դրանով իսկ, իբր թե, կոտրել հարվածի ալիքը. «ԱՄԵՆԱԷԱԿՄՆԸ: Իմ գրական-քաղաքական ողջ կոնցեպցիայի վերագնահատության սկզբունքային խորության, քաղաքական կոնկրետ բովանդակության և որակային կշռի մասին թերևս կարելի լինի պատկերացում տալ հետևյալ ձևակերպումով.–

Ընկ. Կիրպոտինի ելույթում իմ քաղաքական և գրական սխալների և մեղքերի մասին տրված գնահատականը՝ *իր քաղաքական կոնկրետ բովանդակությամբ և վերաբերմունքային ամբողջ առումով,*– ներկայումս ես գտնում եմ ոչ միայն ճիշտ և քաղաքականապես անվիճելի,– այլև առավել, քան կարելի է պատկերցնել քաղաքական ներկա սիտուացիայում,– աններելի չափով մեղմացած, *ԱՅԼ ԴԵՊՔՈՒՄ լիբերալ վերաբերմունքի սահմանակցելու չափ բարեհոգի վերաբերմունք»:* «Հիմնական սայթաքման քար» է համարում «հասարակական մարդու կատարած յուրաքանչյուր ակտի *սեփական պատկերացման և օբյեկտիվ նշանակության միջև տարբերություն չտեսնելը*»:

Առողջական վիճակի և դրանով պայմանավորված աշխատանքային սահմանափակ հնարավորությունների պատճառաբանությամբ հուշում է, որ իր շարադրանքից պետք չէ սպասել առարկայական հետևողականություն և կատարելություն: Սա ևս գիտակցված նահանջ է, այլ կերպ՝ գրի դիվանագիտություն՝ ներկայացնելու իր «Մեղայական խարտիան»: Չարենցն ստիպված է լինում սահմանազատել իրեն Խանջյանից, ձերբակալված գրողներ Բակունցից, Տեր-Սիմոնյանից, Վանանդեցուց, Նորենցից, Թոթովենցից, որոնց հետ, 1935-ին ՀԳՄ-ից իրեն վտարելուց հետո, իրականում հարաբերություններ չուներ: Գուցե միայն Բակունցի, Մահարու մորմոքն էր հոգու մեջ, աչքի առաջ փչացած հին «թաբունի» հիշողությունը:

Բանտերում գրողներին հարցաքննում էին և նրանց անունից ցուցմունքներ կորզում մեկը մյուսի, այդ թվում՝ Չարենցի դեմ, ով, ահա, այսպիսի գրություններով փորձում էր պաշտպանվել, իսկ խորքային դատողություններով ակնարկել, որ այս ողբերգությունը մտածող անհատի, ստեղծագործող անհատականության և գաղափարական որոշակի կաղապարներով գործող պետական ջարդարար մեքենայի բախում է: Չարենցն ընկրկում է, բայցև իր մասին խոսում որպես «…իր խորհրդային բովանդակ երկրի ու ժողովրդի *մեծագույն և ամենաժողովրդական պոետի բարձր*

կոչումին ու բախտին» արժանացած հեղինակության:

Այս ծավալուն նամակը Չարենցը գրել է մի քանի տարբերակով, նյութի հետ կապված գրառումներ է արել թղթի առանձին պատառիկների վրա, փորձել իրական Չարենցին դիմակ հագցնել, շարժվել ժամանակի պահանջներին համապատասխան, իրեն դնել գիտակցական մոլորության մեջ՝ փորձելով դիմացինին համոզել, որ ինքն էլ է այն կարծիքի, թե, իբր, հեղափոխությունը շարունակվում է: Այս հոգեբանական միջավայրում Չարենցն ակամա և ստիպմամբ իրեն մեղավոր է ճանաչում, այստեղից էլ՝ «սեփական քաղաքական հանցագործության գիտակցումը», «ժողովրդի հանդեպ կատարած հանցանքի պատկերացումը», «հանցապարտությունը», «մեղսագործության էական կերպարանքը»:

Ընկրկումը, ընկճվածությունը երբեմն տեղի են տալիս, և Չարենցն ուղիղ ասում է. «Ընկեր Ամատունի,- և, ընդհանրապես,– ընկ. Կենտկոմ.– Ես իմ գրական-հասարակական ողջ էությամբ,– վերջապես իբրև հասարակ մարդ և հասարակ, շարքային քաղաքացի – *չեմ կարող լինել, եթե ուզենամ անգամ, իմ խորհրդային երկրի ու ժողովրդի դեմ...»:*

Ամատունուն հղած այս նյութերի կապակցությամբ Չարենցը տեսակցություն է խնդրել նրա հետ, որպեսզի տա ավելի մանրամասն բացատրություն: Տեսակցությունը չի կայացել: Կայացել է սառը հեռախոսազրույց: Իսկ Կենտկոմ՝ Ամատունուն հասցեագրված նյութերը քննարկման են ուղարկվել գրողների միություն՝ Աբովին, ինչն ամենևին Չարենցի սրտով չէր, որովհետև գրել էր «*միմիայն* Կենտկոմի համար»: Իսկ Կենտկոմ ասածը Ամատունին էր (ԳԱԹ, ՉՖ, 164, 165, նաև 85; ՆԷ, էջ 280-289, 539-562; ԳՄ, էջ 239):

Գրություններից մեկում իր և յուրայինների վիճակը տեսնում է ամբողջ երկրի համապատկերով. «Ոչ միայն իմ հանդեպ հարուցված մեղադրանքի, այլև վերջին ողջ շրջադարձի քաղաքական իսկական իմաստն ու նշանակությունը ինձ համար պարզվեց չափազանց դանդաղ, օր օրի – գերազանցապես շրջադարձի սկզբից մինչև օրս, և՛ *առավելագույն չափով* Խորհրդային ողջ Միության մեջ տեղի ունեցող, հետզհետե բացվող դեպքերի և փաստերի անդրդվելի տրամաբանության հարվածների ներքո»

(ՎԽ, էջ 117):

Ահա այս պայմաններում Չարենցը և նրա համախոհները ստալինյան ղեկավարության կողմից հռչակվեցին որպես նացիոնալիստ ու քողարկված դաշնակցական, հորջորջվեցին ժողովրդի թշնամի և գնդակահարվեցին, աքսորվեցին կամ մեռան բանտերում ու ճանապարհներին:

Չարենցի հուշարձանը Երևանում

Օգտագործված հապավումներ՝

ԱՉԵ – Ե. Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, 1983:
ԳԱԹ –Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Երևան:
ԳԹ – Գրական թերթ, Երևան:
ԳՄ – Ե. Չարենց, Գիրք մնացորդաց, Երևան, 2017:
ՀԱԱ – Հայաստանի ազգային արխիվ, Երևան:
ՆԷ – Ե. Չարենց, Նորահայտ էջեր, Երևան, 1996:
ՎԽ – Ե. Չարենց, Վերջին խոսք, Երևան, 2007:

Բացուինք մեր մամուլի՛ ճամբով

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Մեր ինքնամեկուսացման վերջ տալու առաջին ու լաւագոյն ճանապարհը մեր մամուլն է:

Կ'անդրադառնանք այդ ինքնամեկուսացման յոռի հետեւանքներուն, կը տեսնենք, թէ ինչպէս մեր իրաւունքները պաշտպանելու եւ աշխարհի մէջ մեր տեղը ապահովելու տեսակէտէն ետ կը մնանք, կը ձախողինք, բայց այդ կացութենէն դուրս գալու լուծումները չենք գտներ:

Այո՛, կը նշենք, թէ անհրաժեշտ է դուրս ելլել մեր խոզակէն, մասնակի՛ց ըլլալ մեր բնակած երկիրներու կեանքին եւ այլն, սակայն չենք մտածեր, թէ առաջին հերթին մենք պարտաւոր ենք ճանչնալ այդ կեանքը, հետեւիլ անոր վերիվայրումներուն, գիտնալ թերիներն ու առաւելութիւնները՝ կատարելու համար մեր ներդրումը, ունենալու համար մեր ազդեցութիւնը եւ ի հարկին զայն ուղղորդելու համար դէպի հայութեան ու Հայաստանի ի նպաստ կեցուածքներու, դիրքորոշումներու, գործնական արարքներու:

Մեր մամուլը, – խօսքս ընդհանրապէս հայ մամուլին մասին է, որ կ'ընդգրկէ նաեւ դաշնակցական մամուլը, – ազգակեդրոն է, հայակեդրոն է: Ի հարկէ այդպէս ալ ըլլալու է, առաջին հերթին, – այլապէս ինչո՞ւ կայ, – սակայն այդ բաւարար չէ:

Պէտք է բացուի՛:

Կը գրենք, թէ անհրաժեշտ է մասնակից ըլլալ երկրի մը քաղաքական եւ ոչ միայն քաղաքական կեանքին, յաջողիլ երեսփոխաններ ընտրել տեղական, շրջանային, թէ կեդրոնական մակարդակներու վրայ: Կ'ուրախանանք, երբ հայորդիներ անուն կը վաստկին գիտական, մշակութային, թէ մարզական ոլորտներու մէջ: Սակայն չենք անդրադառնար, թէ այդ իրագործումները պատահական ճիգերու արդիւնք չեն ըլլար: Յաճախ անհատական ճիգերով ու մեծ դժուարութիւններով, ի գին մեծ զոհողութիւններու կ'իրականան, նոյնիսկ ի գին ենթականերուն հայութենէն ու հայ կեանքէն ալ հեռացման: Մինչդեռ, եթէ ըլլային հաւաքական ճիգերու ճամբով, ծրագրուած ձեւով, շատ աւելի արագ ու շատ աւելի տարածուն կ'ըլլային եւ աւելի կը նպաստէին նաեւ հայութեան:

Այդ հաւաքական ճիգը մշակելու աշխատանքին մէջ է, ահա, որ մամուլը կրնայ դերակատար ըլլալ՝ չմնալով միայն հայակեդրոն:

ԺԹ դարու երկրորդ կէսէն սկսեալ մեր զարթօնքը տեղի չէր ունենար առանց հայ մամուլի ներգործութեան: Իսկ այդ ներգործութիւնը ի՞նչ էր, եթէ ոչ ժամանակի յառաջդիմական գաղափարներու ներարկումը հայութեան՝ զայն ձերբազատելու համար դարերու զարգացուցած ստրկամտութեան ճիրաններէն:

Այսօր ալ ի սփիւռս աշխարհի, թէ ի Հայաստան, – եւ Հայաստան ըսելով՝ հասկնանք մեր բոլոր հայապատկան հողերը, – մեր հասարակութիւնը նոյնպէս ենթակայ է նոր ժամանակներու ստրկացման ճնշումներուն՝ անձնակեդրոն դառնալու, նիւթապաշտ ըլլալու, յղբացած ապրելու, որոնց դժուար կարենանք ընդդիմանալ առանց հասկնալու, թէ ի՞նչ կը կատարուի մեր շուրջ, ուրիշներ ի՞նչ կ'ընեն այդ ուղղութեամբ:

Ճի՛շտ այդ հասկացողութիւնն է, որ պիտի մշակէ մեր մամուլը՝ նայած իր տարածային հանգամանքին:

Օրինակ՝ ի՞նչ կը կատարուի տեղ մը փոքրամասնութիւններու իրաւունքներուն ի պաշտպանութիւն լեզուական, ուսումնական, առողջապահական, բնակութեան, երթեւեկի եւ այլազան մարզերու մէջ: Կամ կիներու իրաւունքներու տեսա-

կէտէն: Ինչ քայլեր կ՚առնուին բանուորներու ընկերային-տնտեսական իրավիճակը բարելաւելու համար: Ինչ կը կատարեն բնութեան պահպանման ի խնդիր: Ինչպէ՞ս կը հաղորդակցին դրացի կամ ոչ-դրացի երկիրներ քաղաքական, տնտեսական, մշակութային, մինչեւ իսկ ռազմական առումով: Գաղափարական ի՞նչ խմորումներ տեղի կ՚ունենան երկրին մէջ, տարածաշրջանին մէջ, թէ միջազգային գետնի վրայ: Այդ գաղափարները ուրկէ՞ կը ծագին, ինչպէ՞ս կը կիրարկուին, ինչպէ՞ս կը շահագործուին: Ինչ ուղղութիւններով կը զարգանայ արուեստը: Ինչ նուաճումներ կ՚արձանագրէ գիտութիւնը: Ինչ յաղթանակներ ձեռք կը ձգուին մարզական աշխարհին մէջ: Եւ այլն, եւ այլն, եւ այլն:

Կը հետեւի՞նք այս բոլորին: Կ՚երգենք «...կամաւոր բանակ...»: Ունի՞նք այդ կամաւոր բանակը, որ հետեւի, արձանագրէ, արխիւագրէ, հակազդէ: Մամուլով, թէ այլապէս:

Այո՛, այս բոլորը իրենց մնայուն տեղը ունենալու են հայ մամուլին մէջ՝ մե՛ր փորձագէտներուն, մասնագէտներուն վերլուծութիւններով ու այլոց ալ վերլուծութիւններու թարգմանութիւններով: Մանաւանդ լուծումներու առաջադրութեամբ: Այն ուրիշ, թէ այդ տեսակէտէն աղքատիկ ենք նոյնիսկ հայ կեանքի խնդիրներու պարագային, բայց այդ ալ քննարկման ուրիշ նիւթ է: Մնայուն տեղը՝ բանաւոր, թէ գրաւոր, տպագիր, թէ առցանց մամուլին մէջ եւ այլազան հարթակներու վրայ: Տակաւին չեմ նշեր մեր ժողովներու դաստիարակչական յայտագրերը, մեր հրապարակային բանախօսութիւնները, որոնք նոյնպէս, ձեւով մը հասարակութեան զարգացման հարթակներն են: Հայերէն ու տեղական լեզուներով: Գաղութէգաղութ փոխանակումներով: Առաւելագոյն տարածումով:

Այն ատեն տեսնենք, թէ մեզի կարեւորութիւն կ՚ընծայե՞ն, թէ՞ ոչ, մեր խօսքը տեղ կը հասնի՞, թէ՞ ոչ:

Մանաւանդ մեր երիտասարդութիւնն ալ կը կարդա՞յ, կ՚ընկալէ՞ մեր խօսքը, թէ՞ ոչ...:

Ռափայել Պատկանյան

Վարդապետարան Հայաստանի ազատության (հատվածաբար)

Հարց. Ո՞վ պետք է ազատի Հայաստանը օտարների ձեռքից:

Պատասխան. Ինքը՝ հայ ազգը պիտի ազատի Հայաստանը օտարների ձեռքից:

Հ. Մի՞թե կարող է Հայաստանը երբևիցե հայերի սեփականությունը դառնալ:

Պ. Այո՛, կարո՛ղ է. անշուշտ կդառնա նա հայերի սեփականությունը, եթե բոլոր հայերս՝ այր ու կին, հարուստ ու աղքատ, տարեց ու պատանի, այնպես բաղձանք ու ձգտենք Հայաստանի ազատությունը, ինչպես քաղցածն է ձգտում հացին ու ծարավածը՝ ջրին:

Հ. Ո՞ր երկիրն է կոչվում Հայաստան:

Պ. Հայաստան է կոչվում այն երկիրը, որը շրջապատում է Սևան, Վան և Ուրմիա լճերը, իսկ բոլորով միասին՝ Մասիսի լեռները:

Հ. Ո՞վ է իսկական հայը:

Պ. Իսկական հայը նա է, ով անկեղծ բաղձանք ունի և նպաստում է Հայաստանի անկախությանը:

Հ. Առանց վտանգի ի՞նչ ազգասիրական գործեր կարող է կատարել ամեն մի հայ մարդ:

Պ. Իր անձը վտանգի չենթարկելով՝ ամեն հայ մարդ կարող է և պարտավոր է այս գործերը կատարել.

1) Հայաստանի մեջ ունենալ (սա ամենագլխավորն է) սեփական մեծ կամ փոքր հողակտոր,
2) հայ ոգով դաստիարակել զավակներին,
3) սովորեցնել նրանց զենքի գործածություն,
4) չամուսնանալ օտարի հետ:

Հ. Որո՞նք են հայկական առաքինությունները:

Պ. Ամենագլխավոր հայկական առաքինությունն է.

1) տնով-տեղով գաղթել դեպի Հայաստան,
2) իր բոլոր ուժերը կիրառել, հորդորել իր ծանոթ հայերին՝ վերադառնալու Հայաստան,
3) համոզել և օգնել ամեն մի հայի Հայաստանի մեջ սեփական անշարժ գույք և հող գնելու,
4) Ուժ ու եռանդ ներդնել Հայաստանում արվեստաբանական ու հողագործական դպրոցներ հիմնադրելու:

Հ. Որո՞նք են հայկական մոլորությունները:

Պ. Ամենագլխավոր ու ազգակործան հայկական մոլորությունն է.

1) աշխարհաքաղաքացիություն,
2) պանդխտություն,
3) անձնական շահի համար տարաբնույթ խարդախություններ, որոնցով անարգվում է հայ ազգի անունը,
4) շահասիրական ազգասիրություն (կեղծ ազգասիրություն),
5) հայ մեծավորների դեմ ըմբոստություն (դավաճանություն, մատնություն),
6) օտարի հետ ամուսնություն:

Հ. Ո՞ր խոսքերն է պետք դուրս նետել հայոց լեզվից:

Պ. Հայոց լեզվից պետք է առմիշտ դուրս նետել վիատեցնող, հուսահատական, ազգի վարկը ստորացնող, խորամանկություն (աչքակապություն) սերմանող խոսքերը, առածները, խրատները և խորհուրդները.

Հ. Ո՞րն է հայի նշանաբանը:

Պ. Հայի նշանաբանը այս երեք բառերն են՝ «ազատություն կամ մահ»:

Հ. Ո՞րն է ավելի արյան ու փողի զոհ պահանջում հայերից՝ թշնամու հետ պատերազմը, թե՞ ներկայիս խաղաղ ստրկական վիճակը:

Պ. Այն ստոր, արտասվելի, անընդունելի վիճակը, որի մեջ են ներկայում հայերը, ավելի արյան և փողի (նյութական) զոհ է պահանջում հայերից, քան թե դեմ առ դեմ պատերազմը սինլքոր թաթարների, քրդերի ու չերքեզների հետ:

Հ. Որո՞նք պիտի լինեն հայի ազգային հատկանիշները:

Պ. Հայի ազգային հատկանիշները պիտի լինեն հայոց լեզուն և Հայաստանը ազատագրված տեսնելու ծարավը:

Հ. Ո՞րն է հայ ազգի կրոնը:

Պ. Հայի ազգային կրոնը հաստատուն հավատն է, որ Հայաստանը պիտի ազատագրվի օտարի լծից: Ով այս բանին հավատում է, նա է ուղղափառ հայադավանը:

Հ. Ճշմարի՞տ է, երբ ասում են, թե ազգը ստրկությունից ազատելու համար մեծամեծ վտանգների ենթարկվել ու ահագին փող վատնել է պետք:

Պ. Այո՛, շատ ճիշտ է: Եթե ազատողները երկու-երեք հոգի լինեն, վտանգը շատ մեծ է ու կորուստն՝ անխուսափելի, զոհերն էլ՝ մարդկային ուժից վեր, բայց եթե ամբողջ ազգը մասնակցի, այն ժամանակ և՛ վտանգը, և՛ զոհողությունն այն աստիճան կթեթևանան, որ ամեն մի անհատի համար համարյա անզգալի կթվան:

Հ. Ո՞վ կամ ի՞նչը պետք է միավորի հայերին այդ մեծ գործի համար:

Պ. Մոտալուտ կորստի ընդհանուր վտանգը: Դրա համար ամեն մի հայի վրա սուրբ պարտք կա՝ միմյանց պատմելու և հասկացնելու, որ եթե իրենք վաղորոք չազատագրեն Հայաստանը, օտար ազգերը կբնաջնջեն հայոց լեզուն ու հայկական եկեղեցին, և այնուհետ հայն ինքնըստինքյան կանհետանա աշխարհի երեսից. այն ժամանակ ամեն գերդաստանի հայ կիմանա, որ լավ է նրա մի որդին ծառայի իր ազգին, քան թե իր ամբողջ ընտանիքը ոչնչանա ու լավ է իր հարստության մի փոքրիկ մասը ընծայվի իր ազգի օգտին, քան թե իր բոլոր գանձը օտարի սեփականությունը դառնան:

Հ. Հայերի ոտքի ելնելը բռնության դեմ իրավացի գործ է, թե՞ ապօրինի:

Պ. Հայերի ոտքի ելնելը Հայաստանի ազատության համար իրավացի գործ է թե՛ քրիստոնեական և թե՛ քաղաքական օրենքների տեսանկյունից ու աշխարհի բոլոր լուսավորյալ ու ազնիվ մարդկանց գովասանքին արժանի:

Հ. Ուրեմն հայերն իրավունք ունե՞ն զենքի ուժով ազատել իրենց հայրենիքը:

Պ. Հայերը Հայաստանը զենքի ուժով ազատելու համար ոչ միայն իրավունք ունեն, այլև ամեն մի հայի վրա այդ սխրալի գործը կատարելու սուրբ պարտք կա:

Հ. Ե՞րբ օտարազգիները կդադարեն, ինչպես որ այժմ է, արհամարհել, ատել ու հալածել հայերին և ե՞րբ կսկսեն, հակառակ դրա, հարգել նրանց:

Պ. Երբ հայերը ազատվեն օտարի լծից, իսկ առանց դրա՝ մինչև իրենց բնաջնջվելը մնալու են արհամարհված, ատելի, անվանարկված, հալածված ու գարշելի արարածներ օտարի աչքում, ավելի ստոր, քան թե ջհուդները, ցիգանները, փարիսեցիները:

1988-Ի ՓԵՏՐՎԱՐ - 2024-Ի ՓԵՏՐՎԱՐ

ԴՐՕՇԱԿ